

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՀՀ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
1.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Տավուշի և Գեղարքունիքի սահմանապահ գյուղերի մանկավարժների աշխատավարձի կրկնակի բարձրացում:	Առաջարկը չի ընդունվել, քանի որ ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 1503 – Ն որոշման համաձայն՝ պետական հանրակրթական դպրոցների ֆինանսավորման նոր բանաձևով նախատեսվում է ուսուցիչների աշխատավարձերի համահարթեցման գործընթաց, ինչը ենթադրում է որոշակի շեմից ցածր աշխատավարձի բարձրացում: Բացի այդ, ՀՀ կառավարության 2015 հոկտեմբերի 22-ի N 1222-Ն որոշմամբ բարձր լեռնային վայրերում աշխատելու համար տրվում է լրավճար:
2.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Բարձր և գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողների կրթաթոշակների բարձրացում:	Չի ընդունվել, հիմնավորումները ներկայացվել են Բարգավաճ Հայաստան խմբակցության կողմից ներկայացված նույնաբովանդակ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից տրված եզրակացությամբ:
3.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Աջակցություն ցուցաբերել սահմանապահ և սահմանամերձ գյուղերի քաղաքացիների համար մատչելի ոչ քաղաքային կենտրոններում սպորտդպրոցների գործունեությանը:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
4.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Չինարի համայնքում հիմնել սպորտդպրոց:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
5.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Մարզային բուժհաստատությունների տեխնիկական հագեցվածության ապահովում:	Առողջապահության նախարարությունն ընթացիկ տարում առկա ավելի հավաքագրված հարկային եկամուտների հաշվին (ՀՀ կառավարության 27.06.2019թ. N 783-Ն որոշմամբ ՀՀ 2019թ. պետական բյուջեով հատկացված 2,076.8 հազար դրամի) աննախադեպ հնարավորություն է ստացել նախաձեռնել Երևան քաղաքի և մարզային առողջապահական կազմակերպությունների վերազինման և վերակառուցման աշխատանքներ, ինչը հետևողական շարունակվելու է հնարավորությունների սահմաններում:
6.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Համայնքային բուժամբուլատորիաների բուժանձնակազմի մասնագիտական վերապատրաստման պետական աջակցության ավելացում:	«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրի «Հետբուհական մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում բուհական հաստատություններին» միջոցառման շրջանակներում «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամում իրականացվում է 1200 ավագ և միջին բուժաշխատողների համար կազմակերպված կատարելագործման գործընթաց, այդ թվում նաև համայնքային բուժաշխատողների համար:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
7.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Պետականացնել «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի «Բերդ» արգելոցի հարակից հողատարածքը, իրականացնել մաքրման աշխատանքներ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
8.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Միջոցներ հատկացնել միջազգային հայտնի և մեծ լսարան ունեցող լրատվամիջոցներով Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ կատարելու առավելությունների և հնարավորությունների վերաբերյալ գովազդային հոլովակների պատրաստման և ցուցադրման համար:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
9.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Միջոցներ հատկացնել բուհերին՝ անհրաժեշտ գրականության տպագրման և գրադարանային ֆոնդի բարելավման նպատակով: Ֆինանսների բացակայության պատճառով բուհերը չեն կարողանում ուսանողներին ապահովել արդիական գրականությամբ, գրադարանային ֆոնդում առկա գրքերը հիմնականում հին են , կամ ընդհանրապես բացակայում են:	Հարցը կկանոնակարգվի «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, որով նախատեսվում է նաև բուհերին տրամադրել ինստիտուցիոնալ ֆինանսավորում՝ վերջիններիս ենթակառուցվածքների զարգացման և կրթության որակի բարելավման նպատակով: Միաժամանակ, բուհերն իրենց որակի շարունակական բարելավման շրջանակներում պարտավոր են ապահովված լինել համապատասխան գրականությամբ:
10.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան»	Միջոցներ հատկացնել աշխարհի լավագույն 10 համալսարաններ ընդունված ՀՀ քաղաքացիների կրթության մասնակի ֆինանսավորման համար:	ՀՀ 2020 թ պետական բյուջեի նախագծով Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի «Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին»

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	խմբակցություն	Միջոցների սուղ լինելու դեպքում յուրաքանչյուր տարի այս ծրագրից կարող են օգտվել սահմանափակ թվով քաղաքացիներ:	միջոցառման գծով նախատեսվել է 300 մլն դրամ:
11.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Առաջարկում ենք ավելացնել ՀՀ Ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության, Պաշտպանության նախարարության և Արտակարգ իրավիճակների նախարարության համար դեղորայքի ձեռքբերման և տրամադրման համար նախատեսված բյուջեները 5-ական մլն դրամով: Սույն առաջարկը ընդունելու դեպքում հավելյալ 5 մլն. դրամի հաշվին հնարավոր կլինի ձեռք բերել անհրաժեշտ դեղամիջոցների հավելյալ պահուստային քանակ, որը հնարավորություն կտա ապահովել նշված ծառայողներին անհրաժեշտ դեղորայքով ֆորսմաժորային իրավիճակներում:	Առաջարկությունը չի ընդունվել նկատի ունենալով, որ ՀՀ 2020թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված ֆինանսավորումը բավարարում է ՀՀ ՊՆ-ում, ՀՀ ԱԱԾ-ում, ՀՀ ՈՍ-ում և ՀՀ ԱԻՆ-ում, համապատասխան քանակի, այդ թվում նաև անհետաձգելի համարվող դեղամիջոցների ձեռքբերումը կազմակերպելու համար:
12.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Ծրագիր 1011 Անապահով սոցիալական խմբերին աջակցություն. միջոցառում 11002. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ - 2020 թ.-ի համար հատկացվել է 37.698.315.40 հազ. դրամ՝ առնավազն 10% -ով ավելացնել ֆինանսական հատկացումները:	Առաջարկությունը չի ընդունվել: Անապահով սոցիալական խմբերին տրամադրվող սոցիալական աջակցության ոլորտում իրականացվում են հայեցակարգային փոփոխություններ, որոնք հիմնված են տարբեր վերլուծությունների, ինչպես նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված ամենամյա հետազոտությունների տվյալների վրա: Ըստ այդմ, խնդրո առարկա ծրագրով նախատեսված գումարին հնարավոր կլինի անդրադառնալ մշակված մոդելի շրջանակներում, երբ հաշվարկները կկատարվեն՝ ելնելով մոդելի պարամետրերից: Միաժամանակ, հարկ է նշել, որ առաջարկության բովանդակությունից պարզ չէ՝ առաջարկվում է ընդլայնել շահառուների շրջանակը, թե՛ նպաստի չափը:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
13.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդին հատկացումները կասեցնել 1 տարով և իրականացնել բազմակողմանի ուսումնասիրություններ՝ ծրագրի արդյունավետությունը և հիմնավորվածությունը պարզելու համար:	Առաջարկությունը չի ընդունվում Կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը հաստատվել է դեռևս 2008թ.-ին, որին նախորդել են բազմաթիվ հետազոտություններ և ուսումնասիրություններ: Այս տարիների ընթացքում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդնումը ցույց է տվել իր առավելությունը և արդյունավետությունը: Կուտակային բաղադրիչի մասնակիցների թիվը կազմում է շուրջ 343 հազ. մարդ, որից 72 հազ.-ը պետական համակարգի մասնակիցներ են, 271 հազ.-ը մասնավոր համակարգի ներկայացուցիչներ են: Ընդհանուր ֆոնդերի միջին եկամտաբերությունը ստեղծման պահից կազմում է 58.6 % (1 փայի գինը ստեղծման պահին 1000 դրամից աճել է մինչև 1586 դրամ): Հատկանշական է, որ ֆոնդերի ստեղծման պահից սկսած մինչ 2019 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի գնաճը կազմել է 5.9%, ինչը նշանակում է, որ ֆոնդերը ապահովել են քաղաքացիների խնայողությունների իրական աճ: Ֆոնդերի եկամտաբերությունը 2016-ին և 2017-ին կազմել է համապատասխանաբար 13.8% և 13.6%: Ֆոնդերի եկամտաբերությունը 2019թ. սկզբից կազմել է 7.0%: 31.07.2019թ. դրությամբ կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը կազմել է 209.3 մլրդ դրամ (զուտ ակտիվներ / ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 3.5%):
14.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Երեխայի ծննդյան համար՝ ընտանեկան դրամագլխի հաշիվներում առկա ֆինանսական միջոցներն ամենամսյա հավասար գումարի չափով ամբողջությամբ վճարել շահառուներին՝ մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 31-ը:	Առաջարկությունը չի ընդունվել: Երրորդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի մի մասը վճարվում է նոր ծնված երեխայի անվամբ բացված հատուկ հաշվին (պետական աջակցության հաշիվ) մուտքագրելու միջոցով: Ընտանեկան դրամագլուխը ներդրվեց՝ նպատակ ունենալով

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>Հայաստանի Հանրապետությունում ծնելիության խթանումը և բազմազավակ ընտանիքների կյանքի պայմանների բարելավումը, ծնողների՝ իրենց երեխայի ապագայի նկատմամբ վստահության ձևավորումը, երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանիքին տրամադրվող նյութական աջակցության չափի և հասցեականության մեծացումը:</p> <p>Միանվագ տրամադրումը չի բխում ընտանեկան դրամագլխի՝ վերը նշված գաղափարաբանությունից:</p>
15.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Հրատապ մշակել Երևան քաղաք մտնող ավտոմոբիլային ճանապարհների համար նոր ենթակառուցվածքների ստեղծման համալիր ծրագիր, որի իրականացման արդյունքում էապես կլուծվի ավտոմոբիլային խցանումների առկա խնդիրները:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ քաղաքի ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
16.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Ծրագիր 1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրին 2020 թ.-ի համար հատկացվել է 12.704.576.4 հազ. դրամ, որը 2019թ.-ի 14.350.863.8 հազ. դրամի համեմատ նվազել է՝ առնավազն 30%-ով ավելացնել ֆինանսական հատկացումները:	Ներկայումս իրականացվում են ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված՝ կրթության և գիտության ոլորտի համապատասխան բաժինների դրույթներից բխող լայնամասշտաբ բարեփոխումներ: Վերանայվում է ոլորտի օրենսդրական դաշտը: Արդեն իսկ շրջանառության մեջ է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Բարձրացվող հարցերը համապատասխան լուծում կստանան իրականացվող ընդհանուր բարեփոխումների համատեքստում:
17.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	2020թ.-ի Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի մեջ ներառված, շուրջ 25,661,036,00 հազ. դրամ՝ այլ <u>ծախսեր</u> և <u>ընդհանուր բնույթի այլ ծառայություններ</u> (ընդհանուրի մեջ 5,190,905,00 հզ.դր.) տնտեսագիտական դասակարգման հոդվածներով	Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի այլ ծախսեր հոդվածում նախատեսված ծախսերը ուղղվում են ա) ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ոստիկանության և Հ արդարադատության նախարարության քրեակատարողական

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Նախատեսված ծախսերը վերանայել՝ հնարավորինս նվազեցնելու և թափանցիկությունը ապահովելու համար:	<p>Ծառայության պետական ծառայողական գաղտնիք պարունակող ծախսերի ֆինանսավորմանը, որը համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի հրապարակման ենթակա չէ:</p> <p>բ) օտարերկրյա պետությունների և կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ընթացիկ միջոցառումների գծով գումարները ևս արտացոլվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով: Գումարները նախատեսվել են խորհրդատվական ծառայությունների, Ծիգ-երի, Հիմնադրամների, ՊՈԱԿ-ների, ծրագրեր իրականացնող վարչությունների պահպանման ծախսերի նպատակով, որոնց տնտեսագիտական դասակարգման առանձին հոդվածները կարտացոլվեն «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ: Ինչ վերաբերում է ընդհանուր բնույթի այլ ծառայություններին ապա վերջինս հանդիսանում է գնումների ձեռքբերում որը ևս կարտացոլվի վերը նշված որոշման մեջ:</p>
18.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Ծրագիր 1212 Տարածքային զարգացում Միջոցառում 12003 Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին 2020 թ.-ի համար հատկացվել է 800.000.0 հազ. դրամ, որը 2019թ.-ին 928.871.2 հազ. դրամ հատկացված գումարի համեմատ նվազել է՝ առնվազն 30%-ով ավելացնել ֆինանսական հատկացումները:	Առաջարկությունը չի ընդունվել: Միջոցառման գծով 2020թ. նախատեսվել է 800.0 մլն դրամ՝ հաշվի առնելով 2015-2019թթ. պետական բյուջեով միջոցառման գծով նախատեսված գումարների (յուրաքանչյուր տարի 928.9 մլն դրամ) փաստացի կատարողականը (2015թ.՝ 574.2 մլն դրամ, 2016թ. 657.3 մլն դրամ, 2017թ.՝ 712.2 մլն դրամ, 2018թ. 709,6 մլն դրամ, իսկ 11.11.2019թ. դրությամբ՝ 642.5 մլն դրամ):
19.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան»	Նվազագույն 25.500 դրամ ծերության կենսաթոշակը բարձրացնել և հավասարեցնել 2020թ.-ի համար կանխատեսվող պարենային զամբյուղի արժեքին՝	Առաջարկությունը չի ընդունվել: ՀՀ կառավարությունը հետամուտ է նաև ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	խմբակցություն	36.000 դրամ:	<p>նպաստների (այսուհետ՝ նպաստներ) չափերի ավելացմանը: Այսպես, 2019թ. հունվարի 1-ից բարձրացան նպաստների չափերը:</p> <p>Հարկ է նշել, որ նպաստների կամ կենսաթոշակների չափերի միակողմանի բարձրացումը սոցիալական արդարության տեսանկյունից ընդունելի լուծում չէ:</p> <p>Կենսաթոշակային ապահովության ոլորտում վարվող քաղաքականության գաղափարաբանությունից ելնելով, նպատակահարմար է կենսաթոշակների (աշխատանքային, գինվորական) և նպաստների չափերը սահմանել որոշակի փոխհարաբերակցության պահպանմամբ:</p> <p>Հարկ է նշել նաև, որ շուրջ 70000 նպաստառուների նպաստը 10500 դրամով (36000-25500) ավելացնելու համար կպահանջի տարեկան շուրջ 9 մլրդ դրամ (70922x10500 դրամx12 ամիս), առանց վճարման ծառայության գումարի, իսկ աշխատանքային միջին կենսաթոշակը 21184 դրամով (65000-43816) ավելացնելու համար՝ շուրջ 120 մլրդ դրամ (468761x21184 դրամx12ամիս), առանց վճարման ծառայության գումարի, ինչը նախատեսել հնարավոր չէ:</p>
20.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Ծերության կենսաթոշակները հավասարեցնել նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին՝ 65.000 դրամ:	Տես 19-րդ կետի առաջարկության հիմնավորումը:
21.	ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	Բարձրացնել քաղցկեղով հիվանդ շահառուներին պետական պատվերով հատկացվող գումարների չափը:	<p>ՀՀ կառավարության ծրագրով առողջապահության ոլորտի զարգացման ապահովումն ուղղությամբ գերակա գործոն դիտարկվում նաև ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և հայտնաբերման ուղղությունների զարգացումը:</p> <p>2019թ. շրջանառության մեջ է դրվել «Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>Նախագիծը, իսկ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով 1202 ծրագրի 11004 «Ուռուցքաբանական և արդյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման գծով նախատեսելով 3,420.1 մլն դրամ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված 1,917.3 մլն դրամի դիմաց, որը կլինի շարունակական:</p>
22.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն</p>	<p>Պետական պատվերով իրականացվող առողջապահական ծրագրերից օգտվող շահառուների շրջանակն ավելացնել:</p>	<p>Առողջապահության նախարարությունը ներկա պահին նախաձեռնել է «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու գործընթաց, ըստ որի շուրջ 500,000 շահառուի՝ 7-18 տարեկան երեխաների պետական պատվերի շրջանակներում մատուցվելու են արտահիվանդանոցային բժշկական օգնության ծառայություններ՝ հիվանդանոցներում և նեղ մասնագիտացված կենտրոններում:</p>
23.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն</p>	<p>Պաշտպանության նախարարությանը հատկացվող ֆինանսական միջոցներն ավելացնել առնվազն 10% - ով:</p>	<p>ՀՀ պաշտպանության նախարարության ծախսերը նախատեսվում են յուրաքանչյուր տարվա ՀՆԱ-ի 4%-ի (այդ թվում նաև 2020թ-ին) չափով, իսկ ծախսերի նախատեսման ծրագրային ուղղությունների առաջնահերթությունները սահմանվում են ըստ գերակայությունների:</p> <p>Միաժամանակ, 2020թ. պետական բյուջեի նախագծով (առանց ՌԴ կողմից տրամադրվող պետական վարկային ծրագրի) ՀՀ պաշտպանության նախարարությանը նախատեսվող հատկացումները 2019թ-ի նախատեսված բյուջետային հատկացումների նկատմամբ աճել են շուրջ 10,4%-ով:</p>
24.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ</p>	<p>Տարիներ շարունակ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Խաղաղ Դոնի 19, Վարդաշեն 6-րդ</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Վահե Էնֆիաջյան Իվետա Տոնոյան	<p>փողոցի 66ա/1 և Վարդաշեն 6-րդ փողոց, 68ա հասցեների բնակիչները ստիպված են եղել ապրելու վթարային և անմխիթար վիճակում գտնվող, անկանխատեսելի վտանգներով լի շենքերում: Խնդրին լուծում տալու և փլուզման հնարավոր վտանգը կանխելու նպատակով վերջիններս բազմիցս դիմել են պատկան մարմինների, սակայն ապարդյուն:</p> <p>Կիսելով բնակիչների արդարացի մտահոգությունները, ուսումնասիրելով սեյսմիկ եզրակացությունները, խնդիրը բազմիցս բարձրացրել ենք: Սակայն Երևանի քաղաքապետարանը նախկինում դրսևորել է կայուն անգործություն և խնդրին որևէ լուծում չի տրվել: Մինչդեռ ակնհայտ է, որ առնվազն մատնանշված հասցեներում գտնվող շենքերը պետք է լինեն առաջնային ուշադրության կենտրոնում, վթարայնության հիմնավորմամբ ընդգրկվեն 2020 թվականի քանդման ենթակա շենքերի ցանկում՝ հնարավոր փլուզման արդյունքում անդառնալի հետևանքներից խուսափելու համար:</p> <p>Հարկ ենք համարում նշել, որ Երևանի քաղաքապետարանի կողմից նախկինում բազմիցս նշվել է, որ Էրեբունի վարչական շրջանի մի շարք շենքեր սեյսմակայունության տեսանկյունից ճանաչվել են 4-րդ կարգի վթարային շենքեր և ենթակա են քանդման: Հարկ ենք համարում նշել, որ այս խնդիրը քննարկվել է նաև «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումների ժամանակ և ներկայացվել է նաև առաջարկ՝ վերոգրյալ շենքերի քանդման և բնակիչներին վերաբնակեցման</p>	մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>համար անհրաժեշտ հիմնական միջոցներ տրամադրելու ուղղությամբ, սակայն խնդիրը չի լուծվել:</p> <p>Հիմք ընդունելով վերոգրյալը, առաջարկում ենք «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսել անհրաժեշտ դրամական միջոցներ՝ Էրեբունի վարչական շրջանի Խաղաղ Դոնի 19, Վարդաշեն 6-րդ փողոցի 66ա/1 և Վարդաշեն 6-րդ փողոց, 68ա հասցեների բնակիչներին վերաբնակեցնելու համար:</p>	
25.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վահե Էնֆիաջյան Իվետա Տոնոյան	<p>Կառավարության կողմից ներկայացված ծրագրում իր արտացոլումն է գտել կրթության քաջալերումը՝ որպես մարդկային ներուժի զարգացման բաղադրիչ: Ակնհայտ է, որ կրթության քաջալերման գործընթացում էական նշանակություն ունի նաև ֆինանսական խրախուսումը, ինչն արտահայտվում է, օրինակ, պետության կողմից տրամադրվող կրթաթոշակների տեսքով:</p> <p>Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգում պարբերաբար փոփոխություններ են կատարվել, բայց մինչ օրս որևէ փոփոխություն չի կատարվել դրանց չափի հետ կապված: Առ այսօր բակալավրիատում սովորող և տվյալ կուրսի մակարդակով բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների կրթաթոշակը կազմում է 5.000 դրամ, իսկ գերազանց առաջադիմություն ունեցողներինը՝ 6.050 դրամ: Միայն բակալավրիատի ավարտական կուրսերում է, որ սովորական կրթաթոշակի չափը կազմում է 5.200 դրամ, իսկ գերազանցիկներինը՝ 6.300 դրամ:</p>	Տես 16-րդ կետում նշված դիրքորոշումը:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Մագիստրատուրայում ունենք հետևյալ պատկերը՝ բարձր առաջադիմությամբ ուսանողները ստանում են 5.500 դրամ, իսկ գերազանց սովորողները՝ 6.300 դրամ:</p> <p>Այսինքն, բակալավրիատում և մագիստրատուրայում կրթաթոշակների չափն ուղիղ 20 տարի է՝ 1999թ. առ այսօր, չի փոխվել: Համեմատության համար միայն նշենք, որ 1999թ. նվազագույն աշխատավարձը կազմում էր 5.000 ՀՀ դրամ, 2020թ. այն կկազմի 68.000 ՀՀ դրամ, մինչդեռ կրթաթոշակի չափի հետ կապված որևէ փոփոխություն տեղի չի ունեցել:</p> <p>Կարծում ենք, որ բարձրացված առավել քան կարևոր է և կրթաթոշակների բարձրացման հարցը կրում է հրատապ բնույթ:</p> <p>Հիմք ընդունելով վերոգրյալը, առաջարկում ենք «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսել անհրաժեշտ դրամական միջոցներ ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների չափը 2020թվականին բարձրացնելու նպատակով:</p>	
26.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյան	Միջոցներ հատկացնել՝ Սյունիքի մարզի Կապանի պետական բժշկական քոլեջի անմխիթար վիճակում գտնվող 2 դահլիճների վերանորոգման համար:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
27.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյան	Անհրաժեշտ է սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հատկացնել ֆինանսական միջոցներ՝ համայնքներում գրադարանները ժամանակակից մշակութային վայրերի	Առաջարկությանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինան-

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		վերափոխելու համար, ինչպես նաև գրադարանավարների դասընթացներ, տեխնիկա, ինտերնետ ու գրքեր: Գրադարանները չեն ստացել միայն Հայաստանում այս տարիներին հրատարակված առնվազն 30 000 անուն գիրք: Արտասահմանյան գրքերի պակասն անհաշվելի է:	սական միջոցների առկայության դեպքում:
28.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արման Աբովյան	Ֆինանսավորել «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ հեռուստախաղը, այդ նպատակով նախատեսել առնվազն 17 մլն. ՀՀ դրամ: Հիմնավորում՝ 2010թ.-ից առ այսօր կազմակերպվում և հեռարձակվում է «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ հեռուստախաղը, որը միտված է մասնակիցների, ինչպես նաև հեռուստադիտողների ինտելեկտուալ կարողությունների զարգացմանը: Հատկանշական է նաև, որ հեռուստախաղը սիրված է բազմահազար ՀՀ քաղաքացիների կողմից, ինչը ապացուցվում է քաղաքացիներից հաղորդաշարի գիտակներին ուղղվող հազարավոր հարցերի առկայությամբ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
29.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սերգեյ Բագրատյան	Արտաբույնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման համար հատկացնել 120 միլիոն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
30.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սերգեյ Բագրատյան	Եղեգնաձոր քաղաքի Նորավան թաղամասի կոյուղագծի կառուցման համար հատկացնել 250 միլիոն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
31.	ՀՀ Ազգային ժողովի	Վայք-Արին ավտոճանապարհի հիմնանորոգում (7կմ)	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	պատգամավոր Սերգեյ Բագրատյան		անդրադառնալ հետազայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
32.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Նարիա Ջոհրաբյան Շաքե Իսայան	Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածով առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1060 ծրագրում նախատեսել լրացուցիչ գումար՝ 9,994,706 ինը մլն., ինը հարյուր իննսունչորս հազար, յոթ հարյուր վեց դրամ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում լրացուցիչ երկու հաստիք ավելացնելու համար: Կից ներկայացվում է նախատեսվող ավելացման ծախսերի հաշվարկը:	Առաջարկը չի ընդունվել իրավական հիմքի բացակայության պատճառով: ՖՆ հաշվարկների համաձայն Պաշտպանի աշխատակազմը 2 նոր հաստիքով համալրելու համար բյուջեից կպահանջվի շուրջ 10.0 մլն դրամ տարեկան:
33.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Աղաբաբյան	Քաղաք Արմավիրի Տիգրան Մեծ ռազմամարզական հատուկ վարժարանի շարահրապարակի և երկու մասնաշենքերի տանիքների նորոգում: Նշված վարժարանը 1961թ-ից չի հիմնանորոգվել: Շարահրապարակի նորոգում՝ 30 միլիոն դրամ: Երկու մասնաշենքերի տանիքի նորոգում՝ 20 միլիոն դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
34.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Աղաբաբյան	Արմավիր M 5 միջպետական մայրուղու՝ Ակնալիճ-Արմավիր հատվածի ասվալտապատում:	Աշխատանքները կիրականացվեն 2020թ. պետական բյուջեով նախատեսված հատկացումների շրջանակներում:
35.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արայիկ Աղաբաբյան	Քաղաք Արմավիր, թիվ 11 մանկապարտեզի երկրորդ մասնաշենքի տանիքի հիմնանորոգում՝ 20 միլիոն դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետազայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
36.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Վարդանյան	Միջոցներ հատկացնել Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում, մասնավորապես Քանաքեռի հատվածում նախկինում գործող պոլիկլինիկան վերաբացելու նպատակով:	Հարցը կքննարկվի առաջիկա տարիների բյուջետային գործընթացի շրջանակներում:
37.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Մադաթյան	2020թ.-ի պետական բյուջեում հատկացնել ֆինանսական միջոցներ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ծովագյուղի կուլտուրայի պալատի շենքի ներքին կապիտալ վերանորոգման համար:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
38.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքունյան	Մեծամորի ատոմային էլեկտրակայանի 270 մլն. ԱՄՆ դոլարի վարկի և 30 մլն. ԱՄՆ դոլարի դրամաշնորհի չիրացված 103 մլն. ԱՄՆ դոլարի իրացման հավանական երկարաձգումը կառաջացնի շուրջ 6 մլրդ. դրամի պակասուրդ էլեկտրաէներգետիկական համակարգում: Ուստի, առաջարկում եմ պետական բյուջեի մասին օրենքի նախագծում ներառել բյուջետային վարկ 3 մլրդ. դրամի չափով:	Հարցին հնարավոր է անդրադառնալ տվյալ ոլորտում համապատասխան պետական լիազոր մարմնի կողմից հիմնավորված առաջարկի առկայության պարագայում:
39.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքունյան	Հաշվի առնելով այն, որ անցած 3 տարիների ընթացքում ՀՀ-ԲԴ առևտրաշրջանառությունն աճել է մոտ 2.5 անգամ՝ 800 մլն. ԱՄՆ դոլարից հասնելով շուրջ 2 մլրդ. ԱՄՆ դոլարի, իսկ հաջորդ տարի էլ ավելի է աճելու, առաջարկում եմ նախատեսել ֆինանսական միջոցներ՝ շուրջ 2.5 մլն. ԱՄՆ դոլարի չափով՝ Փոթի-Նովոռոսիսկ լաստանավի վարձակալության համար:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
40.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքունյան	Հաշվի առնելով այն, որ անցած 3 տարիների ընթացքում ՀՀ-ԲԴ առևտրաշրջանառությունն աճել է մոտ 2.5 անգամ՝ 800 մլն. ԱՄՆ դոլարից հասնելով շուրջ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		2 մլրդ. ԱՄՆ դոլարի, իսկ հաջորդ տարի էլ ավելի է աճելու, առաջարկում ենք նախատեսել միջոցներ Փոթիում նավահանգստային տերմինալի կառուցման համար:	տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
41.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	ԽՍՀՄ խնայբանկի ավանդատուների փոխհատուցման գումարը դարձնել 2.5 մլրդ. դրամ:	Ծրագրի շահառուների շրջանակի ընդլայնման, հետևաբար՝ նաև ծրագրով նախատեսված գումարի չափի փոփոխության հարցը հնարավոր է անդրադառնալ առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում՝ համապատասխան պետական լիազոր մարմնի կողմից հիմնավորված հայտի առկայության պարագայում:
42.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	Ստեղծել ԵԱՏՄ մշտական գործող էքսպո-ցուցահանդեսներ արտաքին տնտեսական գործունեության սպասարկման համար՝ հատկացնելով բյուջեում 300 մլն. դրամ:	2020 թվականի պետական բյուջեի նախագծով «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ» ծրագրով (N 1165, միջոցառում 11002) նախատեսվում է հատկացնել 528.0 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ապահովել Հայաստանի տնտեսվարողների մասնակցությունը կազմակերպվող զանազան ցուցահանդեսներին այդ թվում ԵԱՏՄ տարածքում (Պրոդէքսպո, Մոսշուգ, Սի Փի Էմ Պրեմիում Կոլլեքշն, Ջունվեքս և այլն), որոնց համար նախատեսնվում է հատկացնել ընդհանուր առմամբ շուրջ 337.0 մլն դրամ: Միաժամանակ ցուցահանդեսներին մասնակցությունը որոշվում է համապատասխան ոլորտների տնտեսվարողների հետ քննարկումների արդյունքներով: Այնուամենայնիվ եթե առաջարկը վերաբերվում է ՀՀ-ում մշտական գործող էքսպո-ցուցահանդեսների ստեղծմանը, ապա առաջարկը ունի լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն, այդ թվում նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և ԵԱՏՄ անդամ պետությունների հետ:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
43.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	ՓՄՁ աջակցության հատկացումն ավելացնել 30 տոկոսով:	Առաջարկը ընդունելի չէ նկատի ունենալով որ միջոցառումը նախատեսում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի անձնակազմի և փորձագետների վարձատրության համար (ներառյալ ԱԱՀ) և միջոցների ավելացումը ընդամենը կհանգեցի պահպանման ծախսերի ավելացմանը (ուղղակի ուղղված չէ ՓՄՁ աջակցման միջոցառումներին):
44.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	Բյուջեում կապիտալ ծախսերն ավելացնել 20 տոկոսով:	Կառավարությունը 2020 թվականի համար ծրագրավորել է երկարաժամկետ տնտեսական աճ ստեղծող հարկաբյուջետային քաղաքականություն, որը կիրականացնի կապիտալ ծախսերի մասնաբաժնի էական մեծացմամբ: 2020 թվականի պետական բյուջեի նախագծի պետական բյուջեի ընդամենը ծախսեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավումը(շուրջ 2 տոկոսային կետ) հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի բարելավմամբ, որը 2019թվականի սպասվող ցուցանիշի նկատմամբ բարելավվում է 2.2 տոկոսային կետով, իսկ 2019թվականի ծրագրավորված պետական բյուջեի ցուցանիշի նկատմամբ 1.7 տոկոսային կետով: Հարկ ենք համարում նշել նաև, որ 2010-2018թթ կապիտալ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը միջինում կազմել է 3.6 տոկոս: Հետևաբար 2020 թվականի պետական բյուջեի նախագծի ընդամենը ծախսերում ծրագրավորված 2020 թվականի համար կապիտալ ծախսեր/ՀՆԱ 5.0 տոկոս ցուցանիշը արդեն իսկ բարձր թիրախ է համարվում՝ նախատեսելով ենթակառուցվածքներում պետական ներդրումների մակարդակի էական բարելավում:
45.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	Ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 23.3 տոկոսից նախատեսել 24.3 տոկոս:	Նախ, 2020 թվականին Ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը նախատեսվել է ոչ թե 23.3 այլ 23.6 %: 2020թ. ակնկալվում է ներդրումների 6.2 աճ՝ իրական արտահայտությամբ, ինչն արդեն իսկ առաջանցիկ է տնտեսական աճի 4.9% ցուցանիշից: Անվանական

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			արտահայտությամբ ներդրումների աճը նախորդ տարվա համեմատ կկազմի 9.4%: Նշված ցուցանիշները ՀՀ ՖՆ կողմից իրականացված կանխատեսումների արդյունք են, որոնցում հաշվի են առնվել ներդրումների պատմական շարքերը, դրանց ընթացիկ իրավիճակը, ինչպես նաև դրանց վրա ազդող գործոնները:
46.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան	Արդյունաբերության աճը նախատեսել 6 տոկոս:	Բյուջետային տարվա կանխատեսումներն իրականացնելիս, կարևորը, նախ տնտեսական աճի կանխատեսումն է, որը հորիզոնի վերջում մոտենում է իր պոտենցիալին: Այնուհետև ճյուղերի զարգացումները կանխատեսվում են՝ հիմք ընդունելով տնտեսական աճի կանխատեսված ցուցանիշը: Ճյուղային կանխատեսումներ կատարելիս հաշվի են առնվում ինչպես ՀՆԱ-ի, այնպես էլ ճյուղերի պատմական շարքերը, դրանց ընթացիկ իրավիճակը, ինչպես նաև աճի վրա ազդող ներքին և արտաքին գործոնները: Այս տրամաբանությամբ իրականացված կանխատեսումների արդյունքում արդյունաբերության աճը գնահատվել է 5%:
47.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Արարատի մարզի Արևաբույր համայնքի դպրոցը գտնվում է անմխիթար վիճակում և զուրկ է կենցաղային տարրական պայմաններից: Այն վաղուց պիտանի չէ որպես կրթօջախ ծառայելուն, և անհարժեշտ է կառուցել նոր դպրոց: Նշյալ դպրոցում սովորում է 180 երեխա, ովքեր այլընտրանք չունեն, քանի որ տարածում այլ համապատասխան հաստատություն չկա: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Արևաբույր համայնքի նոր դպրոցի կառուցումը, որը կարժենա մոտ 480 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
48.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան»	Արարատի մարզի Արարատ քաղաքում ավարտին հասցնել 30 տարվա կիսաքանդ շենքը: Արարատ քաղաքի այն բանկիչները, ովքեր մնացել են առանց	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	խմբակցություն	բնակարանների, կարող են ապահովվել բնակարանով այդ շենքում: Մոտ 5 տարի առաջ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում շենքի կառուցումը ներառված է եղել 585 մլն ՀՀ դրամ արժեքով:	տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
49.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	1. Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի կենտրոնական ճանապարհին ունի հիմնանորոգման կարիք: Ճանապարհի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 3,5կմ: 1կմ2 ճանապարհի հիմնանորոգումն արժե մոտ 7.500 ՀՀ դրամ: Ճանապարհի լայնությունը կազմում է 6մ: Ընդհանուր ճանապարհի հիմնանորոգման համար կպահանջվի մոտավորապես 157,5 մլն (3.500x6x7.500) ՀՀ դրամ: 2. Առաջարկում ենք նաև 2020 թվականի պետություն նախատեսել համայնքի միջև 6 տարեկան 50 երեխայի համար 2015 թվականից չգործող մանկապարտեզի վերանորոգման ծախսերը, որը կկազմի մոտ 40 մլն ՀՀ դրամ:	1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի կենտրոնական ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի 2020 թվականի բյուջետային տարվա ընթացքում՝ «1049. Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի «21001. Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակներում: 2. Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
50.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Գեղարքունիքի մարզի 4800 բնակիչ ունեցող Աստղաձոր համայնքը չունի մանկապարտեզ: Անհրաժեշտ է համայնքում կառուցել մանկապարտեզ՝ նախատեսված 250 երեխայի համար: Մանկապարտեզի կառուցումը կարժենա մոտ 450 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
51.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքի ջրագծի արտաքին ցանցը վերանորոգման խնդիր ունի: Բնակիչներին ջուր մատակարարելու համար անհրաժեշտ է վերանորոգել ջրագիծը, որի համար կպահանջվի մոտ 60 մլն ՀՀ դրամ: Կարևոր խնդիր է նաև նաև ճանապարհի (ներհամայնքային և միջհամայնքային) հիմնանորոգումը, որը միմյանց կկապի համայնքի Լճավան և Ծովակ գյուղերը, որոնց	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ընդհանուր երկարությունը կազմում է ընդամենը 1,5կմ:	
52.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Գեղարքունիքի մարզի Ծովակ-Ախպրաձոր 14կմ երկարությամբ ճանապարհի հիմնանորոգումը միմյանց կկապի մարզի Ծովակ-Լճավան-Մաքեխի-Ախպրաձոր համայնքները: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել նշյալ ճանապարհի հիմնանորոգումը ևս:	Մ11-Ախպրաձոր կմ 0+000 - կմ 14+480 ճանապարհահատվածը, որն ընդգրկում է Ծովակ, Լճավան, Մաքեխի, Ախպրաձոր գյուղերը, նախատեսվում է վերականգնել Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում ծրագրով: Նոր ծրագրի վարկային համաձայնագիրը 2019թ. հոկտեմբերի 10-ին ստորագրվել է, այժմ ընթացքի մեջ է վարկային համաձայնագրի վավերացման ներպետական գործընթացը: Նոր ծրագիրն ընդգրկված է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծում:
53.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Առաջարկում ենք Գեղարքունիքի մարզի Լճավան համայնքում անցկացնել ոռոգման ցանց: Մասնավորապես անհրաժեշտ է՝ 1 խորքային հոր՝ տեղադրելով ԷՑՎ-12/210-85 պոմպային սարքավորում, անցկացնել էլեկտրասնուցման գծեր, տեղադրել տրանսֆորմատորային ենթակայան - մոտ 58 մլն ՀՀ դրամ. կառուցել մոտ 2 կմ երկարությամբ D-150մմ տրամագծով նոր ոռոգման խողովակաշար - մոտ 20 մլն ՀՀ դրամ. ընդհանուր - 78 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
54.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Առաջարկում ենք ճանապարհաշինության ծրագրերում ներառել Երևան-Մեղրի ավտոմայրուղին Մուցքին միացնող ճանապարհահատվածի 12 կմ-անոց հատվածը: Այն գտնվում է ծայրահեղ վատ վիճակում և այդպես պասսարկում Անգեղակոթ, Բալաք, Շաղատ և Մուցք գյուղերը:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
55.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր	Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեի նախագծում ներառել Սյունիքի մարզի Շենաթաղ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հայաստան» խմբակցություն	համայնքի դպրոցի տանիքի նորոգումը (518մ2)՝ 16.75 մլն ՀՀ դրամ նախագծային հաշվարկով: Տանիքից անձրևաջուրը լցվում է դպրոցի շենք, ինչի հետևանքով դպրոցում մշտապես ցուրտ է, խոնավ, փտում է ամբողջ շինությունը:	մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
56.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Առաջարկում ենք նախատեսել Սիսիանի պատմության թանգարանի, այդ թվում՝ թանգարանի ջրահեռացման համակարգի նորոգման ծախսային ծրագիրը՝ 8 մլն դրամ նախահաշվով: Նորոգումը հնարավորություն կտա ֆոնդերում գտնվող թանկարժեք ցուցանմուշները փրկել ոչնչացումից: Ընդգծենք, որ փչացող նմուշների արժեքը շատ ավելի բարձր է, քան անհրաժեշտ գումարի չափը:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
57.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Առաջարկում ենք Սյունիքի մարզի Լոր գյուղում գտնվող Համո Սահյանի 2015 թվականին հիմնադրված տուն-թանգարանը վերցնել պետության հոգածության ներքո, քանի որ համայնքը չի կարողանում թանգարանի մասին ըստ պատշաճի հոգ տանել: Սույն առաջարկության ընդունման դեպքում տարեկան անհրաժեշտ կլինի մոտ 5 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությանը հնարավոր է անդրադառնալ առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում:
58.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում ներառել «Տեխնիկական միջոցների ձեռքբերում Սիսիանի բժշկական կենտրոնի համար» ծախսային ծրագիրը՝ անէսթեզիայի սարք և 2-րդ վիրահատարան՝ 50 մլն ՀՀ դրամ արժեքով: Նշենք, որ անէսթեզիայի սարքը վիրահատության ընթացքում անընդհատ անջատվում է, ինչը կարող է բերել անդառնալի հետևանքների: Նոր 2-րդ վիրասրահն անհրաժեշտ է բժշկական կենտրոնում 2 վիրահատություն միաժամանակ կատարելու համար. դիսկային է բժշկական կենտրոնում միայն 1 վիրասրահ ունենալը:	Հարցը կքննարկվի առաջիկա տարիների բյուջետային գործընթացի շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
59.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Շիրակի մարզի Գետք գյուղն ունի 604 բնակիչ: Սահմանակից է Ախուրիկ, Ղարիբջանյան, Ազատան և Երազգավորս գյուղերին: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ և այգեգործությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցի վերանորոգում, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, ինչպես նաև գյուղի գազաֆիկացումը, քանի որ ամբողջ գյուղը գազաֆիկացված չէ: Սակայն այս ամենից զատ հրատապ խնդիր է հանդիսանում գյուղի ոռոգման ջրի հարցը: Ջուրը, որը օգտագործվում է Գետք գյուղի բնակիչների կողմից, ինչպես նաև մի շարք այլ գյուղերի կողմից, աղտոտված է, քանի որ ոռոգման ջրի մեջ լցվում են քիմիական տարրեր, թափոններ, ինչպես նաև կոյուղաջրեր: Շուրջ 200 տնտեսություն օգտվում է այդ ջրից: 2կմ երկարությամբ առվակը գյուղի մեջ հոսելով լցվում է Ախուրյան գետը: 54հա վարելահող ոռոգվում է այդ ջրով, որն է առաջացնում է սննդամթերքի իրացման բավականին լուրջ խնդիր: Առաջարկում ենք 2020 թվականին պետական բյուջեում ընդգրկել Գետք գյուղում զտակայանի կառուցումը, որի համար անհրաժեշտ կլինի 70 մլն դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
60.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Շիրակի մարզի Առափի գյուղի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, ինչպես նաև գլխավոր և առաջնային խնդիր է հանդիսանում գյուղի գազաֆիկացումը: Գյուղում բնակչությունը, ըստ ազգային վիճակագրության ծառայության տվյալների, կազմում է	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		1704 մարդ, սակայն վարչական ղեկավարը նշում է, որ գյուղում բնակվում է մոտ 2170 մարդ: Գյուղը գազաֆիկացված է միայն 15%-ով: Առաջարկում ենք 2020 թվականին պետական բյուջեում ընդգրկել Առափի գյուղի գազաֆիկացման ծրագիրը: Գյումրիի կենտրոնական մագիստրալից գյուղի գազաֆիկացումն ապահովելու համար անհրաժեշտ կլինի մոտ 300 մլն ՀՀ դրամ:	
61.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Շիրակի մարզի Հացիկ գյուղն (Գյումրի-Վանաձոր երկաթուղու ճանապարհին) ունի ասֆալտապատման կարիք: Գյուղամիջյան ճանապարհները մոտ 30 տարուց ավելի չեն ասֆալտապատվել, ոչ մի շինարարական աշխատանք այդտեղ չի իրականացվել: Գյուղն ունի բավականին զարգացած գյուղատնտեսություն: Տեղի բնակիչները զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային և այլ կուլտուրաների մշակությամբ: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 510հա: Նաև զարգացած է զբոսաշրջությունը, քանի որ Հացիկ գյուղից 1կմ հյուսիս-արևելք՝ ձորակի մեջ, պահպանվել է հին գյուղատեղի՝ դարավանդի ձևով: Այստեղ է եղել 7-րդ դարի եկեղեցի, որի հիմնապատերի վրա կառուցել են մատուռ՝ այն դարձնելով սրբավայր-ուխտատեղի: Ուխտատեղին «Ծակ քար» անունն է կրում: Նրա մոտ է գտնվում նաև «Յոթ եղբայր» կոչվող գերեզմանը, որը նույնպես սրբավայր է: Այս ամենի ուղղությամբ տուրիստական հոսքն ընդլայնելու համար առաջնային և հրատապ խնդիր է գյուղի մոտ 5կմ ճանապարհի հիմնանորոգումը:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
62.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր	Շիրակի մարզի Կամո գյուղը գտնվում է մարզկենտրոնից 9 կմ հյուսիս-արևելք: Գյուղի	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հայաստան» խմբակցություն	բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն է: Համայնքի կարևոր և առաջնային հիմնախնդիրը գյուղում մարզադպրոց կառուցելն է: Մարզադպրոցն անհրաժեշտ է կառուցել զրոյից, քանի որ համապատասխան կառույց չկա, որը հնարավոր կլինի վերանորոգել: «Սևան» ընկերության կողմից գյուղում կազմակերպվում են նաև մասնավոր ըմբշամարտի պարապմունքներ, որոնք անցկացվում է գյուղի կողմից նախատեսված փայտե տնակում: Ըմբշամարտի խմբակ այս պահի դրությամբ հաճախում են 30-35 մարզիկներ: Ավելի բարեկարգ պայմաններում մարզիկների թիվը կավելանա, կսկսեն կազմվել այլ սպորտային խմբակներ և մարզվել ավելի շատ երեխաներ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում ընդգրկել Կամո գյուղում մարզադպրոցի կառուցումը, որ կկազմի 30 մլն ՀՀ դրամ:	առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
63.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Առաջարկում ենք Երևան քաղաքի Ծարավ-Աղբյուր թաղամասում կառուցել նոր դպրոց: Այդտեղ այժմ բնակվում է մոտ 10 հազար քաղաքացի, թաղամասը գնալով ընդլայնվում է երիտասարդ ընտանիքներով, սակայն այն չունի հանրակրթական դպրոց: Առաջարկում ենք տեղում կառուցել դպրոց թվով 500 աշակերտի համար, որը կարժենա մոտ 900 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
64.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի նախագծում ընդգրկել «Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի մանկապատանեական համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ի կապիտալ վերանանորոգման ծախսային ծրագիրը: Ծրագրի նպատակը երիտասարդների շրջանում ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի և շախմատի	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>մասսայականացումն է:</p> <p>Մարզադպրոցն ունի 4310մ2 տարածք, որպեսզի ապահովվի ֆուտբոլի, վոլեյբոլի ու բասկետբոլի դաշտերով՝ համապատասխան տրիբունաներով: Ցավոք, վերջիններիս փոխարեն երեխաններն օգտվում են քարքարոտ տարածքներից՝ վտանգելով իրենց առողջությունը: Տվյալ մարզադպրոցը գտնվում է խիտ բնակեցված հատվածում, նրա հարևանությամբ են գտնվում դպրոցներ և մանակապարտեզ, որոնց սաները նույնպես կարող են այդտեղ կրթվել ու զարգացնել իրենց հնարավորությունները:</p> <p>Այսպիսով, սույն ծրագրի շրջանակներում առաջարկվում է իրականացնել փակ կառույցի՝ վարչական շենքի վերակառուցում: 1-հարկանի վարչական շենքն զբաղեցնում է ընդհանուր տարածքից 100մ2 տարածք: Անհրաժեշտ է մեծացնել վերջինիս մակերեսը՝ հասցնելով 310մ2-ու և կառուցել 2-հարկանի շինություն, որպեսզի նոր կառուցվելիք շինությունը կարողանա ներառել հետևյալները.</p> <p>հանդերձարաններ՝ համապատասխան ատրիբուտներով, վարչական ապարատի, մարզադպրոցի աշխատակիցների աշխատասենյակներ, 2-րդ հարկում՝ շախմատի դպրոց,</p> <p>Առաջարկում ենք նաև 4000մ2 տարածում կառուցել ֆուտբոլի, բասկետբոլի և վոլեյբոլի դաշտեր՝ իրենց տրիբունաներով: Մարզադպրոցի տարածքն անհրաժեշտ է նաև ցանկապատել, լուսավորել և տեղադրել տեսանկարահանող սարքեր՝ պահպանության ու բնականոն գործունեության ապահովման նպատակով:</p>	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Քննարկվող ծախսային ծրագիրը կազմելու է մոտ 200 մլն ՀՀ դրամ:	
65.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի մարզահամալիրի կոմպլեքսը գտնվում է անմխիթար վիճակում և զուրկ է կենցաղային տարրական պայմաններից: Այս շինությունը ժամանակին եղել է սպորտի զարգացման յուրահատուկ վայր, որտեղ մարզվել են շատ ճանաչված հայ և այլ պետությունների մարզիկներ: Իր ծավալատարածական հորինվածքով՝ այս կառույցն իր մեջ ընդգրկել է գրեթե բոլոր սպորտաձևերը: Չնայած նրան, որ ներկայումս շինությունն անբարեկարգ վիճակում է, այնուամենայնիվ շինության զգալի հատվածը հնարավոր է վերանորոգել: Վերանորոգման աշխատանքները չեն գերազանցի 800 մլն ՀՀ դրամը: Նշված գումարի սահմաններում կարելի է վերարտադրել մարզահամալիրն ամբողջությամբ, բացառությամբ լողավազանի (Մեծամոր համայնքում գործում է օլիմպիական ստանդարտներին համապատասխանող լողավազան):	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
66.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Հ. Հովհաննիսյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցը նորոգվել է 2009-2013 թվականների ընթացքում, սակայն դպրոցի դրսի մարզահրապարակը չի վերանորոգվել և մինչ օրս գտնվում է անմխիթար վիճակում: Դպրոց հաճախում է 480 աշակերտ, և ֆիզկուլտուրա առարկան միաժամանակ մի քանի դասարաններում անցկացվելու համար դրսի մարզահրապարակ ունենալն անհրաժեշտություն է: Վերոնշյալ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է 4 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
67.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Հանրապետության երրորդ խոշոր քաղաք համարվող Վանաձոր քաղաքում գտնվող 3-րդ կարգի 84 բազմաբնակարան շենքերի ամրացման և անհրաժեշտ ֆինանսական միջոցների հաշվարկման համար երբևէ միջոցներ չեն հատկացվել, այնինչ խնդիրն ավելի քան հրատապ է, քանի որ այդ շենքերից շատերի մասնակի կամ ամբողջական փլուզման վտանգն ամեն օր ավելի է մեծանում, ինչի աղետալի հետևանքների մասին խոսելն անգամ ավելորդ է, իսկ այդ շենքերում ապրում է մոտավորապես 12.600 մարդ կամ 3.200 ընտանիք:</p> <p>Հարևան Գուգարք համայնքի բազմաբնակարան միակ շենքը ևս 3-րդ կարգի վթարային է:</p> <p>Գիտակցելով, որ Հայաստանի Հանրապետության բյուջեի միջոցները սահմանափակ են՝ առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսել ֆինանսավորում Վանաձորում և Գուգարքում գտնվող 3-րդ կարգի վթարային 84 բազմաբնակարան շենքերից առնվազն 10 ամենավատթար վիճակում գտնվող շենքերի ամրացման համար:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:</p>
68.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Վանաձոր համայնքում գործում է 3 տնակային մանկապարտեզ, որտեղ ընդհանուր առմամբ հաճախում են մոտ 300 երեխաներ: Տնակները ծայրահեղ անմխիթար վիճակում են, իսկ մյուս մանկապարտեզները՝ գերծանրաբեռնված:</p> <p>Յուրաքանչյուր մանկապարտեզի վերակառուցման համար անհրաժեշտ է 120 մլն ՀՀ դրամ:</p> <p>Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Լոռու մարզի Վանաձոր համայնքում գործող 3 տնակային մանկապարտեզների</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		վերակառուցման հարցը, որի համար անհրաժեշտ է 360 մլն ՀՀ դրամ:	
69.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Վանաձոր համայնքը, հանդիսանալով աղետի գոտի, բնակֆոնդի պահպանման հարցում ունի լրջագույն խնդիրներ՝ բազմաբնակարան շենքերի անմխիթար վիճակում գտնվող տանիքների պատճառով:</p> <p>Վանաձորում առկա է վերոնորոգման ենթակա 248 տանիք՝ 173.196մ2 մակերեսով, որից հարթ տանիք՝ 66 հատ 31.054մ2 մակերեսով, երկթեք տանիք՝ 182 հատ 142.142մ2 մակերեսով: Երկթեք տանիքի 1մ2 նորոգման աշխատանքների միջին արժեքը կազմում է 19.000 ՀՀ դրամ, իսկ հարթ տանիքի նորոգման աշխատանքների 1մ2 միջին արժեքը 6.000 ՀՀ դրամ:</p> <p>Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Լոռու մարզի Վանաձոր համայնքում վերանորոգել 15.000մ2 հարթ տանիք (90 մլն ՀՀ դրամ) և 30.000մ2 երկթեք տանիք (570 մլն դրամ)՝ ընդհանուր առմամբ 660 մլն ՀՀ դրամ արժեքով:</p>	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
70.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Լոռու մարզի Վանաձոր համայնքում առկա է 42 վթարային և չգործող վերելակ: Այս վերելակների չաշխատելու պատճառով բազմահարկ շենքերի բնակիչները կրում են մեծ դժվարություններ, իսկ վերելակների դատարկ հորանները շատ դեպքերում դառնում են դժբախտ պատահարների պատճառ: 1 վերելակի վերագործարկման արժեքը կազմում է 3,3 մլն ՀՀ դրամ:</p> <p>Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Վանաձոր համայնքում 21 վերելակի վերագործարկման ծրագիրը՝ 69,3 մլն ՀՀ դրամ արժեքով:</p>	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
71.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Լոռու մարզի Վանաձոր համայնքում առկա է 150 բակ, որոնք մի քանի տասնյակ տարիներ չեն վերանորոգվել և տեղական բյուջեն ի վիճակի չէ հոգալու այդ ծախսը: 1 բակի նորոգման և ասֆալտապատման աշխատանքների միջին արժեքը կազմում է 7 մլն ՀՀ դրամ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել և Վանաձոր համայնքում վերանորոգել առնվազն 30 բակ, որի համար անհրաժեշտ է 210 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
72.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Լոռու մարզի Գուգարք համայնքում բնակվում է 5664 մարդ, մինչև 6 տարեկան երեխաների թիվը՝ 317, որից ներկայումս մանկապարտեզ հաճախում է 40-45-ը՝ գյուղում մանկապարտեզի շենք չլինելու և գործող մանկապարտեզի տնակային շենքի գյուղից դուրս, հեռու և անբարենպաստ տեղում գտնվելու պատճառով: 1. Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել՝ Գուգարք համայնքում մանկապարտեզի շենքի կառուցումը, որը կարժենա մոտ 130-140 մլն ՀՀ դրամ, 2. ներհամայնքային ճանապարհի ասֆալտապատում՝ 9-10 մլն ՀՀ դրամ, 3. ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող 9 բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում՝ 130 մլն ՀՀ դրամ մոտավոր արժեքներով:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
73.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրն ունի մոտ 1500 բնակիչ, որը ամառային սեզոնին ավելանում է ևս 500-ով: Գյուղի զարգացման ամենահեռանկարային ճյուղը տուրիզմն է, որի զարգացման նախապայմաններից է անխափան ջրամատակարարումը: Գյուղը չունի կենտրոնացված	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ՀՀ կառավարության N 1073-Ն որոշմամբ նախատեսված ծրագրերի շրջանակներում, իրականացնում է ՕԿՋ-ն սնող արտաքին ջրագծի սկզբնամասի մոտ 2,2 կմ հատվածը, 17.5 մլն դրամ պայմանագրային արժեքով: Աշխատանքները մոտենում են ավարտին:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ջրամատակարարում, քանի որ ջրատարից հեռու է մոտ 8կմ և սնվում է տարբեր աղբյուրներից: Ներկայումս կատարվում են գյուղի խմելու ջրի ջրագծի մի ճյուղի վերակառուցման աշխատանքները, որոնք կավարտվեն 2020 թվականի կեսին, և ջուրը կհասնի գյուղի ՕԿՁ: Սակայն բնակիչների անխափան ջուր մատակարարելու համար անհրաժեշտ է քայքայված ներքին ցանցի փոխարեն կառուցել նոր ցանց: Այսպիսով, առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Գարգառի ջրային ներքին ցանցի կառուցումը, որը կարժենա մոտ 80 մլն ՀՀ դրամ:</p>	<p>Վերը նշվածից բացի ներկայումս 2020 թ. նախատեսվում է իրականացնել արտաքին ջրագծի մնացած հատվածը՝ մոտ 6 կմ երկարությամբ և ՕԿՁ-ի վերանորոգման աշխատանքները, որոնց համար ընթանում է նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման գործընթացը:</p>
74.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի դպրոցում սովորում է մոտ 200 աշակերտ: Սակայն դպրոցը չունի մարզադահլիճ, դահլիճ, լաբորատոր սենյակներ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Կաթնաջուր համայնքի դպրոցի 2-րդ մասնաշենքի կառուցումը, որը կարժենա մոտ 200 մլն ՀՀ դրամ: Ինչպես նաև նշված համայնքում անհրաժեշտ է կոյուղու համակարգի կառուցում՝ մոտ 100 մլն ՀՀ դրամ արժեքով, բուժկետի կառուցում՝ մոտ 40 մլն ՀՀ դրամ նախնական արժեքով:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:</p>
75.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Լոռու մարզի Օձուն համայնքի Օձուն բնակավայրում անհրաժեշտ է համայնքում առկա կիսաքանդ կառույցի տարածքում նոր մանկապարտեզի կառուցում՝ նախատեսված 150 սաների համար: Մանկապարտեզի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված է Օձուն, Հազվի, Ամոջ, Այգեհատ, Արդվի բնակավայրերի 2-6 տարեկան երեխաների համար մտուր-մանկապարտեզային նորմալ պայմանների ապահովման համար: Նախկին Սովխոզի գրասենյակի երկահարկանի շինության միայն պատերն են կանգուն մնացել: Այդ</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>կառույցը զբաղեցնում է 390մ2 տարածք, որտեղ էլ հնարավոր է տեղավորել մանկապարտեզը:</p> <p>Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Օձուն համայնքի մանկապարտեզի վերակառուցումը, որը կարժենա մոտ 100-110 մլն ՀՀ դրամ:</p>	
76.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Լոռու մարզի Օձուն համայնքի բնակավայրերից ոչ մեկը նախկինում չի ունեցել մարզադաշտ: Օձուն բնակավայրը ունի ֆուտբոլի դաշտ, որը սակայն գտնվում է անմխիթար վիճակում: Չնայած դրան՝ գործում են ֆուտբոլի խմբակներ 3 տարբեր տարիքային խմբերի համար: Ֆուտբոլի մարզադաշտի կառուցումը հնարավորություն կտա ոչ միայն երիտասարդների և պատանիների ֆիզիկական պատրաստվածության և առողջության պահպանման խնդիրները լուծել, այլ նաև համայնքի համար լրացուցիչ ֆինանսական մուտքեր ապահովել՝ վարձակալությամբ տրամադրելու դեպքում: Մարզադաշտը և նրան հարակից տարածքը 9800մ2 է: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Օձուն համայնքում մարզադաշտի կառուցումը, որը կարժենա մոտ 45 մլն ՀՀ դրամ:</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>
77.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Լոռու մարզի Օձուն համայնքի Արևածագ բնակավայրի վարելահողերի ոռոգման ներքին ցանցի վերանորոգման վերակառուցման աշխատանքների արդյունքում ինքնահոս եղանակով ոռոգելի կդառնան 280-300հա վարելահողեր: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Օձուն համայնքի Արևածագ բնակավայրի ոռոգման ներքին ցանցի վերանորոգում, որը կարժենա մոտավորապես 40 մլն ՀՀ դրամ:</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
78.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Լոռու մարզի Թումանյան համայնքի Թումանյան քաղաքում 9 բազմաբնակարան շենքեր ունեն տանիքների հիմնանորոգման խնդիր (3-րդ փողոց թիվ 3, 6, 8 շենքեր, 5-րդ փողոց թիվ 3 շենք, 15-րդ փողոց թիվ 10, 11, 12, 13 շենքեր, 16-րդ փողոց թիվ 5 շենք): Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել</p> <p>2. Թումանյան համայնքի շենքերի տանիքների նորոգումը, որը կարժենա մոտ 24 մլն ՀՀ դրամ, Աթան բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի հիմնանորոգում, որը կարժենա մոտ 9,7 մլն ՀՀ դրամ, Շամուտ բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում, որը կարժենա մոտ 3,5 մլն ՀՀ դրամ:</p>	<p>1. Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p> <p>2. Ջրամատակարարման ներքին ցանցերի վերանորոգումը դյուրին է դարձել Թումանյան համայնքի տեխնիկական վերազինման արդյունքում: ԱՄՆ ՄԶԳ ծրագրով 2017թ տրամադրած էքսկավատորով ու ինքնաթափով համայնքը կարող է սեփական ուժերով փորել խրամուղիները, հետլիցք անել և հողահեռացում կազմակերպել, ինչը կիջեցնի ներքին ջրագծերի վերականգնման ծախսերը:</p>
79.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Լոռու մարզի Ազնվաձոր համայնքում առկա են մի շարք խնդիրներ: Համայնքը գազաֆիկացված չէ և չի համարվում անտառամերձ, այդ պատճառով անհրաժեշտ է էներգիայի այլընտրանքային աղբյուր: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեով Ազնվաձոր համայնքն ապահովել արևային էներգիայով, որը կարժենա մոտ 120 մլն ՀՀ դրամ: Ինչպես նաև առաջնային խնդիր է ճանապարհների հիմնանորոգումը՝ 60 մլն ՀՀ դրամ նախնական հաշվարկված արժեքով: Ազնվաձոր համայնքին անհրաժեշտ է նաև նախակրթարան, որի խնդիրն առաջարկում են նույնպես լուծել 2020 թվականի պետական բյուջեով:</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>
80.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան»	<p>Լոռու մարզի Դարպաս համայնքում առկա են մի շարք խնդիրներ: Վանաձոր-Դարպաս կապող ճանապարհը գտնվում է շատ վատ վիճակում: Բացի</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատ-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	խմբակցություն	ասֆալտապատումից, պետք է նաև ճանապարհի քարաթափումը կանխարգելող աշխատանքներ իրականացնել: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Վանաձոր-Դարպաս ճանապարհի ասֆալտապատումը և քարաթափման կանխարգելումը, որոնք համապատասխանաբար կարժենան մոտ 100 մլն և 10 մլն ՀՀ դրամ: Այս համայնքում անհրաժեշտ է նաև կոյուղու վերանորոգում՝ 15 մլն ՀՀ դրամ արժեքով և համայնքային կենտրոնի կառուցում՝ 35 մլն ՀՀ դրամ մոտավոր հաշվարկված արժեքով:	տասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
81.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Լոռու մարզի Մեծ Այրում համայնքն ունի 1122 բնակիչ, որոնցից 209 երեխաներ են: Մեծ Այրումի միջնակարգ դպրոցը շահագործման է հանձնվել 1972 թվականին, բաղկացած է 3 երկհարկանի մասնաշենքից, ընդհանուր մակերեսը՝ 2669,7մ2: Այն սեյսմակայունության առումով գնահատված չէ: 2018 թվականի հոկտեմբերին «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (COAF) աջակցությամբ նորոգվել է ճաշարանի տարածքը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Մեծ Այրում համայնքի դպրոցի հիմնանորոգումը:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
82.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Լոռու մարզի Վանաձոր համայնքի Առափնյա թաղամասում բնակվում է 5.000 բնակիչ, որոնցից նախադպրոցական երեխաների մեծ մասը հաճախում են քաղաքի այլ մանկապարտեզներ: Առափնյա թաղամասի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ-ը այս թաղամասի միակ մանկապարտեզն է, որտեղ ներկա պահին հաճախում են 55 երեխա: Մանկապարտեզը նախկինում եղել է տիպային, ապա՝ Սպիտակի երկրաշարժից հետո, տեղափոխվել մի կացարան, որը	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		կառուցվել է 1940 թվականին: Շենքային պայմաններն ինչ-որ կերպ հարմարացվել են մանկապարտեզի օգտագործման համար: Շենքը գազաֆիկացված չէ և ջեռուցվում է փայտե վառարաններով: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Վանաձոր համայնքի թիվ 7 մանկապարտեզի շենքի վերակառուցումը:	
83.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Լոռու մարզի Փամբակ համայնքում բնակվում է 374 մարդ, որոնցից 26-ը 0-6 տարեկան երեխաներ են: Համայնքում չկա մանկապարտեզ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Փամբակ համայնքում մանկապարտեզի կառուցում՝ 20 մլն ՀՀ դրամի շրջանակներում, կամ որպես ավելի քիչ ծախս ենթադրող այլընտրանք՝ գնել այս համայնքում վաճառվող մանկապարտեզի գործունեությանը հարմար ընդհանրություն:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
84.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Փամբակի համայնքային ջրագիծը կառուցվել է 1971 թվականին, 50 տարիների ընթացքում ամբողջությամբ քայքայվել է և դարձել օգտագործման համար ոչ պիտանի: Չնայած ջրագիծը գտնվում է «Վեոլա Ջուր» կազմակերպության հաշվեկշռում, սակայն համայնքի ջանքերով որոշ վերանորոգման աշխատանքներ են իրականացվել: Վերջին տարում կազմակերպությունը ևս նորոգման աշխատանքներ է կատարել, սակայն վթարները վերացնելն արդեն անհնար է: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել և Փամբակ համայնքում կառուցել նոր ջրամբար և անցկացնել 2.000 մետր նոր ջրագիծ, որը կարժենա մոտ 6 մլն ՀՀ դրամ:	Փամբակ համայնքում նոր ջրամբարի կառուցման առաջարկությունը չի ընդունվել՝ ելնելով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի մակարդակից և ծախսերի առաջնահերթությունից: Ինչ վերաբերում է Փամբակ համայնքում նոր ջրամբար կառուցմանը, ապա դրա իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
85.	ՀՀ Ազգային ժողովի	Փամբակ համայնքի ներհամայնքային ճանապարհները	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Խճապատ են: Համայնքի կողմից ամեն տարի փոսալցման աշխատանքներ են տարվում, սակայն գարնանային անձրևներն սկսվելուց հետո ճանապարհը նորից հայտնվում է նախկին վիճակում: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Փամբակ համայնքի 3.000մ երկարությամբ ճանապարհի ասֆալտապատում, որի արժեքը կկազմի մոտ 16 մլն ՀՀ դրամ:	անդրադառնալ հետազայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
86.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Փամբակ համայնքի փողոցների լուսավորման հարցը կարգավորված չէ: Ամբողջությամբ լուսավորվում է կենտրոնական Մ6 միջպետական ճանապարհի գյուղամիջյան հատվածը, համայնքի ներսում լուսավորվում է մասամբ: Անհրաժեշտ է 15 լուսամփոփ և 15 հատ 6մ երկարությամբ սյուներ: Ըստ այդմ՝ առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում ներառել Փամբակ համայնքի լուսավորության ծախսային ծրագիրը:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետազայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
87.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բնապահպանական ծրագրերի գծով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել, քան այդ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարվա բնապահպանական և բնօգտագործման վճարների, իսկ 2020 թվականից սկսած՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը: Սա բնապահպանական ծրագրերի և ոլորտի զարգացման կարևորագույն դրոյթներից է, որը բացառիկ է բյուջետային համակարգում՝ ելնելով այն հանգամանքից, որ բնապահպանական	«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բնապահպանական ծրագրերի գծով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել, քան այդ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարվա բնապահպանական և բնօգտագործման վճարների, իսկ 2020 թվականից սկսած՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը: Օրենքի 1.2-րդ հոդվածի 17-րդ մասի համաձայն՝ ծրագիրը միևնույն վերջնական արդյունքի հասնելուն

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>անվտանգությունն ազգային անվտանգության կարևորագույն երաշխիքներից է: Համաձայն նույն օրենքի՝ 2020 թվականին բնապահպանական ծրագրերի ծախսերը պետք է լինեն առնվազն 54,2 մլրդ դրամ, սակայն այս պահին նախագծով նախատեսվում է մոտ 40 մլրդ դրամով կամ մոտ 3,5 անգամ պակաս՝ 15,7 մլրդ դրամ: Առաջարկում ենք շտկել այս անընդունելի բացը:</p>	<p>ուղղված քաղաքականության իրագործման միջոցառումների (այսուհետ՝ ծրագրի միջոցառումներ) տրամաբանական խմբավորումն է:</p> <p>Նույն հոդվածի 17.1-րդ մասի համաձայն՝ ծրագիրը միևնույն նպատակին հասնելուն ուղղված քաղաքականության իրագործման միջոցառումների (այսուհետ՝ ծրագրի միջոցառումներ) տրամաբանական խմբավորումն է:</p> <p>Նույն հոդվածի 17.2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ծրագիր ներառում է տվյալ նպատակին ուղղված միայն մեկ՝ գլխավոր կարգադրիչի վերագրվող միջոցառումներ:</p> <p>Նույն հոդվածի 17.3-րդ մասի համաձայն՝ ծրագրի նպատակը այն կոնկրետ սոցիալական կամ հասարակական խնդիրն է, որի լուծմանն ուղղված է ծրագիրը:</p> <p>Նույն հոդվածի 18.1-րդ մասի համաձայն՝ ծրագրի միջոցառումը ծրագրի շրջանակներում քաղաքականության իրագործման նպատակով իրականացվող պետության միջամտությունն է, որն ուղղված է տվյալ ծրագրի համար սահմանված նպատակի իրագործմանը:</p> <p>Նույն հոդվածի 19-րդ մասի համաձայն՝ վերջնական արդյունքները սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի այն փոփոխություններն են, որոնց ձգտում է հասնել պետությունը հանրության համար ծրագրերի միջոցառումների տեսքով սահմանված միջամտությունների միջոցով:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բյուջետային հարաբերությունները կարգավորվում են նույն օրենքով սահմանված բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունքներով:</p> <p>Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բյուջետային համակարգը հիմնվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների վրա՝</p> <ul style="list-style-type: none"> ա) բյուջետային համակարգի միասնականություն. բ) բյուջետային համակարգի մեջ մտնող տարբեր մակարդակների բյուջեների միջև բյուջետային մուտքերի և ելքերի տարանջատում. գ) բյուջեների ինքնուրույնություն. դ) բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվություն. ե) բյուջեների հաշվեկշռվածություն. զ) բյուջետային ելքերի ամբողջական (համախառն) ծածկվածություն. է) բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետություն. ը) բյուջեների հրապարակայնություն. թ) բյուջետային միջոցների հասցեագրվածություն և նպատակայնություն. ժ) բյուջեների իրատեսություն: <p>Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված են բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունքները:</p> <p>Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ <i>բյուջեների նախագծերը կազմվում են կառավարության</i></p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p><i>գործունեության, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերին համապատասխան:</i></p> <p>Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական մարմիններն առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելու և դրանք ներկայացնելու մեթոդական ցուցումների համաձայն կազմված իրենց և համակարգի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը (որտեղ ցույց է տրվում կապն առաջիկա երեք տարվա պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հետ և ընդգծվում են առաջիկա երեք տարվա պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի նկատմամբ բոլոր զգալի շեղումները), իսկ դոտացիայի գումարները հաշվարկող մարմինը՝ դոտացիայի գումարի՝ ըստ առանձին համայնքների բաշխումը առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացնում են պետական լիազորված մարմին:</p> <p>Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բյուջեները կազմվում և կատարվում են՝ ըստ բյուջեների մուտքերի և ելքերի միասնական դասակարգման:</p> <p>Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բյուջետային դասակարգումն ունի հետևյալ կառուցվածքը՝</p> <ul style="list-style-type: none"> ա) բյուջեների եկամուտներ. բ) բյուջեների ծախսեր և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ. գ) բյուջեների դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներ.

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>դ) բյուջեների պարտքեր: Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բյուջեների ծախսերը և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (այսուհետ՝ ծախսերը) դասակարգվում են ըստ՝</p> <p>ա) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների. բ) գերատեսչական բաշխվածության. գ) ծախսերի տնտեսագիտական բովանդակության. դ) տարածքային բաշխվածության. ե) ծրագրերի:</p> <p>Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ բյուջեների ծախսերի ծրագրային դասակարգումը ծախսերի խմբավորումն է ըստ պետական մարմինների կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի և ծրագրերի միջոցառումների՝ նույն օրենքի 41.4-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «բ» և «գ» կետերով սահմանված տեսակների:</p> <p>Օրենքի 41.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական բյուջեի մասին օրենքի նախագծի բյուջետային հատկացումներն ըստ պետական մարմինների սահմանող՝ կառավարության բյուջետային ուղերձի հավելվածում ներկայացվում են յուրաքանչյուր պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերը և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումները: Ծրագրերից յուրաքանչյուրի համար ներկայացվում են ծրագրի դասիչը, անվանումը, նպատակը, վերջնական արդյունքի նկարագրությունը և հատկացվող ֆինանսական միջոցները: Միջոցառումներից</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	<< կառավարության դիրքորոշումը
			<p>յուրաքանչյուրի համար ներկայացվում են միջոցառման դասիչը, անվանումը, նկարագրությունը և հատկացվող ֆինանսական միջոցները:</p> <p>Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կառավարության բյուջետային ուղերձի կազմում բերված, ինչպես նաև պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծրագրերի և միջոցառումների գծով կառավարության սահմանած արդյունքային (կատարողական) ցուցանիշները ներկայացնող հավելվածը յուրաքանչյուր պետական մարմնի գծով բաղկացած է երկու մասից, ընդ որում՝</p> <p>1) առաջին մասում ներկայացվում է յուրաքանչյուր պետական մարմնի ռազմավարական նպատակների համառոտ շարադրանքը.</p> <p>2) երկրորդ մասում ներկայացվում են պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերի միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշները:</p> <p>Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կառավարության բյուջետային ուղերձի կազմում բերված, ինչպես նաև պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծրագրերի գծով Կառավարության սահմանած վերջնական արդյունքի ցուցանիշները ներկայացնող հավելվածում արտացոլվում են յուրաքանչյուր պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերի գծով վերջնական արդյունքի կանխատեսվող ցուցանիշները և դրանց թիրախային ժամկետները:</p> <p>Վերը նշված դրույթների համակարգային</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>մեկնաբանությունից պարզ է դառնում, որ յուրաքանչյուր պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերը և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումները նախատեսվում են տվյալ պետական մարմնի կողմից պետական լիազորված մարմին ներկայացվող բյուջետային ֆինանսավորման հայտերում, որոնցում արտացոլվում են այդ ծրագրերի գծով վերջնական արդյունքի կանխատեսվող ցուցանիշները և դրանց թիրախային ժամկետները, իսկ պետական լիազորված մարմինը հաջորդ տարվա պետական բյուջեի նախագիծը կազմում է ներկայացված բյուջետային ֆինանսավորման հայտերի հիման վրա:</p> <p>Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք որ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը կազմվել է պետական բյուջեի նախագծի կազմման Օրենքով սահմանված կարգով՝ <i>բյուջետային ֆինանսավորման հայտերի, արտաքին ու ներքին պարտավորությունների և հաջորդ տարում կանխատեսվող մուտքերի հիման վրա՝</i> հաշվի առնելով բյուջեների մուտքերի և ելքերի միասնական դասակարգումը:</p> <p>Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծով նախատեսվող և վեճի առարկա հանդիսացող կարգավորումը պետք է դիտարկել «Բյուջետային համակարգի մասին» օրենքի ոչ միայն առանձին</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>կարգավորումների, այլև ընդհանուր սկզբունքների համատեքստում:</p> <p>Սկզբունքներն արտացոլում են իրավունքի էությունը, բովանդակությունն ու դերը: Ուստի, իրավունքի նորմերի և սկզբունքների միջև կոլիզիայի դեպքում, որպես կանոն, ընդունված է առաջնահերթությունը տալ սկզբունքներին, քանի որ դրանք արտացոլում են տվյալ ճյուղի (ենթաճյուղի և այլն) համար ընդհանուր, օրինաչափ, բնորոշ գծերը:</p> <p>Այսպես, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի կարգավորումը լիովին համահունչ է «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 3-րդ և 8-րդ հոդվածներով ամրագրված բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունքներին:</p> <p>«Բյուջետային համակարգի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքը, որը նշանակում է, որ բյուջեների կազմման և կատարման ժամանակ պետք է ելնել նախատեսված արդյունքի բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործմամբ կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից:</p> <p>«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով ընտրվել է հենց նախատեսված արդյունքին բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործմամբ</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>հասնելու ուղղությունը, որի դեպքում գործադիր իշխանության մարմինները պետք է ձգտեն բյուջեի միջոցների խնայողությանը:</p> <p>Բացի այդ, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգավորումն ու «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումը պետք է դիտարկել ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության համատեքստում:</p> <p>Հատուկ նորմի նպատակը ընդհանուր նորմի հստակեցումը կամ կոնկրետացումն է, որն իրականացվում է հատուկ նորմով մանրամասներ, լրացումներ կամ բացառություններ սահմանելու եղանակով: Այսինքն՝ ընդհանուր նորմը կարգավորում է ավելի լայն հասարակական հարաբերություններ՝ կիրառելով ընդհանրացման ավելի մեծ չափ, իսկ հատուկ նորմը ընդհանուր նորմի համեմատ ավելի դետալացված կարգավորումներ է նախատեսում, քանի որ ավելի ամբողջական կերպով են հաշվի առնում հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները: Բացի այդ ընդհանուր և հատուկ նորմերի սահմանազատման հիմքում դրվում է դրանց կարգավորման ոլորտը կամ ծավալը. Ժամանակը, սուբյեկտների շրջանակը, հասարակական հարաբերության առարկան, որոնց վրա տարածվում են և այլն:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>Այսպիսով, վերոնշյալ վերլուծությունից պարզ է դառնում, որ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի կարգավորումը հատուկ նորմ է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համեմատ, և ուստի Lex specialis derogat generali (հատուկ նորմը վերացնում է ընդհանուրը) սկզբունքի ուժով մրցակցությունը լուծվում է հոգուտ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսված կարգավորման</p>
88.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Կառավարության կողմից խոստացված՝ «մինչև 2020 թվականի 10-րդ ամսվա 10-րդ օրը 10 մլն ծառ տնկելու ծրագրի» ֆինանսավորումը 2020 թվականի պետական բյուջեի նախագծով սահմանված չէ: Առաջարկում ենք եկող տարվա պետական բյուջեով այն ևս իրականություն դարձնել(եթե ընդունենք, որ 1 ծառի արժեքը լինելու է 1.000 ՀՀ դրամ, ապա ծրագիրը կկազմի 10 մլրդ ՀՀ դրամ):</p>	<p>ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված է «Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ» միջոցառումը՝ 413,8 մլն դրամ գումարի չափով, ինչը կիրականացվի «մինչև 2020 թվականի 10-րդ ամսվա 10-րդ օրը 10 մլն ծառ տնկելու ծրագրի» շրջանակներում: Նշված ծրագիրը նախատեսվում է իրականացնել նաև տարբեր երկրների հետ արդեն իսկ ձևավորված համագործակցության շրջանակներում, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների ներգրավմամբ: Միաժամանակ, անհրաժեշտության դեպքում, կձեռնարկվեն համապատասխան միջոցներ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի շրջանակներում ծրագրի իրականացման ուղղությամբ:</p>
89.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Դեբեդի գույնն արդեն վաղուց թույլ է տալիս գլխի ընկնել գետում առկա թունավոր նյութերի առկայության մասին: Մասնավորապես, տարիներ շարունակ գետը թափվող կոյուղաջրերը ֆիլտրելու համար նախատեսված</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապա-</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		մաքրման կայանը չի գործարկվում, և ջրում պարունակվող ամոնիակն ու այլ նյութերը շարունակաբար պղտորում են գետը, թունավորում դրանից սնվող հողում աճող բերքը: Առաջարկում ենք վերագործարկել Դեբեդի կոյուղաջրերի մաքրման կայանը՝ դրան միացնելով նաև այլ համայնքներից գետ հոսող կոյուղաջրերը:	տասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
90.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեից միջոցներ նախատեսել Հանրապետությունում քաղցկեցի առաջացման և հանքարդյունաբերության կապը բացահայտելու ուղղությամբ ուսումնասիրություն իրականացնելու, ինչպես նաև ազդակիր համայնքների վիճակագրության փոխկապակցվածությունը հանքարդյունաբերության հետ հաստատելու կամ հերքելու համար:	Հարցը կքննարկվի առաջիկա տարիների բյուջետային գործընթացի շրջանակներում:
91.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Կառավարության ծրագրով նախատեսված է, որ Հանրապետության տնտեսության զարգացումը պետք է լինի արտահանմանը միտված, ինչը նշանակում է, որ պետք է իրականացվեն ռեֆորմներ, որոնց արդյունքում կփոխվի ՀՆԱ կառուցվածքը, վերջինում շարունակաբար կմեծանա արտահանելի հատվածի բաժինը՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, բարձր տեխնոլոգիաների, զբոսաշրջության ոլորտները: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի արտադրողականության աճին, նորարարությանը, ստեղծարար աշխատանքին, տնտեսական աճի ներառականությանը, տեխնոլոգիական զարգացմանը և տարածքային համաչափ զարգացմանը: Սակայն, տարեկան բյուջեի այս նախագծով նախատեսված չէ որևէ պետական ծրագիր՝ ուղղված աջակցելու արդյունաբերական գործարանների տեխնոլոգիական	«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով շեշտակի մեծացվել են բարձր տեխնոլոգիական ոլորտի բյուջետային հատկացումները: 2019թ. տեխնոլոգիական ոլորտի ծրագրերի իրականացման համար ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը ՀՀ պետական բյուջեից հատկացվել է, ընդհանուր առմամբ, 392,677.0 մլն ՀՀ դրամ, այնինչ 2020թ. բյուջեի նախագծով նախատեսվել է 3.0 մլրդ դրամ արժեքով Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագրի իրականացում, որի նպատակն է՝ <ul style="list-style-type: none"> • Իրականացնել կադրերի թիրախավորված պատրաստում և վերապատրաստում, հաշվի առնելով շուկայի զարգացումն ու

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>վերազինմանը, ինչից էապես կախված է արտադրողականության աճը:</p> <p>Առաջարկում ենք մեծացնել բյուջետային հատկացումները S<S, բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների պատրաստման համար հիմքեր ստեղծող և դրանց էապես նպաստող ծրագրերին:</p> <p>Առաջարկում ենք մեծացնել բյուջետային հատկացումները՝ գիտության, գիտատեխնիկական հետազոտությունների, արդի տեխնոլոգիաների յուրացմանն ուղղված գիտական կարողությունների զարգացման, համապատասխան գիտական կլաստերների ստեղծման և աջակցման, գիտնականների պատրաստման, կրթական չափորոշիչների վերանայման, ուսուցիչների աշխատավարձի շարունակական բարձրացման, մանկավարժական կրթության զարգացման, բարձրակարգ մանկավարժների պատրաստման, ուսուցիչների վերապատրաստմանն ուղղությամբ:</p> <p>Անհրաժեշտ է զգալի գումարներ նախատեսել Հայաստան վերադառնալու ցանկություն հայտնաձևած անձանց՝ սփյուռքից «ուղեղների ներգաղթ» ապահովելու համար՝ ըստ կառավարության սահմանած առաջնահերթությունների և գերակայությունների, ինչը ևս առաջարկում ենք սահմանել այս տարվա բյուջեով:</p>	<p>կադրերի նկատմամբ շուկայի պահանջարկի աճը</p> <ul style="list-style-type: none"> • Զարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի համար անհրաժեշտ էկոհամակարգը՝ ներառյալ թիրախավորված գիտահետազոտական աշխատանքների, ստեղծագործական խմբերի, նորաստեղծ ընկերությունների ֆինանսավորումը • Զարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտում միջազգային համագործակցությունը, իրականացնել շուկաների զարգացման, հայկական ծագում ունեցող բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների արտերկրում առաջխաղացման և միջազգային շուկաներում վաճառքի խթանման ծրագրեր • Հայկական Սփյուռքի ներգրավվածությունն ապահովելու նպատակով տարբեր ֆորմատներում շարունակական համագործակցության հարթակ ստեղծել հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների հետ, և ոլորտային ծրագրերի իրագործմամբ խթանել տաղանդների ներհոսքը <p>«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով ռազմարդյունաբերության ոլորտի ֆինանսավորման աճել է 122%-ով 2019թ. բյուջետային ֆինանսավորման համեմատ, որի հաշվին նախատեսվում է՝</p> <ul style="list-style-type: none"> - Գիտահետազոտական աշխատանքների իրականացում, նոր նմուշների մշակում - Արտադրական հնարավորությունների զարգացում, ռազմարդյունաբերական գործարանների տեխնոլոգիական վերազինում <p>2020թ. ռազմարդյունաբերության ոլորտի գիտական և</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտությունների շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների համար բյուջետային հատկացումները 2019թ. համեմատ աճել են 35.5 տոկոսով:
92.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Հանրապետության տարածքային համաչափ զարգացումն ապահովելու, համայնքների ֆինանսական անկախությունն ու ինքնուրույնությունը մեծացնելու, տեղական խնդիրների լուծման համար ֆինանսական կարողությունները մեծացնելու, ներդրումների ներգրավման և իրենց համայնքներում նոր աշխատատեղերի ստեղծման ֆինանսական խթաններ ստեղծելու նպատակով՝ անհրաժեշտ ենք համարում և առաջարկում ենք հանրային ֆինանսների ապակենտրոնացման իրականացումը՝ պետական բյուջեի եկամուտ հանդիսացող հարկային եկամուտների մի մասը ուղղելով համայնքային բյուջեներ:	«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքների բյուջեներին ամրագրված հարկային եկամուտներն են տեղական հարկերը՝ անշարժ գույքի հարկը, փոխադրամիջոցների գույքահարկը, օրենքով պետական բյուջեին ամրագրվող այլ հարկատեսակներից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումները, իսկ վերը նշված օրենքով սահմանված մնացած հարկերը հանդիսանում են պետական բյուջեի եկամուտների աղբյուրներ: Միաժամանակ հայտնում ենք, որ յուրաքանչյուր տարվա «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով համայնքների զարգացման նպատակով պետական բյուջեից հատկացվում են դոտացիաներ և սուբվենցիաներ:
93.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Անբավարար ենք համարում նախատեսված գյուղատնտեսության զարգացմանն ուղղված նոր ծրագրերը: Մեր կարծիքով, նպատակահարմար կլիներ, մասնավորապես, նախատեսել նոր ծրագրեր, որոնք ուղղված կլինեին պետության կողմից առանձին ներդրումային ծրագրերի համաֆինանսավորմանը, այլ ոչ թե վարկերի տոկոսների որոշ մասի սուբսիդավորմանը, ինչը առանց այն էլ ծանր վարկային բեռի տակ գտնվող գյուղացու համար այդքան են	Հայաստանի Հանրապետության կառավարությունը նույնպես կհսում է այն գաղափարը, որ գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցությունը պետք է իրականացվի ոչ միայն վարկերի տոկոսադրույքների մի մասի սուբսիդավորմամբ, այլ նաև կատարված ներդրումային ծախսերի մասնակի փոխհատուցմամբ (համաֆինանսավորմամբ): Նախագծում արդեն իսկ ներառված են գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրեր, որոնցում առկա է կատարված ծախսերի մասնակի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>արդյունավետ չէ: Կարծում ենք՝ պետք է շեշտակի մեծացնել պետական աջակցությունը որոշակի չափից ավելի մեծ մակերես ունեցող հողատարածք մշակող, նորարարական տեխնոլոգիաներ կիրառող, գյուղատնտեսական արտադրանքի արդյունաբերական ծավալների հասցնելու ներուժ ունեցող, բարձրարժեք գյուղատնտեսական արտադրանք արտադրող տնտեսություններին: Մեծ ուշադրություն պետք է դարձնել գյուղատնտեսության բնագավառում կրթությանը, կադրերի պատրաստմանը, գիտելիքների տարածմանը և տեղեկացվածությանը՝ այս ոլորտում առկա նորարարական տեխնոլոգիաների, կիրառվող նոր մոտեցումների և դրանց արդյունավետության վերաբերյալ: Առաջարկում ենք նաև էական միջոցներ ուղղել՝ աջակցելու Հանրապետության մարզերում, հատկապես գյուղական համայնքներում տեխնոլոգիական նորարարական կենտրոնների ստեղծմանը:</p>	<p>Ֆոխհատուցման բաղադրիչը, մասնա-վորապես՝ Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխ-նոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիր, Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիր, Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացմանը պետական աջակցության ծրագիր, Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիր, Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիր, Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիր: Ինչ վերաբերում է «Լուսավոր Հայաստան» խմբակցության մյուս առաջարկությանը՝ որոշակի չափից ավելի մեծ մակերես ունեցող հողատարածք մշակող, նորարարական տեխնոլոգիաներ կիրառող, գյուղատնտեսական արտադրանքի արդյունաբերական ծավալների հասցնելու ներուժ ունեցող, բարձրարժեք գյուղատնտեսական արտադրանք արտադրող տնտեսություններին պետական աջակցության տրամադրման հարցին, ապա այն ևս ընդունելի է, և այդ ուղղությամբ նույնպես արվում են համապատասխան քայլեր, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի նիստում ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամա-նակակից</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը, որով շուրջ 10 անգամ (վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման բաղադրիչ) ավելացվել է պետական աջակցությամբ հիմնվող այգիների տարածքների սահմանաչափը՝ կազմելով 0,5-100 հա, իսկ ծախսերի փոխհատուցման բաղադրիչի դեպքում՝ 2-3 անգամ՝ կազմելով 0,5-10 հա: Ավելացվել է նաև պետական աջակցության չափը:</p> <p>Գյուղատնտեսության զարգացման տեսանկյունից կարևորվում են նաև տնտեսավարողների կրթական և իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքները: Այս առումով գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության մի շարք ծրագրերին մասնակցելու համար պարտադիր պահանջ է սահմանվում կազմակերպվող դասընթացներին մասնակցությունը, որն ուղղված է նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը և ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:</p> <p>Հանրապետության մարզերում, հատկապես գյուղական համայնքներում տեխնոլոգիական նորարարական կենտրոնների ստեղծման հարցի հետ կապված՝ տեղեկացնում ենք, որ այդ ուղղությամբ քննարկումներ են իրականացվում:</p>
94.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի մարզադպրոցը 2003 թվականից ի վեր չի վերանորոգվել ու գտնվում է անմխիթար վիճակում՝ տանիքը կաթում է, հատակը կիսաքանդ է, պատուհանները պետք է փոխվեն,	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ամբողջությամբ ներքին հարդարման աշխատանքների կարիք կա, սանհանգույցը և հանդերձարանը նույնպես շատ վատ վիճակում են: Մարզադպրոցն ունի 365 աշակերտ, ևս 160 հոգի օգտվում է մարզադպրոցի հնարավորություններից: Մարզադպրոցում անց են կացվում մարզային և հանրապետական նշանակության սպորտային մրցումներ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել մարզադպրոցի կապիտալ վերանորոգումը, որը կարժենա մոտավորապես 42 մլն ՀՀ դրամ:	միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
95.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի դպրոցը 1980-ական թվականներից ի վեր չի վերանորոգվել: Տանիքը կաթում է, հատակը քանդված է, սանհանգույցը վերանորոգելու և պատուհանները փոխելու կարիք կա: Դպրոցն ունի 270 աշակերտ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել դպրոցի 2-րդ մասնաշենքի վերանորոգումը և ներքին հարդարման աշխատանքները, որոնք կարժենան մոտ 110 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
96.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղի մանկապարտեզը 1990-ական թվականներից ի վեր չի վերանորոգվել: Պատուհանները, սանհանգույցը և հատակը փոխելու և ներքին հարդարման աշխատանքների կարիք կա: Մանկապարտեզ հաճախում են 40 երեխա: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել այս նախակրթարանի վերանորոգումը ևս:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
97.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Վայոց ձորի մարզի Արենի համայնքի դպրոցը կառուցվել է 1965 թվականին, մասնակի վերանորոգվել է 2006 թվականին, ունի 242 աշակերտ: Դպրոցն ունի ներքին դռները, պատուհանները և կիսաքանդ հատակը,	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		սանհանգույցը փոխելու և ամբողջությամբ ներքին հարդարանքներ իրականացնելու կարիք: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել դպրոցի կապիտալ վերանորոգումը, որը կարժենա մոտավորապես 150 մլն ՀՀ դրամ:	միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
98.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Վայոց ձորի մարզի Ագարակաձոր համայնքի դպրոցը կառուցվել է 1975 թվականին և վերջին անգամ վերանորոգվել 2007 թվականին, դպրոցն ունի 136 աշակերտ: Դպրոցի մարզադահլիճը գտնվում է անմխիթար վիճակում և շահագործման համար պիտանի չէ: Սանհանգույցը պետք է վերանորոգվի, հանդերձարանը վերանորոգելու կարիք կա, պետք է իրականացվեն ընդհանուր ներքին հարդարման աշխատանքներ: Առաջարկում ենք 2020 թվականի բյուջեում նախատեսել դպրոցի մարզադահլիճի վերանորոգումը, որը կարժենա մոտավորապես 65 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
99.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Վայոց ձորի մարզի Աղավնաձոր գյուղի մանկապարտեզը կառուցվել է 1973 թվականին և վերջին անգամ վերանորոգվել 2006 թվականին: Այս մանկապարտեզ են հաճախում 50 երեխա: Ներկայումս առաջացել է նոր վերանորոգման կարիք: Մասնավորապես՝ անհրաժեշտ է անհապաղ կատարել դրենաժային ջրերի հեռացում և ներքին հարդարման աշխատանքներ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել այս մանկապարտեզի վերանորոգումը, որը կարժենա մոտավորապես 50 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
100.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր	Վայոց ձորի մարզի Աղավնաձոր գյուղի միջնակարգ դպրոցը 1965 թվականին է կառուցվել, ունի 218	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հայաստան» խմբակցություն	աշակերտ: Այն վերջին անգամ մասնակի վերանորոգվել է 2006 թվականին: Սանհանգույցը պետք է փոխել և հարդարել, դասասենյակների դռներն է անհրաժեշտ փոխարինել: Առաջարկում ենք 2020 թվականի բյուջեում նախատեսել դպրոցի վերանորոգումը, որը կարժենա մոտավորապես 65 մլն ՀՀ դրամ:	մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
101.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Վայոց ձորի մարզի Արփի գյուղի մանկապարտեզի պատշգամբների վերանորոգման և ծածկի կառուցման ծրագիրը ժամանակին նախատեսված է եղել, նախագիծը պատրաստ է եղել, սակայն չի իրագործվել: Ներկայումս այդ պատճառով ոչ բարենպաստ եղանակային պայմանները թույլ չեն տալիս մանկապարտեզում համապատասխան գործունեությունը լիարժեք իրականացնել: Առաջարկում ենք 2020 թվականի բյուջեում նախատեսել մակապարտեզի պատշգամբի վերանորոգումը, որը կարժենա մոտավորապես 8 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
102.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Վայոց ձորի մարզի Ագարակաձոր գյուղի մանկապարտեզը կառուցվել է 1980 թվականին, ունի 45 սան: Այժմ այն գտնվում է ոչ բարվոք վիճակում, 2005 թվականից ի վեր չի վերանորոգվել, ներկայումս անհրաժեշտ է կատարել մանկապարտեզի վերանորոգման ներքին հարդարման, սանհանգույցի նորոգման, պատուհանները, տանիքն ու հատակը փոխելու աշխատանքներ: Առաջարկում ենք 2020 թվականի բյուջեում նախատեսել մակապարտեզի վերանորոգումը, որը կարժենա մոտավորապես 30 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
103.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր	Վայոց ձորի մարզի Մալիշկա համայնքում բացակայում է վայր, որտեղ քաղաքացիներ կարող են անցկացնել իրենց	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հայաստան» խմբակցություն	հանգիստը, ինչես նաև մոտակա մանկապարտեզի սաների ցերեկային զբոսանքը: Համայնքը բավականին մեծ է՝ ունի մոտ 5.000 բնակիչ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեով նախատեսել Մալիշկա համայնքում զբոսայգու կառուցումը՝ 10 մլն ՀՀ դրամ արժեքով:	առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
104.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Նույն համայնքի ընթացմարտի դպրոցը սպասարկում է ամբողջ մարզը: Այն կառուցումից ի վեր չի հիմնանորոգվել, տանիքը կաթում է, դռներն ու լուսամուտները վաղուց անհրաժեշտ է փոխարինել, հանդերձարանները կիսավեր վիճակում են, սանհանգույցը գտնվում է անմխիթար վիճակում: Առաջարկում ենք 30-40 մլն ՀՀ դրամի սահմաններում պետական բյուջեից միջոցներ հատկացնել Մալիշկայի ընթացմարտի դպրոցի նորոգման և բարեկարգման համար:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
105.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի միջնակարգ դպրոցը վերջին անգամ վերանորոգվել է 2000 թվականին: Այն ունի 115 աշակերտ և ներկայումս անհրաժեշտություն է առաջացել այն կրկին նորոգելու: Առաջարկում ենք 2020 թվականի բյուջեում նախատեսել դպրոցի կապիտալ վերանորոգումը, որը կարժենա մոտ 15 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
106.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Վայոց ձորի մարզի Արտաբույնք, Շատին և Աղնջաձոր համայնքների մարզադպրոցները կառուցվել են խորհրդային տարիներին, ներկայումս մարզադպրոցների մարզասրահները պիտանի չեն շահագործման համար: Առաջարկում ենք 2020 թվականի բյուջեում նախատեսել այս մարզադպրոցների մարզասրահների վերանորոգումը, ինչը կարժենա մոտ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		38 մլն ՀՀ դրամ:	
107.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Վայոց ձորի մարզի Քարագուլիս գյուղի դպրոցի կառուցման ժամանակ տեղադրված ջեռուցման համակարգը նախատեսված է գազով աշխատելու համար, սակայն գյուղը գազաֆիկացված չէ: Առաջարկում ենք 2020 թվականի բյուջեում նախատեսել դպրոցի ջեռուցման համակարգի փոխարինումը, որը կարժենա մոտավորապես 7 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
108.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի թիվ 14 դպրոցն ունի 409 աշակերտ և այն գտնվում է անմխիթար վիճակում: Նշված դպրոցը կառուցվել է 1979 թվականին, Հրազդան քաղաքի միակ դպրոցն է, որը երբևէ չի հմնանորոգվել: Դպրոցի 2 մասնաշենքից միայն մեկն է մասնակի նորոգվել՝ փոխվել է այդ մասնաշենքի տանիքը, մասնաշենքը ջեռուցման համակարգով է ապահովվել: Դպրոցը քաղաքի կենտրոնում է, բայց աշակերտներ հաճախում են տարբեր թաղամասերից, քանի որ մանկավարժական կազմը լավ համբավ ունի: Սաների թիվը գնալով մեծանում է, մինչդեռ դպրոցը չունի դասապրոցեսի կազմակերպման համար պիտանի, վերանորոգված դասասենյակներ նոր աշակերտների համար: Հատակը քանդված է, մարզադահլիճը, դռներն ու պատուհանները, սանհանգույցը, շենքի ներքին միջնապատերը անհապաղ վերանորոգման կարիք ունեն, ինչպես նաև ընդհանուր ներքին հարդարման կարիք կա: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել դպրոցի վերանորոգումը, որը կարժենա մոտ 100 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
109.	ՀՀ Ազգային ժողովի	Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի Մեծ Մուրադի	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>անվան թիվ 4 հիմնական դպրոցն ունի ֆիզիկական կուլտուրայի դասընթացներն անցկացնելու համար նախատեսված սպորտդահլիճի կարիք: Աշակերտները զրկված են առարկան նախատեսված սպորտային տարածքում անցկացնելու հնարավորությունից, իսկ ձմռանն ընդհանրապես ստիպված կա՛մ դրսում են անցկացնում դասերը, կա՛մ ընդհանրապես առարկան չեն անցնում: Քանի որ դպրոցի բուն շինությունը փոքր է, սպորտդահլիճը նախագծվել է կառուցել որպես առանձին կառույց դպրոցի տարածքում: Սպորտային դահլիճի կառուցման համար 2 տարի առաջ կատարվել է նախահաշվարկ, ըստ որի՝ անհրաժեշտ է մոտ 50 մլն ՀՀ դրամ: Դպրոցն ինքնին գտնվում է անմխիթար վիճակում՝ տանիքը, պատուհանները և դասասենյակների հատակն ամբողջովին փոխելու խիստ անհրաժեշտություն կա (հատակը բետոնից է, երեխաներն ընկնելու դեպքում վնասվում են): Դպրոցի մասնակի և խիստ առաջնային բարեկարգման համար կպահանջվի մոտ 30 մլն ՀՀ դրամ: Այսպիսով առաջարկում ենք դպրոցի սպորտդահլիճի կառուցման և բարեկարգման համար անհրաժեշտ ընդհանուր մոտավոր արժեքը նախատեսել 2020 թվականի պետական բյուջեի նախագծով (ընդհանուր՝ 80 մլն ՀՀ դրամ):</p>	<p>պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:</p>
110.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի 300 տնտեսություն ունեցող Արագիլ թաղամասի բնակիչները մոտ 20 տարի առաջ կառուցել են 1կմ-անոց 100մմ մետաղյա խողովակաշարով ջրագիծ, այնուհետև պոմպակայան՝ այգիները ոռոգելու համար: Բնակչության թվի աճի հետ, ոռոգման ջրի սակավության պատճառով, որոշակի հատված ոռոգումը</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>


	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>կատարում է խմելու ջրի հաշվին, որն էլ արդեն չի բավականացնում բոլորի կարիքները հոգալու համար: Ըստ «Վեոլի Ջուր» ընկերության՝ խողովակաշարն անօրինական է և չի համապատասխանում տեխնիկական պայմանին, ինչի պատճառով ընկերությունը պատասխանատվություն չի կրում ջրի սակավության համար: Ջրի խնդիրը Արագիլ թաղամասում այդպես էլ տարիներ շարունակ չի լուծվում: Այսպիսով, առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին անցկացնել Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի Արագիլ թաղամասի ջրագիծը և այդպիսով լուծել թաղամասի 300 տնտեսությունների ջրամատակարարման հարցը:</p>	
111.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Արարատի մարզի Սուրենավան համայնքի Բարեկամության փողոցի բազմաբնակարան շենքերն ամեն ամիս խցանումների պատճառով հակասանիտարական վիճակում են հայտնվում, քանի որ կոյուղին մաշված է: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում ընդգրկել համայնքի Բարեկամության փողոցի բազմաբնակարանների կոյուղու 400 մետր հատվածի և 10 դիտահորի հիմնանորոգման աշխատանքները, ինչը գոնե ժամանակավորապես կբացառի խցանումներն ու հակասանիտարական վիճակը: Նշված աշխատանքների իրականացման համար կպահանջվի մոտ 4 մլն ՀՀ դրամ:</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>
112.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Գեղարքունիքի մարզի Ծովակ-Լճավան-Մաքենիս-Ախարածոր 14 կմ ճանապարհին անբարեկարգ է, իսկ վատ եղանակային պայմանների ժամանակ՝ անանցանելի: Տարիներ շարունակ բնակիչներին խոստացվել է միջհամայնքային ճանապարհի</p>	<p>Տես 52-րդ կետում նշված առաջարկության հիմնավորումը:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		կառուցման հարցն ընդգրկել բյուջեում, սակայն մինչ այժմ ոչինչ չի ձեռնարկվել: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում ընդգրկել նշված ճանապարհի բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքները, որոնք կկազմեն մոտ 1,2 մլրդ ՀՀ դրամ: Ընդգծենք, որ մի քանի համայնքներն իրար կապող այս ճանապարհի հիմնանորոգումը կարևոր է մարզի տնտեսական զարգացման համար:	
113.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Լոռու մարզի Մեծ Այրում համայնքի միջնակարգ դպրոցը շահագործվել է 1972 թվականին: 1989 թվականից դպրոցում սովորում են Ադրբեջանից հայ փախստականների երեխաները, մինչ այդ այն ադրբեջանական դպրոց էր: Դպրոցն ունի 110 սան: Այժմ կառավարության կողմից տրամադրված գումարով տանիքի վերանորոգվելու է տանիքը (3 կորպուս, 12 մլն ՀՀ դրամ): Դպրոցի դասասենյակները վատ վիճակում են, հատակը հիմնականում բացակայում է, պատուհանները ևս խիստ անբարեկարգ են՝ պոլիէթիլենով պատված, չկա ջեռուցման համակարգ, դասարանների մեծ մասում հին կիսաքանդ գույք է, անձրևները թափանցում են դասարաններ, պատերին կան մեծ ճաքեր: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում ընդգրկել նշված դպրոցի հիմնանորոգումը, որը կկազմի մոտ 300 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
114.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Լոռու մարզի Վահագնի համայնքն ունի շուրջ 1.000 բնակիչ, որից մոտ 40-ը նախադպրոցական տարիքի երեխաներն են, սակայն չի գործում նախադպրոցական ուսումնական հաստատություն և չկա մշակույթի տուն՝ շենքի բացակայության պատճառով: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել՝ Վահագնի համայնքում նախադպրոցական ուսումնական	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>հաստատության շենքի և մշակույթի տան կառուցում և կահավորում, որոնք համապատասխանաբար կարժենան մոտ 40-45 մլն և մոտ 165 մլն ՀՀ դրամ: Վահագնի համայնքում անբարեկարգ վիճակում են գտնվում մի շարք ներհամայնքային ճանապարհներ, ինչի պատճառներից է սելավատարների բացակայությունը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Վահագնի համայնքի 1.400մ2 ճանապարհի բարեկարգումը (1մ2՝ 7000 ՀՀ դրամ, ընդամենը՝ 9,8 մլն ՀՀ դրամ) և սելավատարների կառուցումը՝ 700մ և 300մ երկարությամբ (1մ՝ 8.000 ՀՀ դրամ արժողությամբ, ընդհանուր՝ 8 մլն ՀՀ դրամ):</p>	
115.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում ըղգրկել «Երևան քաղաքում Հրազդան գետի վրա ավտոճանապարհային կամրջի կառուցում և ավտոճանապարհի հիմնանորոգում (Դավթաշեն-Ջովունի-Թբիլիսյան խճուղի)» ծախսային ծրագիրը: Ներկայումս քաղաքի մեքենաներով ծանրաբեռնված լինելը նպաստում է խցանումների առաջացմանը, որոնք իրենց հետ բերում են մի շարք բացասական հետևանքներ: Նշված կամրջի և ճանապարհի կառուցումը թույլ կտա բեռնաթափել Կոմիտասի պողոտան, Վաղարշյան փողոցը, Դավթաշենի կամուրջը, Հալաբյան փողոցը, ինչպես նաև կթեթևացնի հոսքը Թբիլիսյան խճուղուց դեպի Աջափնյակ երթևեկողների համար: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել այս կամրջի կառուցումը և ավտոճանապարհի հիմնանորոգումը, որը կարժենա մոտավորապես 1,8 մլրդ ՀՀ դրամ:</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ քաղաքի ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>
116.	<p>ՀՀ Ազգային ժողովի</p>	<p>Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 2-րդ</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Թաղամասի վերջում՝ Աղաբաբյան-Միկոյան փողոցները կապող հանգույցի կառուցումը թույլ կտա վարորդներին Թբիլիսյան խճուղուց դուրս գալ դեպի Աշտարակի մայրուղի՝ շրջանցելով ծանրաբեռնված փողոցները: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում ներառել նշյալ ճանապարհի կառուցումը, որը կարժենա մոտավորապես 60 մլն ՀՀ դրամ:	անդրադառնալ հետազայում՝ քաղաքի ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
117.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Երևանում խցանումները նվազեցնելու և երթևեկությունը բեռնաթափելու համար առաջարկում ենք այս պետական բյուջեում նախատեսել Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Ազաթանգեղոսի փողոցների և Արշակունյաց պողոտայի հատման կետում էստակադաների համակարգի կառուցում (2,7 մլրդ ՀՀ դրամ), Ազատության պողոտան Թբիլիսյան խճուղուն կապող հատվածում՝ 1 էստակադայի կառուցում (2,2 մլրդ ՀՀ դրամ), Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոցում՝ Բեյրութի և Իտալիայի փողոցների հետ հատման մասում (Մյասնիկյանի արձանի դիմաց) թունելի կառուցում (4,5 մլրդ ՀՀ դրամ), որը հնարավորություն կտա արագացնելու երթևեկության ընթացքը քաղաքի կենտրոնում՝ շրջանցելով առկա 2 լուսացույցը:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետազայում՝ քաղաքի ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
118.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Առաջարկում ենք 2020 թվականի բյուջեում ներառել Իսակովի պողոտայից «Չվարթնոց» օդանավակայան տանող նոր շրջանցիկ ճանապարհի կառուցումը: Մ-5 միջպետական ճանապարհից «Չվարթնոց» օդանավակայան տանող ներկայիս ճանապարհին գտնվում են չգործող կազինոներ, վաճառատներ, և այդ ճանապարհով մայրաքաղաք մուտք գործելիս հյուրերն առաջինն այդ կառույցներն են տեսնում: Միաժամանակ կարագանա երթևեկությունը և կկրճատվի դեպի «Չվարթնոց» օդանավակայան տանող ճանապարհի	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետազայում՝ քաղաքի ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>տևողությունը: Այսպիսով, նոր ճանապարհի մի մասն անցնելու է Մ-5 միջպետական ճանապարհի վրայով, իսկ ճանապարհի մյուս մասն անցնելու է «Զվարթնոց» օդանավակայանին պատկանող տարածքով:</p> <p>Ճանապարհի կառուցման համար անհրաժեշտ կլինի մոտավորապես 17 մլրդ ՀՀ դրամ:</p>	
119.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում ներառել «Արտաճանապարհային ավտոսպորտի (off-road motorsport), «դրիֆթինգ» ավտոսպորտի, «դրագոբայինգ» ավտոմրցավազքի անցկացնում» ծախսային ծրագիրը, որի ընդհանուր բյուջեն կազմում է 1,425 մլրդ ՀՀ դրամ և կարող է իրականացվել պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում (PPP):</p> <p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս սպորտաձևը Հայաստանում գոյություն ունի և ավտոմրցարշավերի սիրահարներն այնուամենայնիվ զբաղվում են այս յուրատեսակ սպորտաձևով՝ այն օրինական ձևով ներդնելու պահանջարկ և անհրաժեշտություն գոյություն ունի: Դրա համար անհրաժեշտ են ոչ միայն հատուկ առանձնացված վայրեր, այլ նաև ավտոտեխսպասարկման և տեխնիկական կայաններ՝ ավտոմրցարշավների ապահով և անվտանգ անցկացման համար, որոնք մրցարշավերի անցկացման ընթացքում կարող են տրվել օրինական և հարկվող վարձակալության: Ամբողջ աշխարհում հատուկ ստեղծվում են նմանատիպ մրցարշավային վայրեր և զարգացնում ավտոմոտոսպորտը:</p> <p>Մրցաշավեր անցկացնելու համար հատուկ տարածքների հատկացման դեպքում՝ արտերկրից Հայաստան կժամանեն մարզիկներ իրենց մեծ թիմերով</p>	<p>Առաջարկությանը հնարավոր է անդրադառնալ առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>և հատուկ սահմանված գումար կվճարեն մասնակցության համար, որը տվյալ մրցարշավերի անկացման համար պարտադիր սահմանված գումար է (գումարի սահմանաչափը որոշում է տվյալ երկիրը, որն ընդունում է մարզիկներին):</p> <p>Էքստրեմալ սպորտի զարգացման համար ունենալով համալիր կառույց՝ կարթնացնենք նաև միջազգային հետաքրքրություն, որն իր հերթին հավելյալ ներհոսք կապահովի դեպի Հայաստան բոլորովին նոր թիրախային խմբերի համար:</p> <p>Ավտոմոտոսպորտի համար նախատեսված հատուկ վայրի նախագիծը՝</p>  <p>4*4 - Օֆֆ-ռոուդ S- Դրիֆթ D - Դռագոեյսի նգ</p> <p>1.425.000.000 ՀՀ դրամ</p>	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
120.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում ներառել Գեղարքունիքի մարզի Լիճք համայնքի հիմնական դպրոցի մասնակի վերանորոգման ծախսային ծրագիրը.</p> <p>դպրոցի պատուհան՝ 62 հատ - 3մ2, ընդամենը՝ 186մ2, գինը՝ 5.580.000 ՀՀ դրամ</p> <p>դահլիճի պատուհան՝ 6 հատ - 5մ2, ընդամենը՝ 30մ2, գինը՝ 900.000 ՀՀ դրամ</p> <p>դասասենյակի դուռ՝ 28 հատ - 3,6մ2, ընդամենը՝ 100,8 մ2, գինը՝ 4.032.000 ՀՀ դրամ</p> <p>մարզադահլիճի հատակ՝ 1 հատ - 200մ2, ընդամենը՝ 200մ2, գինը՝ 2.000.000 ՀՀ դրամ</p> <p>մարզադահլիճի ջեռուցման համակարգ, գինը՝ 2.000.000 ՀՀ դրամ</p> <p>դպրոցի և մարզադահլիճի տանիքի վերանորոգում, գինը՝ 2.500.000 ՀՀ դրամ</p> <p>ներքին հարդարման աշխատանքներ, գինը՝ 2.200.000 ՀՀ դրամ</p> <p>ընդամենը՝ 19.212.000 ՀՀ դրամ:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:</p>
121.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Առաջարկում ենք 2020 թվականին պետական բյուջեի միջոցներով նորոգել Արագածոտնի մարզի Օշական համայնքի մշակույթի պալատի դահլիճի բեմը, ապահովել բեմի լուսավորությունը, ջեռուցումը և վերանորոգել հանդերձասրահները (դահլիճն ունի 3 հանդերձասրահ): Աշխատանքներին պատրաստ են ներգրավվել համայնքի երիտասարդները՝ որպես կամավոր օգնական ուժ:</p> <p>Այս պահին Օշականի մշակույթի պալատում մշակութային կյանքը բավականին ակտիվ է: Այստեղ գործում է 5 խմբակ (ժողովրդական և ազգագրական պարերի, ժողգործիքների, ժամանակակից պարերի,</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>նկարչական, գրական խմբակներ), որտեղ հաճախում են 100-ից ավելի երեխաներ: Մշակույթի պալատում հաճախակի իրականացվում են տարաբնույթ միջոցառումներ, սակայն մշակույթի պալատի դահլիճի բեմը անմխիթար վիճակում է, իսկ բեմի լուսավորությունը գրեթե բացակայում է, բացի այդ հաստատություն հաճախող երեխաները հանդերձափոխվում են հանդերձարաններում, որտեղ չկան տարրական պայմաններ: Այս դահլիճում կարելի է կազմակերպել տարբեր միջհամայնքային և միջմարզային մշակութային միջոցառումներ, սակայն նախապատվությունը մշտապես տրվում է այլ կառույցների բարեկարգմանը: Այսօր շատ մշակութային միջոցառումների կազմակերպիչներ այցելում են հաստատություն, սակայն տեսնելով բեմի լուսավորության և հանդերձարանների անմխիթար վիճակը՝ հրաժարվում են այստեղ որևէ միջոցառում իրականացնելու գաղափարից:</p> <p>Պահանջվում է՝</p> <p>1,7 մլն ՀՀ դրամ հանդերձարանի, լուսավորության ու բեմի բարեկարգման համար և</p> <p>4 մլն ՀՀ դրամ՝ ամբողջական ջեռուցման համակարգի անցկացման համար:</p>	
122.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքը, որն ընդգրկում է 21 բնակավայր և ունի 25.000 բնակիչ, չունի մարզադպրոց և արվեստի դպրոց: Նշենք, որ Ապարանը Հանրապետության խոշորացված ամենամեծ համայնքն է, մշակութային և սպորտային կրթօջախի կառուցումը, որը սպասարկելու է մի ամբողջ շրջանի, չափազանց կարևոր է և արդարացված:</p> <p>Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Նախատեսել Ապարան համայնքի Գայի փողոցում գտնվող կիսակառույց մշակույթի տան շենքի կառուցման և հարդարման աշխատանքները՝ այն որպես համայնքի արվեստի և սպորտի դպրոց շահագործելու համար: Աշխատանքների իրականացման համար կպահանջվի մոտավորապես 500 մլն ՀՀ դրամ:</p>	
123.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Առաջարկում ենք այս տարի պետական բյուջեի միջոցներով նորոգել սահմանապահ Ոսկեվան գյուղի մշակույթի տունը, որի ամբողջական կապիտալ նորոգման համար պահանջվում է 22,7 մլն ՀՀ դրամ: Մշակութային օբյեկտը գտնվում է ամբողջովին անմխիթար, կիսաքանդ վիճակում: Սահմանապահ, սահմանամերձ և հեռավոր լեռնային գյուղերն ամենից շատ կարիք ունեն ներգրավվելու մշակութային կյանքում, քանի որ մինչ այսօր դրանց բնակչությունն անհաղորդ է մշակութային տարատեսակ իրադարձություններին և կտրված մայրաքաղաքի մշակութային զարգացումներից:</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>
124.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Տավուշի մարզի Ազատամուտ համայնքը խորհրդային ժամանակաշրջանում քաղաքատիպ ավան էր, ուներ բազմաբնակարան շենքեր, որոնք սեփականաշնորհվեցին և տրվեցին բնակիչներին: Ավելի քան 30 տարվա ընթացքում բազմաբնակարան շենքերը չեն հիմնանորոգվել և անընդհատ կարիք է լինում ընթացիկ վերանորոգումների: Այս շենքերում բնակվում է շուրջ 400 ընտանիք, որոնց մեծ մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ կամ գործազուրկ է: Բազմաբնակարան 10 շենքերի վերանորոգումը հնարավորություն կտա որոշ չափով բարելավել Ազատամուտի բնակիչների կենսապայմանները: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
125.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Ազատամուտ համայնքում որոշ աշխատանքներ տարվում են գերեզմանոցի բարեկարգման ուղղությամբ, սակայն անհրաժեշտ է այն ցանկապատել, որպեսզի խոշոր և մանր եղջերավոր անասունները չմտնեն գերեզմանոց: Հատկացումների մի մասը համայնքի ուժերով կարվի, սակայն ևս 5 մլն ՀՀ դրամի անհրաժեշտություն կա 2020 թվականին աշխատանքներն ավարտին հասցնելու համար: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Ազատամուտ համայնքի գերեզմանոցի ցանկապատի կառուցումը, որը կարժենա մոտ 5 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
126.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Ազատամուտ համայնքում դեպի դպրոց տանող ճանապարհը անբարեկարգ վիճակում է, ինչպես մյուս համայնքային նշանակության ճանապարհները: Դպրոցում կազմակերպվում են կրթական, մշակութային միջոցառումներ, հյուրընկալում այցելուների և առաջնային նշանակություն է ստացել դրա վերանոնոգումն ու ասֆալտապատումը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Ազատամուտի դպրոց տանող համայնքային ճանապարհի նորոգումը, որը կարժենա մոտ 70 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
127.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքը, ունենալով շուրջ 600 բնակիչ և գտնվելով մայրուղուց ընդամենը 2,8կմ հեռավորության վրա, այլ բնակավայրերի հետ կապի շատ դժվարություններ է ունենում: Գյուղում	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>արտադրված բերքը երբեմն հնարավոր չի լինում արագ ու անվնաս տեղափոխել իրացնելու կամ վաճառելու, տեղումների ժամանակ ճանապարհը գրեթե անանցանելի է դառնում մարդատար ավտոմեքենաների համար: Ճանապարհի հիմնանորոգումը հնարավորություն կտա գյուղի բնակիչներին արագ և անվտանգ կապ հաստատել արտաքին աշխարհի հետ՝ բարեկարգ ճանապարհով միանալով մայրուղուն: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքից մայրուղի տանող 2,8 կմ ճանապարհի հիմնանորոգումը:</p>	
128.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքում փողոցային լուսավորություն ունենալու խնդիրն արդիական է մանավանդ ուշ աշնան ու ձմռան ամիսներին, երբ շուտ է մթնում: Ներհամայնքային որոշ ճանապարհներ վերանորոգվել են, սակայն դեռ առկա լինելով է մնում լուսավորության հարցը: 7,5 մլն ՀՀ դրամով հնարավոր կլինի լուսավորել գյուղի կենտրոնն ու հիմնական փողոցները: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքի փողոցային լուսավորության անցկացումը:</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>
129.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Տավուշի մարզի Աճարկուտ համայնքը, ունենալով շուրջ 200 բնակիչ և գտնվելով մայրուղուց ընդամենը 2,4 կմ հեռավորության վրա, այլ բնակավայրերի հետ կապի շատ դժվարություններ է ունենում: Արդյունքում գյուղի բնակչությունը գնալով նվազում է, որովհետև առկա են մի շարք այլ դժվարություններ: Ճանապարհի հիմնանորոգումը հնարավորություն կտա գյուղի բնակիչներին արագ և անվտանգ կապ հաստատել արտաքին աշխարհի հետ, դեպի շուկա տեղափոխել</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		հավաքված բերքը՝ բարեկարգ ճանապարհով միանալով հիմնական մայրուղուն: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Աճարկուտ համայնքից մայրուղի տանող 2,4կմ ճանապարհի հիմնանորոգումը, որը կարժենա մոտ 180 մլն ՀՀ դրամ:	
130.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Աճարկուտ համայնքի համայնքապետարանը այժմ գործում է ժամանակավոր կացարանում, գյուղը չունի բուժկետ: Գյուղում առկա է դեռևս խորհրդային ժամանակներից առկա շինություն, որը կարելի է համապատասխան ձևով կառուցապատել և այնտեղ ունենալ և՛ համայնքապետարանի գրասենյակ, և՛ բուժկետ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Աճարկուտ համայնքի համայնքապետարանի շենքի կառուցումը, որը կարժենա մոտ 10 մլն ՀՀ դրամ: Այստեղ կտեղավորվի նաև գյուղի բուժկետը:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
131.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքը տարածաշրջանի մեծ գյուղերից է՝ շուրջ 3.000 բնակչով: Քանի որ բնակչությունը զբաղվում է հիմնականում այգեգործությամբ, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ, ծխախոտագործությամբ և անասնաբուծությամբ, բարեկարգ ճանապարհի առկայությունն ուղղակի անհրաժեշտություն է դառնում գյուղի համար: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքի 4կմ ճանապարհի հիմնանորոգումը, որը կարժենա մոտ 70 մլն ՀՀ դրամ:	Նշված ճանապարհատվածը հանրապետական նշանակության ճանապարհ է, ասֆալտապատ է և հիմնանորոգման անհրաժեշտություն չունի:
132.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր	Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքի մշակույթի տունը վերջին շրջանում գրեթե չի գործում, որովհետև գտնվում	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հայաստան» խմբակցություն	<p>Է անմխիթար վիճակում, երկար տարիներ չի վերանորոգվել, պահպանության ծախսեր գրեթե չեն արվել: Մեծ բնակչության թիվ ունեցող գյուղում մշակույթի տան գործունեությունը կարևոր է՝ երիտասարդության դաստիարակության, Հանրապետության մշակութային կյանքին առնչվելու առումով: Անհրաժեշտ է ամբողջությամբ փոխել մշակույթի տան տանիքը, ինչպես նաև վերանորոգել պատերը, առաստաղը, միջանցքը, փոխել գույքը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքի մշակույթի տան վերանորոգումը, որը կարժենա մոտ 150 մլն ՀՀ դրամ:</p>	<p>առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>
133.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Տավուշի մարզի Այրում համայնքի Դեբեդավան գյուղը, ունենալով շուրջ 800 բնակիչ, ընդհանրապես կտրված է աշխարհից, քանի որ ճանապարհը, որ կապում է Մ4 մայրուղու հետ, ընդհանրապես անանցանելի է: Ճանապարհի վերանորոգումը հնարավորություն կտա Դեբեդավանի բնակիչներին տեղափոխել իրենց բերքը, ինչպես նաև արագ ու որակյալ կապ ունենալ համայնքային կենտրոնի հետ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Այրում համայնք-Բագրատաշեն-Դեբեդավան 8կմ ճանապարհի վերանորոգումը, որը կարժենա մոտ 320 մլն ՀՀ դրամ:</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>
134.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Տավուշի մարզի Այրում համայնքի Արճիս գյուղի դպրոցի շենքը նախատեսված է 140 աշակերտի համար ու գտնվում է անմխիթար վիճակում, չի օգտագործվում մարզադահլիճը: Անհրաժեշտ է կապիտալ վերանորոգել դպրոցի 2 մասնաշենքերը, ինչպես նաև մարզադահլիճը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
135.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Այրում համայնքի Արճիս գյուղի մշակույթի տան տանիքը փլված է: Մշակույթի տան դահլիճը նախատեսված է 150 հանդիսատեսի համար: Անհրաժեշտ է կատարել ներքին հարդարման աշխատանքները, կառուցել բեմը, դրսից ամրացնել պատերը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Այրում համայնքի Արճիս համայնքի մշակույթի տան վերանորոգումը՝ 80 մլն ՀՀ դրամի սահմաններում:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
136.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Այրում համայնքի մշակույթ տունն այժմ նորոգման փուլում է, սակայն նախատեսված գումարները չեն բավականեցնելու նորոգումն ամբողջությամբ ավարտին հասցնելու համար: Նույն կարգավիճակում է նաև համայնքապետարանի շենքը, որը կիսակառույց է: Համայնքապետարանն այժմ գործում է 2 սենյակում՝ երաժշտական դպրոցի հետ միասին: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Այրումի մշակույթի տան և համայնքապետարանի վերանորոգումը, որը կարժենա մոտ 45 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
137.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Այրում համայնքի Պտղավանի մանկապարտեզի տանիքը փոխած է, ջեռուցումն անցկացված: Մանկապարտեզի շենքի ամբողջական կենսագործունեության համար պահանջվում է վերանորոգել դահլիճը և երեխաների մեծ ննջարանը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Պտղավանի մանկապարտեզի	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		վերանորոգումը, որը կարժենա մոտ 25 մլն ՀՀ դրամ:	
138.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Աչաջուր համայնքում մանկապարտեզը գործում է առավելագույնը 100 երեխայի համար, որովհետև կարելի է շահագործել միայն 1 հարկը: 2-րդ հարկը գտնվում է անբարեկարգ վիճակում և անհրաժեշտություն կա վերանորոգելու այն: Այս պահի դրությամբ բազմաթիվ ընտանիքների նախադպրոցական տարիքի երեխաներ հերթագրված են, որպեսզի մանկապարտեզ հաճախեն, սակայն շենքը հնարավորություն չի տալիս բոլորին ընդունել: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Աչաջուրի մանկապարտեզի վերանորոգումը, որը կարժենա մոտ 50 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
139.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Մակարավանքը գտնվում է Տավուշի մարզի Աչաջուր գյուղից ընդամենը 2,5կմ հեռավորության վրա, այն հայտնի զբոսաշրջիկներիության վայր է: Մակարավանք տանող ճանապարհի ասֆալտապատումը հնարավորություն է ընձեռնելու մեծացնել զբոսաշրջիկների հոսքը, ճանապարհի եզրին մատուցել տարբեր ծառայություններ, որոնք մեծ օգուտ կլինեն գյուղի բնակիչների համար: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Աչաջուրից Մակարավանք տանող 2,5կմ ճանապարհի վերանորոգումը, որը կարժենա մոտ 100 մլն ՀՀ դրամ:	ՀՀ Տավուշի մարզի Աչաջուրից Մակարավանք տանող 2,5կմ ճանապարհի վերանորոգման աշխատանքների իրականացման հնարավորության հարցը կքննարկվի 2020 թվականի բյուջետային տարվա ընթացքում՝ «1049. Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի «21001. Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակներում:
140.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Աչաջուր համայնքում մասնավորի ուժերով կառուցվել է մոտ 400մ երկարությամբ կոյուղի, սակայն անհրաժեշտ է առնվազն ևս 2կմ, որպեսզի գյուղի կենտրոնական մասերում կարողանանք ունենալ բարեկարգ վիճակ: Որոշ տներ կդառնան հյուրատներ, կունենան կոյուղի, որն անհրաժեշտություն է այս	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		պարագայում՝ հաշվի առնելով Մակարավանքի մոտիկությունը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Աջաջուրի 2կմ կոյուղու կառուցումը, որը կարժենա մոտ 20 մլն ՀՀ դրամ:	
141.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի մի շարք բնակավայրերում առաջնային է խմելու ջրի ներքին ցանցի խնդիրը: Բերդ խոշորացված համայնքի առաջնային խնդիրներից մեկը սահմանապահ Մոսեսագեղի շուրջ 2.100 բնակիչների խմելու ջրի հարցն է. գրեթե բացակայում է խմելու ջրի ներքին ցանցը: Գյուղը գտնվում է պետական սահմանից ընդամենը 1,5կմ հեռավորության վրա, անմիջական գնդակոծության տակ, և պետական աջակցությունը նման կարևորագույն կենսական խնդրի լուծման հարցում կարող է հանգեցնել շատ ավելի մեծ արդյունքների՝ կյանքի որակի զգալի բարելավման: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Բերդ համայնքի Մովսես գյուղի խմելու ջրի ներքին ցանցի կառուցումը, որը կարժենա մոտ 200 մլն ՀՀ դրամ:	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից արդեն իսկ շրջանառության մեջ է դրվել Մովսես բնակավայրի ջրամատակարարման համակարգի կառուցման ծրագրի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից գումար հատկացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ:
142.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Բերդ համայնքի առաջնային խնդիրներից հաջորդը Տավուշ գյուղի խմելու ջրի հարցն է: Շուրջ 1.600 բնակիչ ունեցող գյուղի խմելու ջրի ներքին ցանցն ունի հիմնանորոգման կարիք, բնակիչները չեն կարողանում օգտվել դրանից: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Բերդ համայնքի Տավուշ գյուղի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգումը, որը կարժենա մոտ 150 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
143.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր	Տավուշի մարզի սահմանամերձ Բերքաբեր գյուղը զրկված է խմելու ջրի ներքին ցանցից: Գյուղի շուրջ 500	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հայաստան» խմբակցություն	բնակիչ չի կարողանում տանը մշտական խմելու ջուր ունենալ: Ներքին ցանցի անցկացումը հնարավորություն է տալու լուծել բնակիչների խմելու ջրի խնդիրը, բարելավել նրանց կենցաղային պայմանները: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Բերքաբեր համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կառուցումը, որը կարժենա մոտ 20 մլն ՀՀ դրամ:	առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
144.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի սահմանամերձ Բերքաբեր գյուղի ոռոգման ջրի ամբարտակի հիմնանորոգումը և ներքին ցանցի կառուցումը հնարավորություն է տալու լուծելու շուրջ 100 տնտեսության ոռոգման ջրի հարցը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Բերքաբեր համայնքի ոռոգման ջրի ամբարտակի հիմնանորոգումը և ներքին ցանցի կառուցումը, որը կարժենա մոտ 30 մլն ՀՀ դրամ:	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ՀՀ կառավարության N 1073-Ն որոշմամբ նախատեսված ծրագրերի շրջանակներում, իրականացվում են Բերքաբերի ոռոգման համակարգի 6,2 կմ ջրագծի կառուցման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2020 թվականին:
145.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Գանձաքար համայնքում ոռոգման համակարգ չի գործում, մինչդեռ նորմալ գործունեության պարագայում էականորեն կավելանա բերքատվությունը, կկարգավորվի գյուղատնտեսական հողատարածքների ոռոգումը: 30 մլն ՀՀ դրամով հնարավոր կլինի կարգի բերել գյուղի ոռոգման համակարգը և նպաստել գյուղատնտեսության ոլորտի առաջանցիկ զարգացմանը, գյուղմթերքի արտադրությանը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Գանձաքար համայնքի ոռոգման համակարգի կառուցումը, որը կարժենա մոտ 30 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
146.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր	Տավուշի մարզի շուրջ 3.500 բնակիչ ունեցող Գանձաքար համայնքում գրեթե չի գործում մշակույթի	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հայաստան» խմբակցություն	տունը: Այն վերանորոգման կարիք ունի. անհրաժեշտ է հարդարել դահլիճի պատերը, առաստաղը, փոխել հատակը, վերանորոգել միջանցքն ու բեմը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Գանձաքար համայնքի մշակույթի տան վերանորոգումը, որը կարժենա մոտ 10 մլն ՀՀ դրամ:	առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
147.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Գանձաքար համայնքում ընդամենը 10 մլն ՀՀ դրամով հնարավոր կլինի ապահովել կենտրոնական փողոցների լուսավորությունը: Այն անհրաժեշտ է հատկապես աշնանային ու ձմեռային ամիսներին, երբ ցերեկը կարճ է, իսկ բնակիչները տուն վերադառնում են արդեն մութ ժամանակ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Գանձաքար համայնքի փողոցային լուսավորության անցկացումը:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
148.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Գետահովիտ համայնքի գյուղապետարանի շենքում են գործում նաև մանկապարտեզը և ամբուլատորիան: Շենքի վերանորոգումը թույլ կտա պատշաճ մակարդակի հասցնել ինչպես գյուղապետարանի, այնպես էլ մանկապարտեզի և ամբուլատորիայի աշխատանքների կազմակերպումը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Գետահովիտի համայնքապետարանի վերանորոգումը, որը կարժենա մոտ 25 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
149.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի շուրջ 2000 բնակիչ ունեցող Գետահովիտ գյուղում ներհամայնքային որոշ ճանապարհներ անմխիթար վիճակում են: Աշնան և ձմռան ամիսներին այդ ճանապարհները անանցանելի	Մ4-Գետահովիտ կմ 0+000 - կմ 1+404.71 ճանապարհահատվածի վերանորոգումը նախատեսվում է իրականացնել Համաշխարհային բանկի Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Են դառնում մարդատար ավտոմեքենաների համար: Մոտ 8կմ ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը/խճապատումը հնարավորություն կտա բնակիչներին ու հյուրերին հանգիստ տեղաշարժվել համայնքում: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Գետահովիտ համայնքի ներհամայնքային ճանապարհների խճապատումը, որը կարժենա մոտ 4 մլն ՀՀ դրամ:</p>	<p>Ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում ծրագրի շրջանակներում: Աշխատանքները սկսվել են 2019թ.-ին և շահագործման կհանձնվի 2020թ.-ին:</p>
150.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Տավուշի մարզի խոշորացված Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի մշակույթի տունը գտնվում էր անմխիթար վիճակում և չէր գործում: Տարիներ առաջ դահլիճը հրդեհվել է, ոչնչացել է ողջ գույքը: Համայնքային միջոցներով հնարավոր է եղել վերանորոգել տանիքը, որպեսզի ընդհանրապես շարքից դուրս չգա: Մշակույթի տան հիմնանորոգումը թույլ կտա Թեղուտում ունենալ 300 նստատեղով մշակույթի պալատ, որը կծառայի համայնքի բնակչության մշակութային կյանքի աշխուժացմանը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Թեղուտի մշակույթի պալատի վերանորոգումը, որը կարժենա մոտ 200 մլն ՀՀ դրամ:</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>
151.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Դիլիջանը Հանրապետության և Տավուշի մարզի կարևոր քաղաքներից մեկն է, սակայն մշակույթի տունը չի գործում, որովհետև հիմնանորոգման խիստ կարիք ունի: Հարկավոր է փոխել տանիքը: Մշակույթի պալատի 550 նստատեղով դահլիճի վերանորոգումն ու կրկին գործարկումը թույլ կտա աշխուժացնել քաղաքի մշակութային կյանքը, կազմակերպել տարբեր բնույթի միջոցառումներ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Դիլիջանի մշակույթի</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		պալատի վերանորոգումը, որը կարժենա մոտ 350 մլն ՀՀ դրամ:	
152.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Դիլիջան համայնքի Գոշ գյուղում նախկինում գործել է մանկապարտեզ, սակայն այնտեղ բնակության են տեղափոխվել այն ընտանիքները, որոնց առանձնատները գտնվում էին սողանքային գոտում (նորոգումը թույլ կտա ընտանիքներին տեղափոխել մանկապարտեզի այլ մասնաշենք): Այժմ ավելի քան 40 երեխա Գոշ գյուղում հնարավորություն չունի մանկապարտեզ հաճախելու: Առաջարկում ենք 2020 թվականի բյուջեում նախատեսել Գոշ գյուղի մանկապարտեզի վերանորոգումը, որը կարժենա մոտ 40 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
153.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Դիլիջան համայնքը ԵՄ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կարողացել է ձեռք բերել 5 հատ մերսեդես մակնիշի միկրոավտոբուսներ, որոնք ապահովում են Դիլիջանի կապը շրջակա գյուղերի հետ: Այժմ անհրաժեշտ է ունենալ առնվազն 3 ավտոբուս, որոնք կկարողանան բնակիչներին տեղափոխել քաղաքի մի ծայրից մյուսը (քաղաքը տարածված է շուրջ 10 կմ): Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Դիլիջան համայնքի համար 3 ավտոբուսների ձեռքբերումը, որը կարժենա մոտ 100 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
154.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Դիտավան համայնքը, լինելով ոչ մեծ բնակչություն ունեցող գյուղ, չունի մեծ հնարավորություններ սեփական բնակիչների համար: Այս պարագայում կարևոր գործոն է դառնում լավ որակի ճանապարհը: Այն այժմ գտնվում է անմխիթար վիճակում, մինչդեռ դրա հիմնանորոգումը	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>հնարավորություն կտա գյուղի բնակիչներին և հյուրերին ազատորեն կապ պահպանել արտաքին աշխարհի հետ և՛ ամռանը, և՛ ձմռանը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Դիտավան համայնքի 3,1կմ ճանապարհի հիմնանորոգումը, որը կարժենա մոտ 400 մլն ՀՀ դրամ:</p>	
155.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Տավուշի մարզի Ենոքավան համայնքը վերջին շրջանում դարձել է Հանրապետության հայտնի բնակավայրերից մեկը: Դա նպաստել է այն բանին, որ մեծանա զբոսաշրջիկների հոսքը, բացվել են հյուրատներ: Մյուս կողմից գյուղում հնարավոր չի ապահովել 24-ժամյա խմելու ջրի մատակարարում: Դա ունենալու համար անհրաժեշտ է մոտ 8կմ հեռավորությունից գյուղ բերել նոր ջրագիծ: Այս պարագայում հնարավոր կլինի ապահովել մշտական ջրամատակարարում, ինչից անընդհատ դժգոհում են հյուրատներն ու արտասահմանցի այցելուները: Առաջարկում ենք 2020 թվականի բյուջեում նախատեսել Ենոքավանի 8կմ խմելու ջրի ջրագծի կառուցումը, որը կարժենա մոտ 170 մլն ՀՀ դրամ:</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>
156.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Տավուշի մարզի Լուսահովիտ համայնքն իր մոտ 400 բնակիչներով ունի մի շարք դժվարություններ, սակայն խմելու ջրի ցանցի բացակայությունը ամենակարևորն է: Ցանցի վերանորոգումը հնարավորություն կտա գյուղի բնակիչներին իրենց տներում/բակերում ունենալ խմելու ջուր, առանց որի նրանք ստիպված ջուր են կրում բավականին հեռու աղբյուրներից: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Լուսահովիտ համայնքի խմելու ջրի ցանցի կառուցումը, որը կարժենա մոտ 4 մլն ՀՀ դրամ:</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
157.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Լուսաձոր համայնքում այժմ առկա է դեպի արոտավայրեր տանող ճանապարհ, որը շատ երկար է և անցնում է մի քանի գյուղով: Կարճ ճանապարհի հիմնանորոգումը հնարավորություն է տալու խոտհարկներից գյուղ տեղափոխել հավաքված խոտը շատ կարճ ժամանակաընթացքում: Այս ճանապարհից կկարողանան օգտվել նաև հարևան գյուղերի բնակիչները: Նոր ճանապարհը կարող է լինել խճապատ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Լուսաձոր համայնքից արոտավայր տանող ճանապարհի կառուցումը, որը կարժենա մոտ 2 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
158.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի շուրջ 2.000 բնակիչ ունեցող Խաշթառակ համայնքը հայտնի է «Մենք ենք, մեր սարերը» գեղավեստական ֆիլմից, որը նկարահանվել է այս գյուղում: Մինչդեռ մշակույթի տունը նորոգման խիստ կարիք ունի. անհրաժեշտ է հարդարել դահլիճի պատերը, առաստաղը, փոխել հատակը, վերանորոգել միջանցքն ու բեմը: Մշակույթի տան նորմալ գործունեությունը հնարավորություն կտա բնակիչներին անմիջական առնչություն ունենալ մշակույթի հետ, կազմակերպել կրթական ու մշակութային միջոցառումներ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Խաշթառակի մշակույթի տան վերանորոգումը, որը կարժենա մոտ 260 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
159.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Ծաղկավան համայնքում (Իջևան) ոռոգման ջուրը չի բավականացնում: Այդ ջրի քանակն ավելացնելու պարագայում էականորեն կավելանա բերքատվությունը: 40 մլն ՀՀ դրամով հնարավոր կլինի ավելացնել ոռոգման ջուրը, կարգի բերել գյուղի	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ոռոգման համակարգը և նպաստել գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը, գյուղմթերքի արտադրությանը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Ծաղկավանի ոռոգման ջրագծի կառուցումը:	
160.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Ծաղկավան համայնքի մանկապարտեզը գտնվում է անմխիթար վիճակում և զուրկ է կենցաղային տարրական պայմաններից: Այն անհարժեշտ է վերանորոգել, քանի որ մինչև 100 նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված այլ համապատասխան հաստատություն չկա: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Ծաղկավան համայնքի մանկապարտեզի վերանորոգումը, որը կարժենա մոտ 30 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
161.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Կիրանց համայնքը դպրոց չունի և դպրոցահասակ երեխաները ստիպված այցելում են հարևան գյուղի միջնակարգ դպրոց: Այս հանգամանքը նպաստում է գյուղից արտագաղթին, որը կարող է բերել առանց այդ էլ փոքրաթիվ բնակչությամբ գյուղի վերացմանը: Անհապաղ պետք է կառուցել նոր դպրոց, որտեղ կսովորի մինչև 50 երեխա: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Կիրանց համայնքի նոր դպրոցի կառուցումը, որը կարժենա մոտ 450 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
162.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Կիրանց համայնքը մինչ այժմ գազիֆիկացված չէ և այս հանգամանքը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում գյուղի բնակիչների համար: Նորմալ կենցաղային պայմաններն ապահովելու նպատակով անհրաժեշտ է բնական գազի	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
163.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Կողբ համայնքում վերջերս դրվել ու գործարկվել է պոմպակայան, որը կարող է ապահովել բնակավայրի խմելու ջրի ողջ պահանջարկը, սակայն դեռ լուծված չէ ներքին ցանցով ապահովման հարցը: Համայնքի ուժերով կառուցվել է մոտ 6կմ երկարությամբ խողովակաշար, սակայն դրանից առնվազն 4-5 անգամ ավելի կարիքը դեռևս կա: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Կողբ համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կառուցումը, որը կարժենա մոտ 200 մլն ՀՀ դրամ և որից կօգտվի 1.100 տնտեսություն:	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով Կողբ համայնքին, ԱՄՆ ՄԶԳ ծրագրի շրջանակներում տրամադրվել են էքսկավատոր, բեռնատար և տեխոզնության մեքենա, որոնց շնորհիվ համայնքի ուժերով կառուցվել է 6 կմ խողովակաշար: Ձևավորված կարողությունների շնորհիվ համայնքի կողմից հնարավոր է ապահովել խմելու ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքների շարունակական ընթացքը: Հավելենք նաև, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից, նույն ծրագրի շրջանակներում, նախատեսվում է Կողբի նշված պոմպակայանի վրա տեղադրել արևային կայան, որը էականորեն կնվազեցնի 1 խ/մ ջրի ինքնարժեքը:
164.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Կողբ համայնքի երաժշտական դպրոցի շենքը գտնվում է վթարային վիճակում, չնայած դրան՝ այնտեղ սովորում է շուրջ 100 երեխա: Վերջերս համայնքի ուժերով հնարավոր է եղել փոխել դպրոցի դռներն ու լուսամուտները, սակայն հիմնանորոգման խիստ կարիք կա: Հարկավոր է ամբողջությամբ փոխել տանիքը, նորոգել հատակը, պատերը, միջանցքը, դահլիճը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Կողբ համայնքի երաժշտական դպրոցի վերանորոգումը, որը կարժենա մոտ 25 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
165.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Բերդավան գյուղի դպրոցը ավելի քան 15 տարի չի նորոգվել, միայն տանիքն է նորոգվել՝ արտասահմանյան նվիրատվություններով: Դպրոցն ունի 2 մասնաշենք,	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		որից 1-ն անմխիթար վիճակում է: Նախատեսվում է վերանորոգել միայն այդ մասնաշենքը: Սահմանապահ այս գյուղի դպրոցում սովորում է 370 աշակերտ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Նոյեմբերյան համայնքի Բերդավան գյուղի դպրոցի վերանորոգումը, որը կարժենա մոտ 190 մլն ՀՀ դրամ:	միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
166.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Դովեղ գյուղում մինչև 5.000մ3 ջրամբարի կառուցումը հնարավորություն է տալու ոռոգելի դարձնել ավելի քան 100հա հողատարածք, որը հնարավորություն է տալու գյուղացիներն ստանալ ավելի որակյալ ու շատ բերք: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Նոյեմբերյան համայնքի Դովեղ գյուղում ոռոգման ջրի ջրամբարի կառուցումը, որը կարժենա մոտ 80 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
167.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Բերդավան գյուղում նախատեսվում է ամառային սեզոնի ջրի պակասուրդը լրացնել խորքային ջրերի օգտագործմամբ: Այդ հորերը նախատեսվում են հայ-ադրբեջանական սահմանից 150 մետր հեռավորության վրա՝ Կողբ գետի ափին: Հավելենք, որ խորքային ջրերը կուտակվում են ադրբեջանական հատվածում, որը կարող են մենք օգտագործել և ջրղի դարձնել 80 հա տարածք: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Նոյեմբերյան համայնքի Բերդավան գյուղում ոռոգման ջրի խորքային հորերի կառուցումը, որը կարժենա մոտ 16 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
168.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր	Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Բերդավան գյուղում գյուղնշանակության հողատարածքների մեծ	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	Հայաստան» խմբակցություն	հատված ընդհանրապես ոռոգելի չէ՝ ոռոգման համակարգի բացակայության պատճառով: Հնարավոր է ոռոգելի դարձնել 180հա հողատարածք, որի արդյունավետությունը, հաշվի առնելով հողի բարձր որակը, մի քանի տարվա մեջ տալու է ներդրված գումարի վերադարձ: Ոռոգման ջրի ջրամբարի ծավալը նախատեսված է 8.000մ3: Բերդավանի հողատարածքների համար նախատեսված ոռոգման ջրի ջրամբարի վերանորոգման համար կպահանջվի 60 մլն ՀՀ դրամ և 2,3կմ ոռոգման ջրի ջրագծի հիմնանորոգման համար՝ 200 մլն ՀՀ դրամ: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Նոյեմբերյան համայնքի Բերդավան գյուղում ոռոգման ջրի ջրամբարի վերանորոգում և ջրագծի հիմնանորոգում, որը կարժենա 260 մլն ՀՀ դրամ:	մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
169.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Կոթի գյուղում ջրամբարի կառուցումը հնարավորություն է տալու ոռոգելի դարձնել ավելի քան 240հա հողատարածք, որից 220հա Կոթիում և ավելի քան 20հա Ոսկեվանում: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Նոյեմբերյան համայնքի Կոթի գյուղում ոռոգման ջրի ջրամբարի կառուցումը, որը կարժենա մոտ 100 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
170.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Կոթի գյուղում խորքային հորերի կառուցումը հնարավորություն է տալու Կոթիի 1.950 բնակչի ունենալու խմելու ջուր: Սահմանամերձ գյուղի համար սա օրհասական նշանակություն ունի: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Նոյեմբերյան համայնքի Կոթի գյուղում խմելու ջրի խորքային հորերի	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		կառուցումը, որը կարժենա 15 մլն ՀՀ դրամ:	
171.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Կոթի գյուղի մշակույթի տան տանիքը վորանորոգված է, սակայն այն ամբողջությամբ օգտագործելու համար անհրաժեշտ է վերանորոգել նաև պատերը, առաստաղը, հատակը, բեմը, ինչպես նաև ձեռք բերել աթոռներ: Այն հնարավորություն կտա գյուղի բնակիչներին անմիջական առնչություն ունենալ մշակույթի հետ, հյուրընկալել մշակութային խմբեր և մեկ հարկի տակ համախմբել ավելի քան 200 բնակչի: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Նոյեմբերյան համայնքի Կոթի գյուղի մշակույթի տան վերանորոգումը՝ 45 մլն ՀՀ դրամ արժեքով:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
172.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի Բերդասարի 3 հասցեում գտնվող 2 կիսակառույց բնակելիների շինարարության ավարտը հնարավորություն է ընձեռելու նոյեմբերյանցի կարիքավոր շուրջ 30 ընտանիքի ունենալու սեփական տանիքը: Շենքերի շինարարությունն սկսվել է 80-ական թվականներին և կիսատ մնացել ԽՍՀՄ փլուզումից հետո: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Նոյեմբերյան քաղաքի Բերդասարի 3 հասցեում գտնվող 2 կիսակառույց բնակելի շենքերի շինարարությունը, որը կարժենա մոտ 450 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
173.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի մշակույթի տունը գործում է, սակայն չունի ջեռուցման համակարգ: Տարվա կեսից ավելին այն չի օգտագործվում: Անհրաժեշտ է վերանորոգել մշակույթի տան դահլիճի հատակը, միջանցքը: Մշակույթի տունը տեղավորում է 220 հոգի: Առաջարկում ենք 2020 թվականի պետական	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		բյուջեում նախատեսել Նոյեմբերյան քաղաքի մշակույթի տան հիմնանորոգումը՝ 30 մլն ՀՀ դրամի սահմաններում:	
174.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Բաղանիս գյուղի խորքային հորերի կառուցումը հնարավորություն է տալու Բաղանիսի շուրջ 800 բնակչի ունենալու խմելու ջուր: Սահմանամերձ գյուղի համար սա կարևոր նշանակության խնդիր է: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Նոյեմբերյան համայնքի Բաղանիս բնակավայրի խմելու ջրի խորքային հորերի կառուցումը, որը կարժենա մոտ 15 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
175.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ոսկեվան գյուղի 250 տեղանոց մշակույթի տունը գործում է, սակայն երկար չի կարողանա շարունակել, որովհետև ֆիզիկապես մաշված վիճակում է: Անհրաժեշտ է վերանորոգել հատակը, նստարանները, առաստաղը, փոխել էլեկտրական հոսանքի լարերը: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Նոյեմբերյան համայնքի Ոսկեվան գյուղի մշակույթի տան հիմնանորոգումը՝ 35 մլն ՀՀ դրամ արժեքով:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
176.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Սարիգյուղն իր մոտ 1.250 բնակիչներով Տավուշի մարզի միջին չափի գյուղերից է: Գյուղն ունի բարեբեր գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ, որոնց մի մասն է միայն ոռոգվում: 4կմ հեռավորությունից գետի ջուրը բերելու դեպքում էապես կավելանան ոռոգվող հողատարածքները, ինչպես նաև բերքատվությունը: 2020 թվականի բյուջեից պահանջվելու է մոտ 20 մլն ՀՀ դրամ ոռոգման ջրի ջրագծերի կառուցման ու ցանցավորման համար:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
177.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Սևքար բնակավայրը ծավալված է Աղստև և Սևքար գետերի միջև՝ ծովի մակերևույթից 800մ բարձրության վրա, սակայն զրկված է խմելու ջրի ներքին ցանցից: Ավելի քան 2.000 բնակիչ ունեցող գյուղի բնակիչները խմելու ջուրը տուն բերում են որոշակի հեռավորության վրա առկա աղբյուրներից, ինչը դժվար է հատկապես ձմռան ամիսներին: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Տավուշի մարզի Սևքար համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կառուցումը, որը կարժենա մոտ 150 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
178.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Վազաշեն համայնքը իր մոտ 700 բնակիչներով գտնվում է սահմանից ընդամենը 1կմ հեռավորության վրա: Վազաշենը սահմանապահ գյուղ է, գտնվում է թշնամու կրակի տակ: Գյուղատնտեսական նշանակության հողատարածքների մեծ մասը հնարավոր չէ օգտագործել անվտանգության նկատառումներից ելնելով: Այն հողատարածքները, որոնք օգտագործելու համար համեմատաբար անվտանգ են, ունեն ոռոգման ջրի խնդիր, որ կարող է լուծվել ջրամբարի կառուցմամբ: 2020 թվականի բյուջեից պահանջվելու է մոտ 80 մլն ՀՀ դրամ ջրամբարի շինանարությունն ավարտին հասցնելու համար:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
179.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Սահմանապահ Վազաշեն համայնքի համար կարևոր նշանակություն ունի համայնքային նշանակության ճանապարհների բարվոք վիճակը: Սակայն դրանք առայժմ գտնվում են անմխիթար վիճակում: 2020 թվականի բյուջեից պահանջվելու է ընդամենը 8 մլն ՀՀ դրամ համայնքային նշանակության ճանապարհների սալապատման համար:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
180.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Երևանի Գուրգեն Մարգարյանի անվան թիվ 94 ավագ դպրոցն ունի վերանորոգման կարիք, որի համար անհրաժեշտ է մոտ 20 մլն ՀՀ դրամ: Դպրոցն ունի 50 տարվա պատմություն, երբեք չի վերանորոգվել, իսկ գույքն օգտագործվում է 1968 թվականից ի վեր, պատուհանները փայտից են, դռները փոխելու անհրաժեշտություն ունեն, ողջ էլեկտրական լարերը պետք է փոխարինվեն նորերով, հանդիսությունների դահլիճը վերանորոգման և պատշաճ կերպով շահագործման կարիք ունի, չունի համապատասխան օգտագործման գույք:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
181.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Երևանի Միքայել Նալբանդյանի անվան թիվ 33 հիմնական դպրոցի շենքը կառուցվել է խորհրդային տարիներին և պանելային է, 1988 թվականի երկրաշարժի ժամանակ հիմնական պանելները խարխլվել են, ինչի պատճառով հեռացել են իրարից: Շենքն ունի մալուխի և կոյուղաջրերի խնդիր: Եղանակային վատ պայմաններից դեպքում տանիքը կաթում է, իսկ մարզադահլիճը գտնվում է քարուքանդ վիճակում, պատուհան անգամ չկա այնտեղ: Դպրոցն ունի վերանորոգման կարիք, որը մոտավոր կարժեճա մոտ 10 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
182.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Առաջարկում ենք Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում նախատեսել 2 նոր՝ համայնքային ներկայացուցչի և մասնագետի հաստիքներ: Երևանի քաղաքապետարանի, համայնքներում համայնքապետարանների կողմից իրականացվող ոչ պատշաճ կամ անհարկի վարչարարության, ինչպես նաև համայնքում ծագող և վերջինիս լիազորություններից բխող շատ խնդիրների դեպքում քաղաքացիներին անհրաժեշտ է պաշտպանություն, որը պետք է	Տես 32-րդ կետում նշված առաջարկության հիմնավորումը:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>իրականացվի օպերատիվ և պրոֆեսիոնալ: Այն դիտարկում ենք Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի լիազորությունների և հնարավորությունների շրջանակում և առաջարկում այս նպատակի համար ներգրավել նշյալ մասնագետներին: Պաշտպանի շխատակազմը 2 նոր հաստիքով համալրելու համար բյուջեից կպահանջվի 12-14 մլն ՀՀ դրամ:</p>	
183.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հիմնական կենսաթոշակը 16.000 ՀՀ դրամ է (2010, 1734-Ն): Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակին տրվում է հավելում, որն 1-ին խմբի համար հիմնական կենսաթոշակի 40%-ն է կազմում, այսինքն՝ ընդամենը 22.400 ՀՀ դրամ: Ներկայումս որոշված է, որ Հանրապետությունում 25.500 ՀՀ դրամից պակաս կենսաթոշակ որևէ մեկը չի ստանալու և ըստ այդմ՝ նրանք ստանում են այդ նվազագույնը, սակայն համաձայն Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի հայտնած տվյալների՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2019 թվականի 3-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ ըստ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի, կազմել է ամսական 60.394,2 ՀՀ դրամ¹: Ընդ որում, այստեղ չեն հաշվարկված հատկապես հաշմանդամներին անհրաժեշտ դեղորայքային և այլ առաջնային ծախսերը: Գաղտնիք չէ, որ 1-ին խմբի հաշմանդամները սոցիալապես ամենախոցելի խումբն են և հիմնականում</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվում: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված են հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակին տրվող հավելումների չափերը՝ հաշվարկված աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի նկատմամբ տոկոսով (առաջին խմբի համար՝ 40%, երկրորդ խմբի համար՝ 20%): Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ այդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված աշխատանքային կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել Կառավարության սահմանած նվազագույն կենսաթոշակի չափից: Ըստ այդմ, 1-ին խմբի համար հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի նվազագույն չափը կազմում է 25500+6400=31900 դրամ: ՀՀ կառավարության ծրագրի 4.2-րդ մասի համաձայն, պարբերաբար բարձրացվելու են պետական կենսաթոշակների չափերը՝ ապահովելով միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ գնաճի նկատմամբ: Այս ծրագրային դրույթին համապատասխան, գնաճի նկատմամբ միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ</p>

¹ https://www.armstat.am/file/article/sv_09_19a_6200.pdf

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>100% անաշխատունակ: Հայաստանի Հանրապետությունը, համաձայն Սահմանադրության 1-ին հոդվածի, սոցիալական պետություն է, ինչը սակայն, բացարձակապես հակադարձվում է հաշմանդամներին տրվող սոցիալական օգնության ոլորտում, քանի որ այն գումարը, որը վճարվում է 1-ին խմբի հաշմանդամներին ուղղակի սիմվոլիկ բնույթ է կրում և անգամ նրանց գոյության ապահովման համար բավարար չէ:</p> <p>Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը խմբագրել այնպես, որ 1-ին խմբի հաշմանդամներն ամսական ստանան առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքին համարժեք (60.400 ՀՀ դրամից ոչ պակաս) կենսաթոշակ:</p>	<p>ապահովելու նպատակով պետական կենսաթոշակների չափերի ավելացումը ՀՀ 2020-2022 թթ. ՄԺԾԾ-ով սահմանվել է, որպես սոցիալական ոլորտի ծախսային գերակայություն /2020թ. համար նախատեսվում է կենսաթոշակների միջին ամսական չափի աճ շուրջ 10 տոկոսով/:</p> <p>Ընդ որում, հարկ է նշել, որ կենսաթոշակները չեն հիմնվում շահառուների կարիքների գնահատման վրա, այլ փոխկապակցված են աշխատանքային գործունեությանը, ուստիև դրանց չափը հաշվարկվում է աշխատանքային ստաժի հիման վրա:</p> <p>Բացի այդ, 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային կենսաթոշակների չափերի միակողմանի բարձրացումը սոցիալական արդարության տեսանկյունից ընդունելի լուծում չէ: Սա նշանակում է, որ աշխատանքային կենսաթոշակի չափի ավելացումը պետք է ուղեկցվի նաև զինվորական կենսաթոշակների չափերի ավելացմամբ:</p> <p>Եթե առաջարկը հաշմանդամություն ունեցող անձանց՝ հաշմանդամությամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցման նոր համակարգի ներդրման մասին է, ապա այն չի կարող հաշվարկվել նվազագույն սպառողական զամբյուղով՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական տարբեր խմբերի պատկանելու հանգամանքը: Հաշմանդամությամբ պայմանավորված ծախսերի (օր.՝ տրանսպորտի ընտրությամբ, սննդային հակացուցումներով, անձնական օգնական ունենալու և այլ հանգամանքներով պայմանավորված ծախսերը) գնահատումը հնարավոր կլինի դիտարկել միայն անձի ֆունկցիոնալ գնահատման բարեփոխումների ավարտից հետո:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>Հարկ է նաև նկատի ունենալ, որ ներկայումս սոցիալական պաշտպանության համակարգի այլ բնագավառներում իրականացվում են բարեփոխումներ՝ նպատակ ունենալով զարգացնել կարիքի գնահատման վրա հիմնված ծառայությունների մատուցման համակարգը: Մասնավորապես՝ խնդիր է դրվել բարելավել հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների որակը և ընդլայնել այդ ծառայությունների կազմը: Ելնելով վերոգրյալից՝ 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային կենսաթոշակների չափերը 60,400 դրամից ոչ պակաս սահմանելը նպատակահարմար է:</p>
184.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Առաջարկում ենք սոցիալական փաթեթով ապահովման ծրագրի շահառուների ցանկում ընդգրկել նախակրթարանների դաստիարակներին: Վերջիններիս թիվը 3533 հոգի է: Նրանք այսօր Հանրապետությունում ամենացածր վճարվող աշխատակիցներն են՝ ստանում են հիմնականում նվազագույն աշխատավարձ, եթե 1 դրույքով են աշխատում: Որոշ համայնքներում դաստիարակներն աշխատում են 0,5 կամ 0,75 դրույքով՝ վարձատրվելով ավելի ցածր: Ամբողջական դրույքի հաշվարկով գումարը կկազմի մոտ 254.4 մլն ՀՀ դրամ: Կարծում ենք՝ նախակրթարանների դաստիարակների երկար տարիների աշխատանքը երեխաների հետ պետության կողմից որևէ գնահատանքի պետք է արժանանա և սա գնահատելու եղանակներից մեկն է:</p>	<p>«Կրթության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով ուսումնական հաստատությունների մեջ առանձնացվում են՝ նախադպրոցական, հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության, հետբուհական մասնագիտական կրթության տիպերը:</p> <p>Սոցիալական փաթեթի հատկացման՝ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) N 1 հավելվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետով՝ կրթության, մշակույթի, սոցիալական պաշտպանության և գիտության ոլորտների պետական կազմակերպությունների մեջ ներառված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկում ներառված են ուսումնական հաստատությունների տիպերից հանրակրթական դպրոցները, հատուկ հանրակրթական դպրոցները, նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններն ու վերը նշված ոլորտների մի շարք այլ</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>հաստատություններ և ՊՈԱԿ-ներ:</p> <p>Որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պետական կազմակերպությունների նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնադաստիարակչական հաստատությունները (այսինքն՝ նաև նախակրթարանները) ևս ներառված չեն:</p> <p>Որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված սոցիալական փաթեթի շահառուների ցանկում ինչպես միջին մասնագիտական, նախնական մասնագիտական, այնպես էլ՝ բարձրագույն մասնագիտական, լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության, հետբուհական մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունները չներառելու պատճառն է ՀՀ պետական բյուջեի միջոցների սղությունը:</p> <p>Հետևաբար, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի «Սոցիալական փաթեթների ապահովում» ծրագրի շահառուների ցանկում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցության պատգամավորների կողմից ներկայացված համանման գործառույթներ իրականացնող կազմակերպությունների աշխատողներին ընդգրկելու դեպքում՝ միասնական իրավունքների և երաշխիքների ապահովման հարցում խտրական վերաբերմունքի բացառման նպատակով անհրաժեշտություն կառաջանա ընդգրկելու նաև այլ՝ բարձրագույն մասնագիտական, լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության, հետբուհական մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների աշխատողներին, որի համար ՀՀ պետական բյուջեի</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>միջոցներից կպահանջվի լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Այդպիսի հնարավորություն Կառավարության 2019թ. հուլիսի 10-ի N 900-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ 2020-2022թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով չի նախատեսվել:</p> <p>Առաջարկությանը հնարավոր է անդրադառնալ առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում՝ համապատասխան պետական լիազոր մարմնի կողմից հիմնավորված հայտի առկայության պարագայում:</p>
185.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Ըստ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ պետական կրթական հաստատությունների թվում են միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունները: Սակայն միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների աշխատակիցները սոցիալական փաթեթից չեն օգտվում, ինչը նշանակում է, որ նրանց հանդեպ ցուցաբերվում է խտրական մոտեցում՝ առանց օբյեկտիվ հիմքի: Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատակիցների սոցիալական փաթեթով ապահովման ծրագրի շահառուների ցանկում ընդգրկել նաև միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների աշխատակիցներին:</p>	Տես 184-րդ կետում նշված առաջարկության հիմնավորումը:
186.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան»	Առաջարկում ենք մինչև երեխայի 3 տարին լրանալը խնամքի արձակուրդում գտնվող մայրերին աշխատանքի վերադառնալու և դայակ վարձելու համար	Ծրագրում կատարվելիք փոփոխությունների շրջանակում կքննարկվեն ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցության պատգամավորների կողմից սույն կետով բարձրացված

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
	խմբակցություն	պետության կողմից փոխհատուցում ստանալու ծրագրում ընդգրկել լրացուցիչ դրամական միջոցներ և ծրագրի շահառուների համար նախատեսված չափանիշները մեղմացնել, ինչը հնարավորություն կտա ավելի շատ կանանց ընդգրկվելու այդ ծրագրում: Մեր համոզմամբ՝ այս սոցիալական ծրագրի ընդլայնումը կարող է նպաստել ծնելիության աճին:	հարցերը՝ ՀՀ ԱՍՀ նախարարության գծով պետբյուջեով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում:
187.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Թռչունյան տուն» գիշերօթիկ դպրոցը հիմնադրվել է բարերար Վահան Տերչունյանի կտակած միջոցներով և մինչ օրս գոյատևում է բացառապես բարեգործական (հիմնականում՝ ամերիկահայերի կողմից տրամադրված միջոցների) հաշվին: Այս պահին գիշերօթիկն ունի 84 սան, որոնցից մոտավորապես կեսը չունի գնալու այլ տեղ, քանի որ այս երեխաները ծնողազուրկ են կամ առկա են այլ օբյեկտիվ պատճառներ: Բարդ է նաև ծնող ունեցող երեխաների ընտանեկան վիճակը՝ յուրաքանչյուրինը յուրովի: Այս տարի գիշերօթիկը որևէ ֆինանսական օժանդակություն չի ստացել որևէ մեկի կողմից. դպրոցի աշխատակիցները և տնօրենն արդեն մի քանի ամիս է, ինչ աշխատավարձ չեն ստացել, սակայն շարունակում են աշխատել՝ երեխաներին անտեր չթողնելու համար: Դպրոցն ունի կուտակված և կուտակվող պարտավորություններ մթերային խանութին, կոմունալ ծառայություններին և այլոց: Բացարձակապես անհայտ է դպրոցի և հետևաբար նաև դպրոցի սաների ճակատագիրը: Հաշվի առնելով շարադրված փաստերը, ինչպես նաև Գյումրի քաղաքում ներկայումս այսպիսի հաստատության առկայության հրամայականը՝ առաջարկում ենք Հայաստանի Հարապետության 2020	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>թվականի պետական բյուջեի միջոցներից հատկացումներ նախատեսել Գյումրի քաղաքի «Թռչունյան տուն» գիշերօթիկ դպրոցի կենսագործունեության համար՝ թույլ չտալով այս դպրոցի փակումը:</p>	
188.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Երևան քաղաքի «Հակոբ Կոչոյան» կրթահամալիրը հիմնադրվել է 1958 թվականին: Այստեղ դասավանդվում են գծանկարչություն, գեղանկարչություն, քանդակագործություն, դեկորատիվ կիրառական արվեստ, արվեստի պատմություն, հանրակրթական առարկաներ, համակարգչային ձևավորում, գրաֆիկա, անիմացիա և այլն: Կրթահամալիրը մշտապես մասնակցում է տարբեր մրցույթների թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում՝ արժանանալով բազմաթիվ մրցանակների ու մեդալների: 2018-2019 ուստարվա շրջանակներում դպրոցում սովորում է մոտ 500 աշակերտ: Մարզադահլիճը գտնվում է անմխիթար վիճակում, ինչի պատճառով ֆիզկուլտուրայի դասերը անց են կացվում ոչ լիարժեք: Տանիքը կաթում է, անհրաժեշտ է այն փոխել կամ առնվազն վերանորոգել, պատուհաններն այժմ ցելոֆանապատ են՝ ինչ-որ չափով ջերմամեկուսացումն ապահովելու համար, մինչդեռ անհրաժեշտ է օգտագործել մետաղապլաստից պրոֆիլներ: Սանհանգույցները բացարձակապես անմխիթար հակասանիտարական վիճակում են: Չկան ներառական կրթության պայմաններ, բացակայում են անգամ թեքահարթակները: Հատակը 1958 թվականից ի վեր չի փոխվել, այսինքն նորմալ հատակ գրեթե բացակայում է: Առաջին հարկի հատակը քանդվելու եզրին է, նկուղից փայտյա հենակներով ամրացվել է դեպի դասարան գնացող դռան հատակը, և երեխաները</p>	<p>Հ. Կոչոյանի անվան կրթահամալիրը ընդգրկված է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրում: Այս պահին ավարտին են մոտենում նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Շինարարական աշխատանքները նախատեսվում է կատարել 2020-2022 թվականներին:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>շրջանցում են հարկի այդ հատվածը: Վերջին հարկի տանիքը ևս քանդման եզրին է, այն ևս փայտյա հենակներով ժամանակավորապես ամրացվել է՝ հայտնի չէ, թե մինչև երբ: Դասասենյակներում լուսավորությունն անբավարար է:</p> <p>Ամենահամեստ հաշվարկներով կրթահամալիրի շենքը նորոգելու համար անհրաժեշտ է 50 մլն ՀՀ դրամ կամ հատկացնել մեկ այլ տարածք: Անթույլատրելի է այս եզակի մասնագիտական դպրոցը, որն ունի տասնամյակներով կուտակված փորձ և ավանդույթներ, թողնել այս վիճակում: Այս խնդրի լուծումն առաջարկում ենք նախատեսել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով:</p>	
189.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>«Նևրոզների կլինիկա»-ն, հիմնադրված լինելով 1985 թվականին, մինչև օրս ամեն տարի զբաղված է 100 կամ մոտ տոկոսով: Այն միակն է տարածաշրջանում իր տեսակի մեջ և մատուցում է միջազգային ստանդարտներին համապատասխան հոգեթերապևտիկ, հոգեբանական և հոգեբուժական ծառայություններ Հայաստանի Հանրապետության, Արցախի և այլ երկրների բնակիչներին: Այս կլինիկան մասնագիտացած է անձին սահմանային վիճակից դուրս բերելու ուղղությամբ՝ հետազայում հոգեբուժական հիվանդանոցում չհայտնվելու համար: Պետպատվերի շրջանակներում կլինիկան ստանում է 90-91 մլն ՀՀ դրամ տարեկան, որը չտրամադրելու պարագայում այն կարող է փակվել. արդյունքում՝ որևէ այլ տեղ «նևրոզ» ախտորոշմամբ հիվանդները չեն կարող պետպատվերի շրջանակում ստանալ իրենց ախտորոշմանը համապատասխան մասնագիտական բուժում, իսկ 48 հոգանոց անձնակազմը կդառնա գործազուրկ: Ընդ</p>	<p>Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման համաձայն՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում են ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին և կարող են կազմակերպվել բժշկական կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքման միջոցով: Հաշվի առնելով բյուջետային գործընթացի ներկա փուլը՝ բնականաբար այս պահին որևիցե կոնկրետ կազմակերպության հետ 2020 թվականի համար պայմանագրային հարաբերությունների հարց չի քննարկվում: «Նևրոզների կլինիկա» ՓԲԸ-ի հետ պայմանագրային հարաբերությունները կքննարկվեն բյուջետային սահմանաչափերի շրջանակներում՝ ընդհանուր կարգով:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>որում, կլինիկայի բոլոր ցուցանիշներն ու տված արդյունքները վկայում են այստեղ մատուցվող ծառայությունների բարձր որակի մասին:</p> <p>Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ առաջարկում ենք «Նևրոզների կլինիկա»-ին 2020 թվականին ևս տրամադրել պետպատվեր՝ 91 մլն ՀՀ դրամի կամ ավելի չափով:</p>	
190.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Տավուշի մարզի Բարեկամավան գյուղի գլխավոր խնդիրը խմելու ջրի հարցն է, որն այժմ չի բավարարում գյուղի բոլոր կարիքները հոգալու համար: Անհրաժեշտ է ջրի նոր հորատանցք փորել կամ եղածը խորացնել և հզոր պոմպ տեղադրել: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել 10 մլն ՀՀ դրամ Բարեկամավանի բնակիչների խմելու ջրի կարիքները լիարժեք բավարարելու համար:</p>	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետազայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>
191.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Տավուշի մարզի Դովեղ գյուղի դպրոցում, որը գտնվում է ադրբեջանական զինուժի ուղիղ նշանառության տակ, նախատեսված է իրականացնել վերանորոգում 2020 թվականին: Միաժամանակ, գյուղի կենտրոնում կանգուն է մնացել դեռևս խորհրդային տարիներին կառուցված նախկին դպրոցի շենքը, որն ուղիղ նշանառության տակ չի և ավելի ապահով է դպրոցականների համար: Բնակիչների խնդրանքով՝ առաջարկում ենք միջոցներն ուղղել դպրոցի հին շենքի հիմնանորոգմանը: Դպրոցում այժմ սովորոքում է 60 աշակերտ, առկա չէ նաև ապաստարան, որն անհրաժեշտ է սահմանամեծ բնակավայրին: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել 101 մլն դրամ դպրոցի շենքի հիմնանորոգման և ևս 5 մլն դրամ նույն շենքում ապաստարանի կառուցման համար:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
192.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Տավուշի մարզի Լճկաձոր գյուղը խմելու ջրի ներքին ցանց չունի: Գյուղում կա 108 տնտեսություն և ավելի քան 500 բնակիչ: Խմելու ջրը առանձին խողովակաշարով բերվել է գյուղ, սակայն բնակիչները չեն կարողանում օգտվել: Անհրաժեշտ է կառուցել 100տ տարողությամբ ջրամբար և ներքին ցանց: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Լճկաձորի խմելու ջրի ներքին ցանցի և ջրամբարի կառուցման հարցը, որը կարժենա մոտավորապես 53 մլն ՀՀ դրամ:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
193.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Սյունիքի մարզի Խնածախ համայնքում 2018 թվականի սեպտեմբերի 09-ին տեղի ունեցած հրդեհի հետևանքով այրվել է 4 ընտանիքի բնակարան, ոչնչացել է նրանց ամբողջ գույքը: Անօթևան են դարձել 4 ընտանիքներ՝ 11 քաղաքացի: Այժմ արդեն այդ թիվը 12 է, քանի որ ընտանիքներից մեկը համալրվել է՝ երեխա են ունեցել ու չգիտեն՝ ուր տանել ծննդատնից: Մի տարուց ավելի է, ինչ այդ մարդիկ բնակվում են հարազատների ու հարևանների տներում: Առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում նախատեսել Սյունիքի մարզի Խնածախ համայնքի մոխրացած տների սեփականատերերին բնակարանով ապահովելու հարցը 36 մլն ՀՀ դրամի շրջանակներում:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
194.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Լոռու մարզի Շամլուղ համայնքի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1959 թվականին: Ամբողջ համայնքում միակ դպրոցն է: Այստեղ սովորում է մոտ 120 աշակերտ: Դպրոցն ունի 2 մասնաշենք: Երկրորդ մասնաշենքի տանիքը կաթում է, ինչի պատճառով այս մասնաշենքն ընդհանրապես չի օգտագործվում: Մարզադահլիճը, որը գտնվում է այս մասնաշենքում, անձրևաջրերի	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը																				
		<p>պատճառով գտնվում է անմխիթար վիճակում: Ամբողջ դասապրոցները կենտրոնացած է առաջին մասնաշենքում, որի պայմանները նույնպես բավարար չեն: Սանհանգույցները բացարձակապես հակասանիտարական վիճակում են: Չկան ներառական կրթության պայմաններ: Դասասենյակները, դահլիճը հիմնանորոգման կարիք ունեն: Ջեռուցվում է փայտե վառարաններով: Դպրոցի շենքը հիմնանորոգելու համար անհրաժեշտ է մոտավորապես 100 մլն ՀՀ դրամ: Այս խնդրի լուծումը ևս առաջարկում ենք նախատեսել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով:</p>																					
195.	<p>ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>Լոռու մարզի Շիրակամուտ համայնքը բավականին մեծ համայնք է (բնակչությունը՝ 2.800 մարդ): Համայնքի գլխավոր մայրուղու (ՄՅ Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհ) լուսավորությունը, սակայն, մինչ օրս ապահովված չէ: Կազմված նախահաշվի համաձայն՝ նշյալ մայրուղու լուսավորությունն անցկացնելու համար անհրաժեշտ է 1.622.500 ՀՀ դրամ գումար, բացվածքը՝</p> <table border="1" data-bbox="452 1029 1019 1428"> <thead> <tr> <th>Անվանումը</th> <th>Չափման միավոր</th> <th>Քա նա կ</th> <th>Գին</th> <th>Գումար</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Սյուն</td> <td>հատ</td> <td>30</td> <td>21.000</td> <td>630.000</td> </tr> <tr> <td>Լեդ լույս</td> <td>հատ</td> <td>30</td> <td>15.000</td> <td>450.000</td> </tr> <tr> <td>Էլ լար</td> <td>մետր</td> <td>2.000</td> <td>200</td> <td>400.000</td> </tr> </tbody> </table>	Անվանումը	Չափման միավոր	Քա նա կ	Գին	Գումար	Սյուն	հատ	30	21.000	630.000	Լեդ լույս	հատ	30	15.000	450.000	Էլ լար	մետր	2.000	200	400.000	<p>Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:</p>
Անվանումը	Չափման միավոր	Քա նա կ	Գին	Գումար																			
Սյուն	հատ	30	21.000	630.000																			
Լեդ լույս	հատ	30	15.000	450.000																			
Էլ լար	մետր	2.000	200	400.000																			

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը					ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Երկաթ ե անկյու ն	մեդր	30	1.50 0	45.00 0	
		Ամրան	մեդր	15	1.50 0	22.50 0	
		Խողով ակ	մեդր	30	1.00 0	30.00 0	
		Մեկուս իջ	հապ	60	500	30.00 0	
		Ժաման ակի ռելե	հապ	1	15.0 00	15.00 0	
		<p>Նշենք, որ այստեղ հաշվարկված չեն հողային աշխատանքների, տեխնիկայի վարձակալության և աշխատավարձերի գումարները:</p> <p>Առաջարկում ենք այս տարվա պետական բյուջեով նախատեսել և իրականացնել Լոռու մարզի Շիրականուտ համայնքի գլխավոր մայրուղու լուսավորման ծրագիրը:</p>					
196.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	<p>Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի 4-րդ շենքը գտնվում է անմխիթար վիճակում: Այն կառուցվել է 1974 թվականին, 5 հարկանի է, ունի 2 մուտք: Շենքում բնակվում է 22 ընտանիք: 1988 թվականի երկրաշարժի հետևանքով՝ բազմաբնակարան այս շենքն ստացել է 4-րդ կարգի վթարային աստիճան: Մինչ օրս, վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել, որի պատճառով շենքն ավելի է քայքայվել ու շարունակում է քայքայվել: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեում</p>					<p>Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ընդգրկել Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի 4-րդ շենքի վերականգնումը:	
197.	ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Շիրակի մարզի Անի համայնքի Ձորակապ գյուղն ունի 6.943 բնակիչ: Ձորակապ բնակավայրի միջնակարգ դպրոցը շահագործման է հանձնվել 2003 թվականին: Դպրոցում սովորում են մոտ 260 աշակերտ: Սակայն դպրոցը չունի մարզադահլիճ: Գյուղի դպրոցի հարակից նախկին տարածքը, որը շահագործվում էր իբրև մարզադահլիճ, երկրաշարժի հետևանքով մինչև օրս հիմնանորոգման կարիք ունի: Ֆիզիկական կուլտուրայի դասավանդումը գարնան և աշնան ամիսներին անցկացվում է դպրոցի բակում, իսկ ձմռան ամիսներին դասընթացը չի իրականացվում: Առաջարկում ենք 2020 թվականի պետական բյուջեի նախագծում ներառել նաև Ձորակապ գյուղի դպրոցի մարզադահլիճի հիմնանորոգումը, որի համար անհրաժեշտ կլինի մոտավորապես 10 մլն ՀՀ դրամ:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
198.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահե Հովհաննիսյան	«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի Հավելված N 1-ի բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման N 1184 ծրագրի N 12001՝ «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» հոդվածում նախատեսված հատկացման չափը՝ 1 մլրդ 200 մլն դրամը, ավելացնել 5 անգամ՝ դարձնելով 6 մլրդ դրամ: Ըստ այդմ՝ առաջարկում եմ ընդունել համապատասխան որոշումներ՝ վերոնշյալ փոխհատուցման շահառուների շրջանակը մեծացնելու վերաբերյալ:	Ծրագրի շահառուների շրջանակի ընդլայնման, հետևաբար՝ նաև ծրագրով նախատեսված գումարի չափի փոփոխության հարցին հնարավոր է անդրադառնալ առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում՝ համապատասխան պետական լիազոր մարմնի կողմից հիմնավորված հայտի առկայության պարագայում: Բացի դրանից, նպատակահարմար է ավանդի փոխհատուցման առաջնահերթ տրամադրել տարեց կենսաթոշակառուներին: Ներկայումս ավանդի փոխհատուցում ստանում եմ 85 տարեկանը լրացրած տարեցները, իսկ արտահերթ տրամադրումը բերելու է սահմանված հերթացուցակի սպասարկման դանդաղ ընթացքի, իսկ դա հնարավոր մահերի արձանագրման դեպքում՝ նաև փախհատուցման իրավունքի չկատարման:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>2020թ. ՀՀ պետական բյուջեի նախագծով առաջարկվել է ծրագրում ընդգրկել մինչև 31.12.1936թ. ներառյալ ծնված տարեցներին (84 տարեկանը լրացրած անձինք):</p> <p>Միաժամանակ հայտնում ենք, որ բացի տարեց, մինչև 31.12.1936թ. ծնված ավանդատուներից, ավանդի փոխահատուցման ստանալու իրավունքից կշարունակեն նաև օգտվել՝</p> <p>1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակից անձինք, այդ թվում՝ եթե ավանդը ներդրվել է մահացած ամուսնու կողմից՝ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում.</p> <p>2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածի ցանկում ընդգրկված համայնքներում՝ բնակչության պետական ռեգիստրում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված (այսուհետ՝ սահմանամերձ համայնքներում հաշվառված) անձինք, այդ թվում՝ եթե ավանդը ներդրվել է մահացած ամուսնու կողմից՝ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում.</p> <p>3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած անձինք (այսուհետ՝ զոհվածի ժառանգ):</p>
199.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահե Հովհաննիսյան	«Հայաստանի Հանրապետության 2020թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 7-ի 12-րդ կետում կատարել լրացում այն մասին, որ վերոնշյալ ավանդների փոխահատուցումն արտահերթ տրամադրվում է նաև ավանդատու հանդիսացող այն	Տես 198-րդ կետի առաջարկության հիմնավորումը:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>քաղաքացիներին, որոնց զավակները 2020թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կունենան երեխա (երեխաներ) (այսինքն՝ կծնվի թոռ՝ անկախ կարգաթվից): Այս կապակցությամբ նույնպես առաջարկում եմ Կառավարության համապատասխան որոշումներում կատարել անհրաժեշտ փոփոխությունները:</p>	
200.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտակ Մանուկյան</p>	<p>Կարծում եմք նպատակահարմար է արդիական շենքային պայմաններ ունեցող մշակույթային հաստատություններում դիտարկել Արմաթ լաբորատորիաներ բացելու հնարավորությունը: Ինքս բազմաթիվ քաղաքացիներից խնդրանքներ եմ ստացել Արմավիրի մարզում Արմաթ լաբորատորիաներ բացելու հնարավորության մասին:</p> <p>Մասնավորապես Արմավիրի մարզ այցելությունների ընթացքում համոզվել եմ, որ Բամբակաշատ համայնքի մշակույթի տունն այն եզակի հաստատություններից է, որը ունի լիովին նոր կապիտալ վերանորոգված շենքային պայմաններ: Միաժամանակ այդ հսկա համալիրը ունի թերբեռնվածություն և չի նպաստում, ինչպես ըստ նշանակության օգտագործմանը, այնպես էլ քաղաքացիների ժամանցի ապահովմանը:</p> <p>Արդյունքում ունենք բեռ, ոչ թե՛ ակտիվ: Ըստ այդմ, առաջարկում եմ 2020թ բյուջեով նախատեսել Բամբակաշատ համայնքում Արմաթ լաբորատորիայի բացում: Պետք է նշեմ, որ խնդրի մասին տեղյակ եմ պահել 2019թ, որի համատեքստում առկա է նաև Բամբակաշատ համայնքի ղեկավարի դիմումը/խնդրանքը:</p>	<p>Բամբակաշատ գյուղի մշակույթի պալատում Արմաթ լաբորատորիաների ստեղծման նպատակը հանրակրթական դպրոցներում բնագիտամաթեմատիկական ուղղվածության մակարդակի զարգացումն է, ուստի գյուղի մշակույթի տանը լաբորատորիա հիմնելը չի բխում միջոցառման տրամաբանությունից: Քննարկվում է Բամբակաշատի դպրոցում լաբորատորիա հիմնելու հարցը:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
201.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտակ Մանուկյան	<p>Շախմատին ուղղված շուրջ 161 մլն դրամի ծախսային միջոցառումներից շուրջ 91 մլն դրամը բաժին է ընկնում դպրոցներում շախմատ դասագրքի և վարժությունների տեսրի տպագրությանը:</p> <p>Առաջարկում ենք որպեսզի թղթի ու մեծ հաշվով անհեռանկարային ծախսերի փոխարեն ԿԳՄՍ նախարարությունը՝ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ համատեղ, եղած ֆինանսավորման շրջանակներում դպրոցներում իրականացնի առցանց ծրագրային փաթեթների հիման վրա կառուցված շախմատային ծրագրերի ներդնում:</p> <p>Նախնական քննարկումները շախմատում արհեստական բանականության ներդրման հնարավորությունների մասով, օրինակ Chessify ընկերության հետ թույլ է տալիս ենթադրել, որ առկա են մրցակցային կարողություններ եղած ֆինանսավորման շրջանակներում գաղափարը կենսագործելու մասով:</p> <p>Ըստ այդմ հնարավորություն կլինի մրցակցային հիմունքներով ձեռք բերել արդիական ու հեռանկար ունեցող ծառայություններ: Առաջարկում ենք թղթից՝ ռազմավարական լուծումների անցման գաղափարը շախմատում ամրագրել 2020թ պետական բյուջեում:</p>	<p>Հարցը կքննարկվի ՀՀ 2020թ. բյուջետային տարվա ընթացքում՝ համապատասխան շահագրգիռ գերատեսչությունների և կողմերի հետ և նպատակահարմարության դեպքում կներկայացվի համապատասխան առաջարկ:</p>
202.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտակ Մանուկյան	<p>Ողջունելով խոցելի խավերի համար հասցեական ու առաջանցիկ քայլերը առաջարկում ենք դիտարկել նախկին Խնայքանկում ավանդ ունեցող բազմազավակ ընտանիքների շահառուների փոխհատուցումը դիտարկել որպես չափորոշիչ ու ներառել դա առաջնահերթությունների շարքում:</p>	<p>Ծրագրի շահառուների շրջանակի ընդլայնման, հետևաբար՝ նաև ծրագրով նախատեսված գումարի չափի փոփոխության հարցին հնարավոր է անդրադառնալ առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում՝ համապատասխան պետական լիազոր մարմնի կողմից հիմնավորված հայտի առկայության պարագայում: Բացի դրանից, նպատակահարմար է ավանդի փոխհատուցումն</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>առաջնահերթ տրամադրել տարեց կենսաթոշակատուներին: Ներկայումս ավանդի փոխհատուցում ստանում են 85 տարեկանը լրացրած տարեցները, իսկ արտահերթ տրամադրումը բերելու է սահմանված հերթացուցակի սպասարկման դանդաղ ընթացքի, իսկ դա հնարավոր մահերի արձանագրման դեպքում՝ նաև փախհատուցման իրավունքի չկատարման:</p> <p>2020թ. ՀՀ պետական բյուջեի նախագծով առաջարկվել է ծրագրում ընդգրկել մինչև 31.12.1936թ. ներառյալ ծնված տարեցներին (84 տարեկանը լրացրած անձինք):</p> <p>Միաժամանակ հայտնում ենք, որ բացի տարեց, մինչև 31.12.1936թ. ծնված ավանդատուներից, ավանդի փոխհատուցման ստանալու իրավունքից կշարունակեն նաև օգտվել՝</p> <ol style="list-style-type: none"> 1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակից անձինք, այդ թվում՝ եթե ավանդը ներդրվել է մահացած ամուսնու կողմից՝ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում. 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածի ցանկում ընդգրկված համայնքներում՝ բնակչության պետական ռեգիստրում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված (այսուհետ՝ սահմանամերձ համայնքներում հաշվառված) անձինք, այդ թվում՝ եթե ավանդը ներդրվել է մահացած ամուսնու կողմից՝ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում. 3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			ներդրված ավանդը ժառանգած անձինք (այսուհետ՝ զոհվածի ժառանգ):
203.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտակ Մանուկյան	Հաշվի առնելով ծնելության խթանմանը միտված կառավարության՝ հանրությանը ուղղված ուղերձը, առաջարկում ենք դիտարկել աշխատող ծնողների համար բազմազավակ ընտանիքներ ստեղծման/պլանավորման շարժառիթների տրամադրումը, մասնավորապես նշվածի համատեքստում առաջարկում են 5-րդ և ավելի երեխա ունենալու դեպքում աշխատող ծնողների համար դիտարկել եկամտային հարկի դրույքաչափի 1 տոկոսային կետով նվազեցումը:	<p>Գտնում ենք, որ բազմազավակ ընտանիքների ստեղծման (պլանավորման) շարժառիթների ստեղծման առումով ներկայացված առաջարկությունը լավագույն լուծումը չէ՝ հետևյալ հիմնական հիմնավորումներով.</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացված առաջարկությունը խնդրահարույց է հարկման արդարության և հավասարության սկզբունքներին հակադրվելու տեսանկյունից, քանի որ առաջարկության ընդունումը ենթադրում է, որ միևնույն չափի և միևնույն տեսակի եկամուտը պետք է հարկվի տարբեր դրույքաչափերով, 2) առաջարկությամբ ներկայացված դեպքում եկամտային հարկի դրույքաչափի նվազեցումն ընկալվում է որպես սոցիալական քաղաքականության շրջանակներում շահառուներին տրամադրվող աջակցություն: Այս առումով, հայտնում ենք, որ՝ <ul style="list-style-type: none"> ա. սոցիալական աջակցության առանձին ծրագրերի շրջանակներում պետական աջակցության կազմակերպման համար արդեն իսկ կիրառվում են տարբեր գործիքներ, ուստի գտնում ենք, որ նույն խնդրի լուծման նպատակով նաև հարկային քաղաքականության գործիքակազմն օգտագործելը նպատակահարմար չէ, բ. եթե անգամ նպատակահարմար համարվի սոցիալական աջակցության նպատակով շահառուների տարբեր խմբերի համար կիրառել հարկային խթաններ, ապա հարկ է նկատել, որ միջազգային պրակտիկայում ընդունված է այդ խթանները կիրառել այսպես կոչված «սոցիալական կրեդիտների» միջոցով՝ հիմնված եկամուտների հայտարարագրման համակարգի վրա, որի պարագայում հարկ վճարող ֆիզիկական անձանց հնարավորություն է տրվում հարկային տարվա

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>ընթացքում վճարված հարկերից հետ ստանալ որոշ սոցիալական կարիքներ (կրթության, առողջապահության, ապահովագրության, երեխայի խնամքի, հիփոթեքային վարկերի սպասարկման) հոգալու ուղղությամբ կատարված ծախսերին համապատասխանող հարկի չափով գումար: Հաշվի առնելով վերոնշյալը՝ հայտնում ենք, որ ներկայացված առաջարկությունն ընդունելի չէ:</p>
204.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արտակ Մանուկյան	<p>ՀՀ ԱԺ նախագահի հովանու ներքո իրականացվող գիտական (գիտաժողովների, սեմինարների կազմակերպում), կրթական (թեմատիկ մրցույթների կազմակերպում և հաղթողների պարգևատրում ուսուցիչների խրախուսում), մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպում (համերգներ, ցուցահանդեսներ, գրական երեկոներ, ազգային և պետական տոների ինչպես նաև սպորտային նվաճումների հետ կապված միջոցառումների իրականացում)՝ 65.0 մլն դրամ:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է: ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծում «ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրում նախատեսվել է նոր միջոցառում 65.5 մլն դրամի չափով՝ ՀՀ Ազգային ժողովի պահպանման ծախսերի միջոցառման գծով «Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր» հոդվածով նախատեսված միջոցների նվազեցման հաշվին:</p>
205.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Մխիթար Հայրապետյան Հովհաննես Հովհաննիսյան	<p>ՀՀ վարչապետի աշխատակազմի 2020 թվականի ծախսային մասում. 1194 ծրագրային դասիչով նախատեսված «Հայրենադարձության ծրագիր» միջոցառումը սահմանել բացվածքով և ավելացնել 270.185.06 հազ. դրամ, դարձնելով 775 185 06 հազ. դրամ՝ ըստ հետևյալ ենթածրագրերի. ա) 1114 ծրագրային դասիչ՝ Հայաստան Սփյուռք-գործակցության ծրագիր – 450.114.56 հազ. 11001 միջոցառում՝ «Քայլ դեպի տուն» – 139.874.56 հազ. 11002 միջոցառում՝ «Սփյուռքի երիտասարդ</p>	<p>Առաջարկությունը ընդունվել է, ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>առաջնորդների վերապատրաստում» - 25.000.00 հազ. 11003 միջոցառում՝ Հանրային ոլորտում սփյուռքահայ երիտասարդ մասնագետների պրակտիկաների կազմակերպում - 90.240.00 հազ. 11004 միջոցառում՝ Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ իրազեկման ծրագիր - 60.000.0 հազ. 11005 միջոցառում՝ Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին - 10.000.00 հազ. 11006 միջոցառում՝ Աշխատանք սփյուռքի համայնքներում (ներկայացուցչական ծախսեր, գործուղումներ) -125.000.00</p> <p>բ) 1156 ծրագրային դասիչ՝ ՀՀ զարգացման գործընթացներում Սփյուռքի ներուժի ներգրավում – 325.070.50 հազ. 11006 միջոցառում՝ Սփյուռքի համայնքների ուսումնասիրությունների իրականացում և ներուժի բացահայտում - 115.060.00 հազ. 11007 միջոցառում՝ Սփյուռքի ներուժի վերաբերյալ տվյալների համակարգերի ստեղծում - 35.000.00 հազ. 11008 միջոցառում՝ Համահայկական մասնագիտական համաժողովներ - 175.010.50 հազ. Առաջարկով պայմանավորված՝ կատարել լրացումներ համապատասխան հավելվածներում և աղյուսակներում: Հիմնավորում. Սփյուռքի նախարարության վերակազմավորումից հետո Սփյուռքի հայապահպանության ծրագրային միջոցառումները վերաբաշխվել են, սակայն բյուջեի նախագծում սահմանված չէ ՀՀ վարչապետի անձնակազմի՝ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի լիազորությամբ</p>	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		իրականացվելիք միջոցառումները: Առաջարկը միտում ունի պահպանել և չափելի դարձնել հայապահպանությանն ուղղված ծրագրերը:	
206.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Մխիթար Հայրապետյան Հովհաննես Հովհաննիսյան</p>	<p>ՀՀ սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարության 2020թ. միջոցառումների ծախսային մասում. 1015 ծրագրային դասիչով նախատեսված «Սոցիալական փաթեթի ապահովում» միջոցառումը ավելացնել 825.500.00 հազ. դրամով, ընդամենը՝ 12001 միջոցառում՝ «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» - 11.444.996.00 հազ Հիմնավորում. Մինչ այժմ գոյություն ունեցող պետական քաղաքականությամբ՝ սոցիալական փաթեթի հնարավորությունից, որպես կրթական ծրագիր իրականացնող պետական կազմակերպություններ, հիմնականում օգտվել են հանրակրթական դպրոցների և նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատողները: Սակայն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատակիցները, որոնց վարձատրությունը հիմնականում չի գերազանցում նվազագույն աշխատավարձը, ընդգրկված չեն սոց. փաթեթի շահառուների կազմում: Ավելին՝ նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատության դասավանդողն ու վարպետը նույնպես չեն օգտվել սոցիալական աջակցության այդ հնարավորությունից, իսկ ուսումնարանից քուլեջ</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել: «Կրթության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով ուսումնական հաստատությունների մեջ առանձնացվում են՝ նախադպրոցական, հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության, հետբուհական մասնագիտական կրթության տիպերը: Սոցիալական փաթեթի հատկացման՝ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) N 1 հավելվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետով՝ կրթության, մշակույթի, սոցիալական պաշտպանության և գիտության ոլորտների պետական կազմակերպությունների մեջ ներառված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկում ներառված են ուսումնական հաստատությունների տիպերից հանրակրթական դպրոցները, հատուկ հանրակրթական դպրոցները, նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններն ու վերը նշված ոլորտների մի շարք այլ հաստատություններ և ՊՈԱԿ-ներ: Որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված սոցիալական փաթեթի շահառուների ցանկում ինչպես միջին մասնագիտական, այնպես էլ՝ բարձրագույն մասնագիտական, լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության, հետբուհական մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունները չեն ներառվել:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>վերակազմավորվելուց հետո դադարեցվել է ֆինանսավորումը: Այս մոտեցումը գուցե հասկանալի լիներ, եթե քոլեջները ունենային այլ ֆինանսական մուտքեր, ինչպես օրինակ՝ վճարովի ուսուցումից ստացված եկամուտները: Սակայն 12-ամյա պարտադիր միջնակարգ կրթության ներդրումից հետո այդ մուտքերը դադարել են՝ վճարովի տեղերով ընդունելություն չկազմակերպելու պատճառով: Հարկ է նշել նաև, որ քոլեջում միջնակարգ կրթության 3-րդ աստիճանի ծրագիր իրականացնող նույն մանկավարժի նկատմամբ կիրառվում է խտրական վերաբերմունք: Եվ դա այն դեպքում, երբ վերջինս ստանում է դպրոցի ուսուցչի աշխատավարձի կեսը:</p> <p>Նույն տրամաբանությամբ առաջարկվում է համանման գործառույթներ իրականացնող մի շարք կազմակերպություններ: Ընդհանուր առմամբ՝ առաջարկը ընդգրկում է 114 կազմակերպության շուրջ 6250 շահառուի, այդ թվում՝ 86 միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող տարբեր ենթակայության ուսումնական հաստատություններ (այդ թվում՝ 4-ը նախնական մասնագիտական, որոնք չեն օգտվել սոցիալական փաթեթի հնարավորությունից), 24 մարզադպրոց, 1 մասնագիտացված դպրոց, 3 հիմնադրամ դպրոց և Ցեղասպանության թանգարանի աշխատակիցներ:</p>	<p>պատճառն է ՀՀ պետական բյուջեի միջոցների սղությունը:</p> <p>Հետևաբար, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի «Սոցիալական փաթեթների ապահովում» ծրագրի շահառուների ցանկում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և ԱԺ պատգամավորների կողմից ներկայացված համանման գործառույթներ իրականացնող կազմակերպությունների աշխատողներին ընդգրկելու դեպքում՝ միասնական իրավունքների և երաշխիքների ապահովման հարցում խտրական վերաբերմունքի բացառման նպատակով անհրաժեշտություն կառաջանա ընդգրկելու նաև այլ՝ բարձրագույն մասնագիտական, լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության, հետբուհական մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների աշխատողներին, որի համար ՀՀ պետական բյուջեի միջոցներից կպահանջվի լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ինչը նախատեսված չէ Կառավարության 2019թ. հուլիսի 10-ի N 900-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ 2020-2022թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով:</p> <p>Առաջարկությանը հնարավոր է անդրադառնալ առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում՝ համապատասխան պետական լիազոր մարմնի կողմից հիմնավորված հայտի առկայության պարագայում:</p>
207.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Մխիթար Հայրապետյան Հովհաննես Հովհաննիսյան</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ծախսային մասում՝ 1148 ծրագրային դասիչով նախատեսված «Արտադպրոցական դաստիարակության ծրագրեր» միջոցառումը ավելացնել 100.314.00 դրամով, ընդամենը՝</p>	<p>«Դասական երաժշտություն «Դաս A» միջոցառման համար նախատեսված է 32,8 մլն դրամ, որպես նոր միջոցառում: Հարցին հնարավոր կլինի անդրադառնալ 2020 թվականին նշված միջոցառման ազդեցության գնահատականն ստանալուց հետո:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>11013 միջոցառում՝ «Դասական երաժշտություն «Դաս A» 133.109.00 հազ. դրամ Հիմնավորում. Առաջարկության նպատակն է հավասար պայմաններ ստեղծել 35 ավագ դպրոցում և 104 նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում հիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության 3-րդ մակարդակի ծրագիր ուսումնառող նույն տարիքային խմբի սովորողների համար: Դրանով հնարավոր կլինի օժանդակել նաև ոլորտային մասնագիտությունների գործնական ուսուցմանը՝ մասնագիտական միջավայրում. հատկապես՝ զբոսաշրջության, մշակույթի և արվեստի ոլորտի մասնագիտություններում ուսումնառողների համար: Եթե ոչ բոլոր ՄԿՈԻ-ների, ապա ոլորտային մասնագիտությունների գծով անհրաժեշտ է ապահովել անվճար կամ աբոնեմենտային տոմսերի միջոցով մուտքը մշակութային հաստատություններ (տարբեր թատրոններ, թանգարաններ, պատկերասրահ, համերգասրահ և այլն):</p>	
208.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Մխիթար Հայրապետյան Հովհաննես Հովհաննիսյան</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ծախսային մասում՝ 1162 ծրագրային դասիչով նախատեսված «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր» միջոցառումը ավելացնել 1.500.000.00 հազ. դրամով, ընդամենը՝ 11005 «Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառումը - 3.020.329.5 հազ. դրամ</p>	<p>Ներկայումս իրականացվում են ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված՝ կրթության և գիտության ոլորտի համապատասխան բաժինների դրույթներից բխող լայնամասշտաբ բարեփոխումներ: Վերանայվում է ոլորտի օրենսդրական դաշտը: Արդեն իսկ շրջանառության մեջ է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Բարձրացվող հարցերը համապատասխան լուծում կստանան իրականացվող ընդհանուր բարեփոխումների համատեքստում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Հիմնավորում.</p> <p>Գիտության ոլորտի ֆինանսավորման պետական քաղաքականությունը կարիք ունի հիմնավոր վերանայման: Ոչ արդյունավետ լուծումները առավել խորացել են սկսած 2015 թվականի կառավարության վարած քաղաքականության հետևանքով, որի արդյունքում գիտության ընդհանուր ֆինանսավորման ծավալները չեն աճել ՀՆԱ-ին աճին համապատասխան: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2015 թեմատիկ ֆինանսավորման ծավալները նվազել են շուրջ 12%-ով, իսկ հաջորդ տարվա գիտության բյուջեի աճին զուգընթաց թեմատիկ ֆինանսավորմը գրեթե մնացել է նույնը: Ներկայումս գիտության ոլորտի ֆինանսավորման ընդհանուր ծավալի 72%-ը ուղղվում է բազային ծախսերին, 12%-ը՝ նպատակային ծրագրերին, 11%-ը թեմատիկ հետազոտություններին: Վերջինս, ըստ էության համարվում է գիտության երիտասարդացման երաշխիքն ու զարգացման շարժիչ ուժը: Հետևաբար, դրամաշնորհային ծրագրերի բաղադրիչը պետք է ավելացնել համակշռելով այն բազային ֆինանսավորման հետ: Սա չի ենթադրում գիտական կազմակերպությունների գոյության ռիսկ, այլ առաջարկվում է ծախսերը կենտրոնացնել գիտական արդյունքների ու թեմաների համար անհրաժեշտ ռեսուրսների շուրջ, այդ թվում՝ մարդկային և տեխնիկական: Առաջարկվող ֆինանսավորման ավելացումը նույնիսկ չի ավելացնում պետական լիազորված մարմնի աշխատանքային բեռը, քանի որ վարչարարություն և աշխատանք չի ենթադրում: Որպես</p>	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման առաջադեմ և արդարացված տարբերակ, կարող է կիրառվել նաև միջդիսցիպլինար դրամաշնորհային ծրագրերը: Ուսումնասիրելով գիտահետազոտական ծրագրերի փաստացի վիճակն ու արդյունքները պարզ է դառնում, որ՝</p> <ul style="list-style-type: none"> միջոցների սղության պատճառով բավականին սահմանափակված են դրամաշնորհային մրցույթներում լավագույն արդյունքներ ստացած ծրագրերի ընտրության հնարավորությունները, որը հավաստում է նաև գիտության պետական կոմիտեն: Գործող վերջին մրցույթներին դիմած և շահած հայտերը բաշխվել են հետևյալ կերպ. պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ՝ դիմել են 417 և շահել են 183 հայտ, Երիտասարդ գիտնականների խմբեր՝ համապատասխանաբար 78 և 50, հայ-ռուսական՝ 148 և 39, հայ բելառուսական՝ 42 և 10: Ֆինանսական միջոցների ավելացման պարագայում հնարավոր է գիտական դրամաշնորհների քանակը ավելացնել առնվազն 30 %-ով: Քանակի ավելացումը մրցույթից մրցույթ կարող է լինել տարբեր, քանի որ մրցույթը արդյունավետ է գնահատվում, եթե ներկայացված 2,5-3 հայտերից մեկն է շահել, Դրամաշնորհային մրցույթները հաղթահարած և ընտրված թեմաների ֆինանսավորումը կատարվում է նվազագույնի հաշվարկումով, ինչը ռիսկային է դարձնում ծրագրերի արդյունավետությունն ու թիմի 	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>մոտիվացվածությունը: Արդյունքում տվյալ մրցույթի ժամանակ առկա բոլոր մրցունակ ծրագրերը կֆինանսավորվեն: Աշխատող գիտական խմբերը կունենան վստահություն, որ մրցունակ գիտությամբ զբաղվելու պարագայում ապահովված կլինեն դրամաշնորհներով, հետևաբար նաև մրցունակ աշխատավարձով, որը իր հերթին կբերի ոլորտի կայունության և կնպաստի գիտությունից այլ ոլորտներ արտագաղթի նվազմանը:</p> <ul style="list-style-type: none"> • Բացի գործող դրամաշնորհային ծրագրերի քանակի և ֆինանսական ծավալի աճից նաև հնարավորություն կստեղծվի կազմակերպել նոր տեղական և միջազգային գիտական ծրագրեր, մասնավորապես՝ վերաբնակեցման դրամաշնորհների/ծրագրերի իրականացում (Rehabilitation grants), մեկնարկային դրամաշնորհներ (starting grants), միջդիսցիպլինար դրամաշնորհներ, միջին տարիքի (35-55) գիտնականների խմբերի ստեղծման դրամաշնորհներ, փոքր ծավալի լաբորատոր սարքեր-նյութերի ձեռք բերման դրամաշնորհներ: • Միջպետական և միջազգային ծրագրերին հայկական կողմի մասնակցությունը, համանման պայմաններում աշխատող գիտաշխատողների համեմատ, էականոր ցածր է վարձատրվում: 	
209.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Մխիթար Հայրապետյան Հովհաննես Հովհաննիսյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ծախսային մասում՝ 1192 ծրագրային դասիչով նախատեսված «Կրթության որակի ապահովում» միջոցառումը ավելացնել 52.000.00 հազ. դրամով, սահմանելով նոր միջոցառումներ: Մասնավորապես՝	Առաջարկությանը հնարավոր է անդրադառնալ առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>Xxxxx միջոցառում՝ Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման աշխատանքների կենտրոնացված համակարգում՝ 22.000.00 հազ.</p> <p>Xxxxx միջոցառում՝ Ուսուցումների ազգային ռեեստրի ստեղծում, շահագործում՝ 30.000.00 Հիմնավորում.</p> <p>Առաջարկության նպատակն է ապահովել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2.1-րդ կետով և 26-րդ հոդվածով սահմանված դրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության 01.10.2015թ թիվ 1062-Ն որոշման ու դրա 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված ընթացակարգերը: Օրենսդրական լրացումը պայմանավորված է եղել ՀՀ-ԵՄ գործընկերության, միջազգային ու տեղական փորձագիտական ուսումնասիրությունների, փորձակումների արդյունքում: Բոլորնիայի գործընթացին ընդառաջ և միջազգային զարգացումների համատեքստում Հայաստանում ներդրվել է լրացուցիչ կրթության կազմակերպման և իրականացման կենտրոնացված համակարգման, նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչման, վկայագրման հարցը: Դրա շրջանակում նախատեսված է Ուսուցումներ ազգային ռեեստրի ստեղծումը, որի կարևորությունն ու առանցքային լինելը սահմանված է նաև ներկայախս ՀՀ կառավարության «Աշխատիր Հայաստան» ծրագրում:</p> <p>Ընթացիկ տարվա քննարկման ենթակա հարցերից էր պետական ապարատի և կրթության ոլորտի մասնագետների, մանկավարժների կրճատումների, նրանց որակական համապատասխանության,</p>	

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>վերապատրաստումների հարցը: Հարցերից շատերը մինչ օրս կարգավորված չեն, քանի որ դրանց կարգավորման նոր մեխանիզմները սահմանված չեն: Մինչդեռ ԵՄ հետ համագործակցության և գործընկերության արդյունքում մշակվել և որպես քաղաքական որոշում ներդրվել է միջազգային փորձին համապատասխանող համակարգը: Դրանով կարող ենք ունենալ մասնագետների կարիքների և կարողությունների գնահատում ու դրա հիման վրա դասընթացի կազմակերպում, փորձաքննված ծրագրեր ու դրանց մոնիտորինգ, մասնակիցների պաշտոնական վկայագրում:</p> <p>Հնարավորություն է ստեղծվում ճանաչելու մարդու կյանքում տարբեր եղանակներով ձեռք բերված գիտելիքները, կարողություններն ու որակները, այսինքն փաստացի կուտակված կրեդիտները: Հատկապես որ օրենսդրությամբ ունենք սահմանված բնագավառներ (կենցաղային սպասակման և ծառայությունների, որոնք մարդու կյանքի, առողջության և անվտանգության հետ են առնչվում), որտեղ պարտադիր է համարվում մասնագիտական կրթությունը կամ մասնագիտական ուսուցում (դասընթաց և փորձ) ունենալու պայմանը:</p>	
210.	<p>ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորներ Մխիթար Հայրապետյան Հովհաննես Հովհաննիսյան</p>	<p>Հստակեցնել ի՞նչ մեխանիզմ կամ բանաձև է կիրառվում մասնագիտական կրթության համակարգում նպաստի կամ կրթոշակի, դասախոսի աշխատավարձի չափը սահմանելու համար: Մեզ համար յուրաքանչյուր մասնագիտության կրթության միջին արժեքը պետական քաղաքականության տեսանկյունից չափելի պետք է լինի: Դրանով պայմանավորված հնարավոր կարող է լինել հաշվարկել, թե ծախսերի ո՞ր հատվածը և</p>	<p>Ներկայումս չկան սահմանված մեխանիզմներ, սակայն աշխատանքներ են տարվում ֆինանսավորման մեխանիզմներ սահմանելու ուղղությամբ:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեսքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>որքա՞ն մասը պետությունը կարող է փոխհատուցել նպաստի կամ կրթաթոշակի տեսքով: Հաշվարկված է արդյո՞ք, թե մեկ մասնագետ պատրաստելու համար ինչքա՞ն է ծախսում ուսումնական հաստատությունը, ինչքան է ծախսում ուսանողը:</p> <p>Պետական պատվերի հիմքում նաև դասախոսական ու վարչական անձնակազմի աշխատավարձի հարցն է: Խոսում ենք աշխատավարձ բարձրացնելու մասին, հասարակության ներկայացուցիչները արդարացիորեն դժգոհում են, որ, օրինակ՝ դպրոցների ուսուցիչների աշխատավարձը 10%-ով նախատեսվում է բարձրացնել, իսկ քոլեջում, ուսումնարանում կամ արտադպրոցական դաստիարակության հաստատությունում նույն ծրագիրն իրականացնող մանկավարժը այդ հնարավորությունից չի օգտվում: Հստակեցնել, ինչն է չափանիշը, աշխատավայրը, թե՞ ծրագիրն ու կատարած աշխատանքը: Հնարավոր է, որ այս բյուջեն բանաձևային հաշվարկման արդյունք չէ, սակայն սա հրատապ կարգավորման հարց է:</p>	
211.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	<p><<<< 2020 թվականի պետական բյուջեի մասին>> նախագծում առաջարկում ենք 1202 ծրագրի 11002 «Անհետաձգելի բժշկական ծառայություններ» միջոցառման համար նախատեսված 4, 829 225.520 ծախսի մեջ նախատեսել միջոցառում՝ առանձին տողով ներկայացնելով սոցիալապես անապահովներին մատուցված ծառայությունների դեպքերի թիվը և կատարված ծախսը:</p> <p>Առաջարկության համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասը պահանջում է օրենքով սահմանել</p>	<p>2013 թվականի հոկտեմբերի 18-ի Առողջապահության նախարարի թիվ 65-Ն հրամանով, սահմանված է մինչև 18 տարեկան և 18 տարեկանից բարձր տարիքի անձանց համար պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների ցանկերը: Այսինքն՝ «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնության ծառայությունները մատուցվում են ողջ բնակչությանը՝ հատուկ սահմանված</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը:	դեպքերում և անկախ սոցիալական կարգավիճակից:
212.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	<p><<<< 2020 թվականի պետական բյուջեի մասին>> նախագծում առաջարկում ենք 1202 ծրագրի 11002 «Անհետաձգելի բժշկական ծառայություններ» միջոցառման համար նախատեսված 4, 829 225.520 ծախսի մեջ նախատեսել միջոցառումներ՝ <<Սրտի անհետաձգելի վիրահատությունների>> և <<Սանավիագիայի>> մասին՝ իրենց առանձին ֆինանսական ու ոչ ֆինանսական միջոցառումներով:</p> <p>Առաջարկության համար հիմնավորումը տես վերևում:</p>	<p>Առաջարկն ընդունվել է և ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծում կատարվել են հետևյալ փոփոխությունները.</p> <p>«Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման մեջ կատարվել է փոփոխություն՝ առանձնացվել է «Սրտի անհետաձգելի վիրահատություններ» միջոցառումը, սահմանվել են համապատասխան ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ:</p> <p>Հաշվի առնելով, որ ուղղաթիռով պացիենտների տեղափոխման նպատակով իրականացվող «Սանավիագիա» ծառայությունը ներդրվել է 2019 թվականի ապրիլ ամիսից և մատուցված ծառայությունների վերաբերյալ դեռևս բավարար վիճակագրության առկա չէ, ներկա դրությամբ հնարավոր չէ կանխատեսել 2020 թվականի ընթացքում մատուցվելիք դեպքերի թիվը և համապատասխանաբար առանձին միջոցառում սահմանել: Սակայն, կրկին կարևորելով բարձրացված հարցը, «Շտապ բժշկական օգնություն» ծրագրի նույնանուն միջոցառման մեջ ավելացվել է «Ուղղաթիռով սանավիագիայի բժշկական օգնության ծառայություն» ոչ ֆինանսական՝ քանակական ցուցանիշը:</p>
213.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	<p><<<< 2020 թվականի պետական բյուջեի մասին>> նախագծում առաջարկում ենք 1202 ծրագրում որպես նոր միջոցառում <<Սուր իշեմիկ ինսուլտի բժշկական օգնություն>> ծրագիրը ներկայացնել առանձին տողով:</p> <p>Առաջարկության համար հիմնավորումը տես վերևում:</p>	<p>Առաջարկն ընդունվել է մասամբ, քանի ներկա դրությամբ գլխուղեղի սուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբեկտոմիայի բժշկական օգնության ծառայությունների գծով ևս բավարար վիճակագրություն դեռևս առկա չէ, հետևաբար ֆինանսական խելամիտ ցուցանիշներ հնարավոր չէ նաև ծրագրավորել (պլանավորել), ի տարաբերություն ոչ ֆինանսական ցուցանիշների, ինչը որպես առանձին քանակական ցուցանիշ նախատեսվել է «Անհետաձգելի բժշկական</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			օգնության ծառայություններ» միջոցառման ոչ ֆինանսական ցուցանիշների հատվածում:
214.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» նախագծում առաջարկում ենք 1202 ծրագրի 11004 «Ռեզուլտատների և արյունաքանակների հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման համար նախատեսված 3,420 մլն ծախսին ավելացնել համապատասխան գումար՝ Ռեֆերենս լաբորատորիա հիմնելու համար: Առաջարկության համար հիմք է հանդիսանում միջազգային փորձը և Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում 2019 թվականի հոկտեմբերի 28-ին կազմակերպված ոլորտային քննարկումները ՀՀ առաջատար մասնագետների, ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի հուլիսի 22-ի հրամանով ստեղծված՝ Չարորակ նորագոյացությունների բուժման արդյունավետության բարձրացման և կառավարման համակարգող խորհրդի անդամների հետ, ինչպես նաև այն հանգամանքը, որ ուռուցքաբանական և արյունաքանակների հիվանդությունների ախտորոշումներն ունենում են անճշտություններ: Առաջարկվող լաբորատորիան ունենալու դեպքում կանխատեսվում է վերը նշված ախտորոշումների անճշտությունների նվազում 30 %-ով:	Հարցը կքննարկվի առաջիկա տարիների բյուջետային գործընթացի շրջանակներում:
215.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Ելնելով ծրագրային բյուջետավորման գախափարախտությունից՝ ոլորտային նախարարությունները պատասխանատու են ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման համար և հետևաբար, պետք է առավել ազատ լինեն, ունենան ֆինանսական ազատության և	Առողջապահության նախարարությունն իր կանոնադրական նպատակների ու խնդիրների կենսագործման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնում է առողջապահական պետական նպատակային ծրագրեր, որոնց շրջանակներում իրականացվում է պետության կողմից

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>ճկունության հնարավորություններ՝ միջծրագրային շրջանակներում: Արդյունքում՝ բյուջեում հնարավորինս տեսանելի դարձնել առողջապահական ծառայությունների մատուցումը՝ ըստ շահառուների՝ ծրագրերի թափանցիկության ու ծախսարդյունավետությունը գնահատելու համար:</p>	<p>Երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունը և սպասարկումը: Այդ նպատակով, առողջապահական պետական նպատակային ծրագրերն արդյունավետ և պատշաճ իրականացնելու համար, անհրաժեշտ է ֆինանսական ազատություն, քանի որ սահմանափակ բյուջեի սկզբունքով իրականացվող ֆինանսավորման, ինչպես նաև միջծրագրային վերաբաշխումների իրականացման ժամանակատարության արդյունքում ծրագրերի պատշաճ կատարումը ռիսկի է ենթարկվում: Բացի այդ, վերաբաշխումների միջոցով պայմանագրային գումարի փոփոխությունները կարող են տևել 1-2 ամիս և չկա որևէ երաշխիք, որ այդ ընթացքում կատարված աշխատանքներն ամբողջությամբ կփոխհատուցվեն: Նշված սահմանափակումները հնարավորություն չեն տալիս իրականացնել ավելի ճկուն ֆինանսավորում և առանձին բժշկական կազմակերպություններ պայմանագրային գումարը սպառելուց հետո չեն ընդունում հիվանդների, հերթագրում են կամ տրամադրում են վճարովի բուժօգնություն:</p>
216.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահագն Թևոսյան</p>	<p>1042 ծրագրային դասիչով նախատեսված «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» միջոցառումը ավելացնել 102.000.00 հազ. դրամով, ընդհամենը՝ 32001 միջոցառում՝ «Հանրային հեռուստառադիոընկերության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում» - 103.400.00 հազ դրամ Հիմնավորում. Առաջարկի նպատակն է ապահովել հանրային հեռուստաընկերության օնլայն հեռուստաալիքը ամբողջությամբ շահագործելու տեխնիկական</p>	<p>Առաջարկությունը ընդունվել է, ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		Ծախսերը: Հաշվի առնելով հանրության շրջանում հեռուստահոլորդույունների ընդունման օնլայն տարբերակի նախընտրության ավելացող պահանջարկը, անհրաժեշտություն է դառնում նաև՝ զարգացումներին համաչափ գործուղությունների ապահովումը:	
217.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Ենգիբարյան	ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի միջնակարգ դպրոցի մարզադահլիճը ունի հրատապ վերանորոգման կարիք:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:
218.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Ենգիբարյան	Հիմք ընդունելով Արմավիրի մարզի մարզպետարանի պատասխան-գրությունը, խնդրի հրատապությունն ու բազմաթիվ քաղաքացիների խնդրանքները՝ վերանորոգել Զարիշատ/Արամ/Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ ՓԲ ընկերությանը պատկանող ինֆեկցիոն բաժանմունքի մասնաշենքը:	Աշխատանքների իրականացմանը հնարավոր կլինի անդրադառնալ հետագայում՝ մարզի համայնքային ծրագրերի առաջնահերթությունների սահմաններում և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
219.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Ենգիբարյան	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր, Արմավիր, Քարակերտ և Արագածոտնի մարզի Թալին համայնքներում չորս <<Թումո - արկղեր>> հիմնելու և դրանց գործունեությունը ապահովելու համար ներառել 82.044.000 մլն ՀՀ դրամ(172361 հազ ԱՄՆ դոլլար) : Ընդ որում, վերոնշյալ գումարի մեջ կապիտալ ծախսերը կազմելու են 53.4 մլն ՀՀ դրամ, իսկ շահագործման ծախսերը՝28.64 մլն ՀՀ դրամ, ինչը նշանակում է ,որ սկսած 2021թ.-ից <<Թումո - արկղեր>> -ի գործունեության ապահովման վրա կծախսվի ընդամենը տարեկան 28.64 մլն ՀՀ դրամ: <<Թումո - արկղեր>> ծրագիրը հետագայում կարող է դառնալ հրաշալի օրինակ այլ համայնքների համար:	Առաջարկությունը չի ընդունվել՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի պայմաններում, ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ սահմանված ծրագրերի և միջոցառումների առաջնահերթությունից ելնելով:

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p><<Թումո – արկղեր>> նախաձեռնությունը ծախսերի արդյունավետ լուծում է մարզային երիտասարդների համար Թումո կրթական ծրագիրը ավելի մատչելի դարձնելու համար՝ ներառելով հեռավոր և քիչ բնակեցված տարածքները:</p>	
220.	<p>ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Վարազդատ Կարապետյան</p>	<p>«Պետական աջակցություն Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացման համար» և «Պետական աջակցություն Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացման համար» (ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն) միջոցառումների գծով պետական բյուջեի նախագծով նախատեսվում է համապատասխանաբար 3.284 մլն դրամ և 2.229.9 մլն դրամ.</p> <p>Նշված ծրագրերը հակասում են տարածքների համաչափ զարգացման սկզբունքին, անհասկանալի է քաղաքական գերակայությունը, որով այս ծրագրերը պետք է ֆինանսավորվեն: Ե՛վ փողոցների լուսավորության, և՛ բարեկարգման ու փոսալցման աշխատանքները առաջնահերթ են Հայաստանի բոլոր համայնքների համար: Առավել ևս, եթե հաշվի առնենք, որ Երևանում բնակչության մեկ շնչին ընկնող տեղական բյուջեն մի քանի անգամ ավել է հանրապետության միջինից, ապա միանշանակ է այս գումարի նպատակայնության փոփոխության հարցը:</p> <p>Առաջարկում եմ այս երկու ծրագրերի համար նախատեսված գումարը բաշխել սուբվենցիոն ծրագրերի</p>	<p>Առաջարկը ազդեցության գնահատման առումով քննարկման անհրաժեշտություն ունի, նկատի ունենալով որ ներկա պահին բացակայում է ազդեցությունը ինչպես Երևան համայնքի բյուջեի վրա, այնպես էլ սուբվենցիոն ծրագրերի կարիքների գնահատման տեսանկյունից: Ուստի առաջարկությունը հնարավոր կլինի անդրադառնալ առաջիկա տարիների բյուջետային գործընթացի շրջանակներում՝ համապատասխան գնահատումների առկայության պարագայում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ընդհանուր ընթացակարգի համաձայն:	
221.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարազդատ Կարապետյան	<p>«ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ» (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն) ծրագրով նախատեսվում է 528 մլն դրամ՝ 2019 թվականի 1.072,141 մլն դրամի փոխարեն և «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի համար նախատեսվում է 200 մլն դրամ՝ նախորդ 286.4 մլն դրամի փոխարեն.</p> <p>Ակնհայտ է, որ այս ծրագրերով պետք է իրականացվի տնտեսության զարգացման գործառույթ, որը այլ ծրագրերով չի փոխարինվում: Առաջարկում եմ, որ նշված ծրագրերի մասով նախորդ տարվա համեմատ ֆինանսական նվազեցումներ չլինեն, իսկ ծրագրերը լրամշակվեն բովանդակային առումով՝ գործարար և հանրային հատվածների հետ երկխոսության միջոցով, ներառելով գործարարության աջակցության լայն շերտեր ու միջոցառումներ: Այն, որ նախորդ տարիներին այս ծրագրերը լիակատար չեն գործել, դեռ չի նշանակում, որ այս գործառույթը կրճատելու կարիք կա:</p>	<p>«Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի համար 2019 թվականի նախատեսվում է 286.4 մլն դրամ, որից 86.4 մլն դրամը հանդիսանում է ծրագիրն իրականացնող հիմնադրամի պահպանման ծախսերը: Իսկ «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ» ծրագրի գծով հատկացված 1.072,141 մլն դրամից 544.1 մլն դրամը հանդիսանում է ծրագիրն իրականացնող «Բիզնես Արմենիա» հիմնադրամի պահպանման ծախսերը:</p> <p>Երևանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ Ջբոսաշրջության զարգացման հիմնադրամը գտնվում է լուծարման գործընթացում, իսկ «Բիզնես Արմենիա» հիմնադրամում պետական մասնակցությունը 2019 թվականի մայիս ամսից դադարել է: Քանի որ նշված ծրագրերը իրականացվում էին վերոնշյալ հիմնադրամների միջոցով, ուստի 2020 թվականի ծրագրերի համար նախատեսված հատկացումները պլանավորելիս հաշվի չեն առնվել հիմնադրամների պահպանման ծախսերը: Ծրագրերի իրականացումը կատարվելու է մրցույթային եղանակով ընտրված կազմակերպությունների միջոցով: Սակայն նշենք, որ ծրագրերը բովանդակային առումով չեն նվազել և դրանց իրականացումը կատարվում է գործարար և հանրային հատվածի հետ սերտ համագործակցությամբ:</p>
222.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարազդատ Կարապետյան	«Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի բյուջետային	Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի՝ հանրապետության տարածական զարգացման հիմնախնդիրն է ու դրանց լուծմանը նպատակաուղղված միջոցառումներն ամրագրվում են տարածական զարգացման հենքը հանդիսացող

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		<p>հատկացումներ) նախատեսվում է 495 մլն ՀՀ դրամ.</p> <p>Առաջարկում են նշված ծրագիրը վերաձևակերպել համայնքներին գլխավոր հատակագծերի կամ Հայաստանում համայնքների զարգացման հեռանկարային մաստեր պլանների մշակման նպատակով՝ համաֆինանսավորման կամ այլ ձևով: Ծրագրում նշված փաստաթղթի նպատակային նշանակությունը անհասկանալի է, այն պետք է փոխարինել օրենքով սահմանված այլ փաստաթղթերով, որոնք էապես անհրաժեշտ են համայնքների քաղաքաշինական զարգացման համար:</p>	<p>ազգային, տարածքային և տեղական մակարդակների հիերարխիկ կառուցվածք ունեցող պլանավորման փաստաթղթերով: Ինչպես եվրոպական երկրների գերակշիռ մասում, մեզանում ևս, դրանք սերտորեն շաղկապված են երկրվարչատարածքային կառուցվածքի հետ՝ արտացոլելով համապատասխան միավորին բնորոշ խնդիրների շրջանակը: ՀՀ կառավարության որդեգրած՝ համաչափ տարածքային զարգացման քաղաքականության ապահովումը պայմանավորված է տարածքային զարգացման նպատակային ծրագրերի մշակման և արդյունավետ իրականացմամբ, մասնավորապես միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակմամբ: Կարևորելով համայնքներում տարածական պլանավորման փաստաթղթերի առկայության անհրաժեշտությունը և հաշվի առնելով համայնքային բյուջեների սուղ պայմանները, որոնք հնարավորություն չեն տալիս գլխավոր հատակագծեր պատվիրելու, ինչպես նաև տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և հաստատման ընթացակարգի օպտիմալացման նպատակով սահմանվել է տարածական պլանավորման ռեգիոնալ (միկրոռեգիոնալ) և տեղական մակարդակները համադրող՝ մեկից ավելի համայնքներ ընդգրկող տարածքային հատակագծման նախագծերը և համայնքների գլխավոր հատակագծերն ու գոտիավորման նախագծերը միավորող պլանավորման փաստաթղթեր (համակցված տարածական պլանավորման փաստաթղթեր): Այս ծրագիրը համահունչ է նաև ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների խոշորացման գործընթացին, խմբավորելով գյուղական մի շարք համայնքներ զգալիորեն կրճատվում են փաստաթղթերի մշակման ժամկետները և անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Համայնքների քաղաքաշինական զարգացումն ապահովող</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
			<p>քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը սահմանված են «Քաղաքաշինության մասին» օրենքի 17-րդ հոդվածով, դրանք են ՀՀ մարզերի, ինչպես նաև մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող (միկրոռեգիոնալ մակարդակ) տարածքային հատակագծման նախագծերը, համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերը, քաղաքաշինական գոտիավորման նախագծերը և այլն:</p> <p>«Համայնքների զարգացման հեռանկարային մաստեր պլանները եզրույթը քաղաքաշինության ոլորտը կանոնակարգող իրավակալտերում սահմանված չէ, սակայն ըստ էության նույն գլխավոր հատակագիծն է, որով սահմանվում են բնակավայրերի հեռանկարային զարգացման ուղղությունները:</p> <p>Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման համար, ի թիվս մի շարք այլ փաստաթղթերի, ելակետային նյութեր են հանդիսանում նաև համայնքների զարգացման ռազմավարական ծրագրերը:</p>
223.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Նարեկ Զեյնալյան Արփինե Դավոյան</p>	<p>«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» նախագծում առաջարկում ենք վերականգնել 1150 «Հիվանդանոցային բուժօգնության ծրագիրը» և այդ ծրագրի առանձին միջոցառում առանձին տողով ներկայացնել սոցիալապես անապահովների մատուցված ծառայությունների դեպքերի թիվը և կատարված ծախսը:</p> <p>Առաջարկության համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասը պահանջում է օրենքով սահմանել անվճար հիմնական բժշկական ծառայությունների</p>	<p>«2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) հիվանդանոցային ծառայություններն արդեն իսկ ներկայացված են գործառնական դասակարգման մեջ և ներառում են ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունները, մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունները, մոր և մանկան բժշկական օգնության ծառայությունները: Նախագիծը, ինչպես և «2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը՝ մշակված է ծրագրային ձևաչափով, համաձայն որի՝ ծրագիրը միևնույն վերջնական արդյունքի հասնելուն ուղղված քաղաքականության իրագործման միջոցառումների տրամաբանական խմբավորումն է: Այս տրամաբանության մեջ՝ Նախագծի տնտեսագիտական</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	ՀՀ կառավարության դիրքորոշումը
		ցանկը:	<p>դասակարգման մեջ հիվանդանոցային ծառայությունները ներկայացված են առանձին բյուջետային ծրագրերի տեսքով, ինչի արդյունքում ապահովվում է հանրությանը մատուցված բժշկական օգնության ծառայությունների առավել հասկանալի, թափանցիկ, հաշվետվողական և տրամաբանական ներկայացումը: Ինչ վերաբերում է սոցիալապես անապահովներին մատուցված դեպքերի թվին և ծախսին, ապա Նախագծում առկա է 1207 ծրագրի 11001 «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը՝ 19,2 մլրդ դրամ ֆինանսական միջոցներով և իր համապատասխան ոչ ֆինանսական ցուցանիշով:</p>
224.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Նարեկ Զեյնալյան Արփինե Դավոյան	<p><<<< 2020 թվականի պետական բյուջեի մասին>> նախագծում առաջարկում ենք «Շտապ բժշկական օգնության իրականացում» 1201 ծրագրում 11001 միջոցառման համար նախատեսված 4, 2 մլրդ ծախսի մեջ նախատեսել շտապ օգնության բժշկական անձնակազմի աշխատավարձերի ավելացում:</p>	<p>Բարձրացված հարցը օրակարգային է և աշխատանքներն այդ ուղղությամբ ընթացքում են: Այս պահի դրությամբ հստակ է, որ 2020-ի հունվարի 1-ից Երևան քաղաքի շտապ բժշկական օգնության ծառայության շուրջ 950 աշխատակցի աշխատավարձերը կբարձրանան 10 տոկոսով:</p>
225.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյան	<p>Վրաստանի հայալեզու լրատվամիջոցների համար նախատեսված 10 միլիոն ՀՀ դրամը կրկնապատկել: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ Վրաստանում թուրքական և ադրբեջանական գումարներով ֆինանսավորվող բազմաթիվ լրատվամիջոցներ զանգվածային հակահայկական քարոզչություն են իրականացնում, որին դիմակայելու ամենաարդյունավետ ճանապարհը հայալեզու</p>	<p>Առաջարկությանը հնարավոր է անդրադառնալ առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում:</p>

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության տեքստը կամ բովանդակությունը	<< կառավարության դիրքորոշումը
		լրատվամիջոցների ֆինանսավորման ավելացումն է:	